Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

3364

2167

# ՑՈՒՑԱԿ

ՎԱՍՆ ԱՄԻ ՏԵԱՌՆ

**1829**

Տպագրեալ 'ի գործարանի [illegible] Ճեմարանի.

4886

# ՑՈՒՑԱԿ

## ՎԱՍՆ ԱՄԻ ՏԵԱՌՆ

## 1829

Ի Հայրապետութեան Տն̃ Տն̃ ԵՓՐԵՄԱՅ ամենայն Հայոց կաթողիկոսի ։

3364

Տպագրեալ՝ ի գործատան Մարդասիրական Ճեմարանի ։

Ի ԿԱԼԿԱԹԱ·

Տարեկան բանալիք վասն ամի տեառն 1829 ։

Յայսմ ամի ըստ Հնոյ Տօմարին ։
Գիր տարւոյն է ... ... ... ... ... 17 ։
Վերադիրն ... ... ... ... ... ... 5 ։
Եօթներեակն Հռոմայեցւոց կամ Կիւրակագիրն · 2 ։
Տանուտէրն ... ... ... ... Խոյն ։
Յայսմ ամի Զատիկն Լատինացւոց մի շաբաթու յառաջ ե-
ղիցի քան զմերն · այսինքն լատինացւոյն Շամն 18 ումն
եղիցի · իսկ մերն Շամն 25 ումն · ի՛ յապրիլի 26 ։

Թուականք ։

Թուականն փոքր ըստ Ազարիայի է ... ... 213 ։
Իսկ տարեմուտ 214 եղիցի ՚ի յԱպրիլի 2 կամ Շամն 1 ։
Թուականն բանկալւոյ է ... ... ... ... 1235 ։
Իսկ տարեմուտ 1236 եղիցի յԱպրիլի ... ... 13 ։
Թուականն Տաճկաց կամ Մահմետականաց է ... 1244 ։
Իսկ տարեմուտ 1245 եղիցի յՕգոստոսի ... ... 23 ։

Սոքա ցուցանեն ժամանակ ծննդեան և լրման Լուսնի յամի 1829։

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Արեամ | 9 | երեկոյեան | 9 | ժամ | 46 | րոպէին | ծնունդնէ |
| Արեամ | 24 | առաւօտեան | 6 | ժամ | 11 | րոպէին | լրումնէ |
| Ովդան | 9 | առաւօտեան | 8 | ժամ | 25 | րոպէին | ծնունդնէ |
| Ովդան | 24 | առաւօտեան | I | ժամ | 9 | րոպէին | լրումնէ |
| Նիրհան | 9 | երեկոյեան | 6 | ժամ | 30 | րոպէին | ծնունդնէ |
| Նիրհան | 24 | երեկոյեան | 7 | ժամ | 45 | րոպէին | լրումնէ |
| Շամն | 3 | առաւօտեան | 4 | ժամ | 15 | րոպէին | ծնունդնէ |
| Շամն | 18 | երեկոյեան | 0 | ժամ | 16 | րոպէին | լրումնէ |
| Ադամ | 2 | երեկոյեան | I | ժամ | 51 | րոպէին | ծնունդնէ |
| Ադամ | 15 | առաւօտեան | I | ժամ | 42 | րոպէին | լրումնէ |
| Շբաթ | I | երեկոյեան | II | ժամ | 43 | րոպէին | ծնունդնէ |
| Շբաթ | 17 | առաւօտեան | 0 | ժամ | 9 | րոպէին | լրումնէ |
| Նախայ | I | առաւօտեան | 10 | ժամ | 39 | րոպէին | ծնունդնէ |
| Նախայ | 16 | երեկոյեան | 8 | ժամ | 36 | րոպէին | լրումնէ |
| Ղամար | 6 | առաւօտեան | 4 | ժամ | 7 | րոպէին | ծնունդնէ |
| Ղամար | 16 | առաւօտեան | 4 | ժամ | 20 | րոպէին | լրումնէ |
| Նադար | 30 | առաւօտեան | 7 | ժամ | 57 | րոպէին | ծնունդնէ |
| Նադար | 15 | երեկոյեան | 0 | ժամ | 23 | րոպէին | լրումնէ |
| Թիրայ | 30 | առաւօտեան | I | ժամ | 31 | րոպէին | ծնունդնէ |
| Թիրայ | 14 | երեկոյեան | 9 | ժամ | 23 | րոպէին | լրումնէ |
| Դամայ | 29 | երեկոյեան | 6 | ժամ | 26 | րոպէին | ծնունդնէ |
| Դամայ | 14 | առաւօտեան | 7 | ժամ | 40 | րոպէին | լրումնէ |
| Համիրայ | 29 | առաւօտեան | 9 | ժամ | 30 | րոպէին | ծնունդնէ |
| Համիրայ | 13 | երեկոյեան | 7 | ժամ | 32 | րոպէին | լրումնէ |

## Խաւարմունք Արեգական եւ Լուսնի ։

Չորիս խաւարումն պատահեսցի յայսմ տարւոջ. երկիս Արեգական եւ երկիս լուսնի ։

Մարտ 20 Լուսինն խաւարեսցի եւ երեւեսցի ՝ի Կալկաթա ։ Սկիզբն խաւարման եղիցի յերեկոյեան 6 երորդ ժամուն, 42 րոպէին եւ 58 մանրերկրորդին. եւ վերջասցի յինն երորդ ժամուն 5 րոպէին եւ 28 մանրերկրորդին երկոյեան ։

Ապրիլ 4 Արեգակն խաւարեսցի եւ ո՛չ երեւեսցի ՝ի Կալկաթա ։ Սկիզբն խաւարման եղիցի յառաւօտեան 4 ժամուն, 15 րոպէին եւ 13 մանրերկրորդին ։

Սեպտ. 13 Լուսինն խաւարեսցի եւ ո՛չ երեւեսցի ՝ի Կալկաթա ։

Սեպտ. 28 Արեգակն խաւարեսցի եւ ո՛չ երեւեսցի ՝ի Կալկաթա ։ Սկիզբն խաւարման եղիցի յառաւօտեան 7 երորդ ժամուն, 56 րոպէին եւ 43 մանրերկրորդին ։

Ամիսք Ազգաց Լատինացւոց, Բանկալացւոց, Տաճկաց և Լուսնի. Աւուրք շաբաթու, և Ձայնք օրհնութեան:

| Յանուարի 1829 | Ահամ 213 / Ովզան | Փեյրուս 1235 / Սաւր | Ջեմազիէլ էվվէլ 1244 և Լուսին / Ջեմազիէլ սանի | Աւուրք շաբաթու | Ձայնք |
|---|---|---|---|---|---|
| 1 | 5 | 19 | 26 | 5 շաբաթ | բկ |
| 2 | 6 | 20 | 27 | Ուրբաթ | գձ |
| 3 | 7 | 21 | 28 | Շաբաթ | գկ |
| 4 | 8 | 22 | 29 | Կիւրակէ | դձ |
| 5 | 9 | 23 | 1 | 2 շաբաթ | դկ |
| 6 | 10 | 24 | 2 | 3 շաբաթ | աձ |
| 7 | 11 | 25 | 3 | 4 շաբաթ | ակ |
| 8 | 12 | 26 | 4 | 5 շաբաթ | բձ |
| 9 | 13 | 27 | 5 | Ուրբաթ | բկ |
| 10 | 14 | 28 | 6 | Շաբաթ | գձ |
| 11 | 15 | 29 | 7 | Կիւրակէ | գկ |
| 12 | 16 | 1 | 8 | 2 շաբաթ | դձ |
| 13 | 17 | 2 | 9 | 3 շաբաթ | դկ |
| 14 | 18 | 3 | 10 | 4 շաբաթ | աձ |
| 15 | 19 | 4 | 11 | 5 շաբաթ | ակ |
| 16 | 20 | 5 | 21 | Ուրբաթ | բձ |
| 17 | 21 | 6 | 13 | Շաբաթ | բկ |
| 18 | 22 | 7 | 14 | Կիւրակէ | գձ |
| 19 | 23 | 8 | 15 | 2 շաբաթ | գկ |
| 20 | 24 | 9 | 16 | 3 շաբաթ | դձ |
| 21 | 25 | 10 | 17 | 4 շաբաթ | դկ |
| 22 | 26 | 11 | 18 | 5 շաբաթ | աձ |
| 23 | 27 | 12 | 19 | Ուրբաթ | ակ |
| 24 | 28 | 13 | 20 | Շաբաթ | բձ |
| 25 | 29 | 14 | 21 | Կիւրակէ | բկ |
| 26 | 30 | 15 | 22 | 2 շաբաթ | գձ |
| 27 | 1 | 16 | 23 | 3 շաբաթ | գկ |
| 28 | 2 | 17 | 24 | 4 շաբաթ | դձ |
| 29 | 3 | 18 | 25 | 5 շաբաթ | դկ |
| 30 | 4 | 19 | 26 | Ուրբաթ | աձ |
| 31 | 5 | 20 | 27 | Շաբաթ | ակ |

Ամիսք՝ Աշխարհիկք Հռովմայեցւոց. Թուականութեանց Տօմարաց եւ Լուսնի . Շաբաթք շաբաթուց եւ Ձայնք օրհնութեան .

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Փետրուարի | 1 | Մեհեկ ամսոյ | 6 | Մեխիր ամսոյ | 21 | Ջէմազիէլ Ախըր ամսոյն և Լուսին | 28 | Կիւրակէ | բձ |
| | 2 | | 7 | | 22 | | 29 | 2 շաբաթ | բկ |
| | 3 | | 8 | | 23 | | 30 | 3 շաբաթ | գձ |
| | 4 | | 9 | | 24 | | 1 | 4 շաբաթ | գկ |
| | 5 | | 10 | | 25 | | 2 | 5 շաբաթ | դձ |
| | 6 | | 11 | | 26 | | 3 | Ուրբաթ | դկ |
| | 7 | | 12 | | 27 | | 4 | Շաբաթ | աձ |
| | 8 | | 13 | | 28 | | 5 | Կիւրակէ | ակ |
| | 9 | | 14 | | 29 | | 6 | 2 շաբաթ | բձ |
| | 10 | | 15 | | 30 | | 7 | 3 շաբաթ | բկ |
| | 11 | | 16 | Փամենովթ ամսոյ | 1 | | 8 | 4 շաբաթ | գձ |
| | 12 | | 17 | | 2 | | 9 | 5 շաբաթ | գկ |
| | 13 | | 18 | | 3 | | 10 | Ուրբաթ | դձ |
| | 14 | | 19 | | 4 | | 11 | Շաբաթ | դկ |
| | 15 | | 20 | | 5 | Ռէջէպ | 12 | Կիւրակէ | աձ |
| | 16 | | 21 | | 6 | | 13 | 2 շաբաթ | ակ |
| | 17 | | 22 | | 7 | | 14 | 3 շաբաթ | բձ |
| | 18 | | 23 | | 8 | | 15 | 4 շաբաթ | բկ |
| | 19 | | 24 | | 9 | | 16 | 5 շաբաթ | գձ |
| | 20 | | 25 | | 10 | | 17 | Ուրբաթ | գկ |
| | 21 | | 26 | | 11 | | 18 | Շաբաթ | դձ |
| | 22 | | 27 | | 12 | | 19 | Կիւրակէ | դկ |
| | 23 | | 28 | | 13 | | 20 | 2 շաբաթ | աձ |
| | 24 | | 29 | | 14 | | 21 | 3 շաբաթ | ակ |
| | 25 | | 30 | | 15 | | 22 | 4 շաբաթ | բձ |
| | 26 | Արեգ ամսոյ | 1 | | 16 | | 23 | 5 շաբաթ | բկ |
| | 27 | | 2 | | 17 | | 24 | Ուրբաթ | գձ |
| | 28 | | 3 | | 18 | | 25 | Շաբաթ | գկ |

Ամիսք Եւրոպեայց, Հրէաստանեայց, Եգիպտացւոց, Տաճկաց և Լուսնոյ. Աւուրք շաբաթու, և Ձայնք օրհնութեան:

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մայիս | 1 | Նիսան | 4 | Փարմութի | 19 | Ռեճէպ և Լուսին | 26 | Կիւրակէ | գձ |
| | 2 | | 5 | | 20 | | 27 | 2 շաբաթ | դկ |
| | 3 | | 6 | | 21 | | 28 | 3 շաբաթ | աձ |
| | 4 | | 7 | | 22 | | 29 | 4 շաբաթ | ակ |
| | 5 | | 8 | | 23 | | 1 | 5 շաբաթ | բձ |
| | 6 | | 9 | | 24 | | 2 | Ուրբաթ | բկ |
| | 7 | | 10 | | 25 | | 3 | Շաբաթ | գձ |
| | 8 | | 11 | | 26 | | 4 | Կիւրակէ | դէ |
| | 9 | | 12 | | 27 | | 5 | 2 շաբաթ | աձ |
| | 10 | | 13 | | 28 | | 6 | 3 շաբաթ | ակ |
| | 11 | | 14 | | 29 | | 7 | 4 շաբաթ | բձ |
| | 12 | | 15 | | 30 | | 8 | 5 շաբաթ | բկ |
| | 13 | | 16 | Բաշօնս | 1 | Շաբան | 9 | Ուրբաթ | գձ |
| | 14 | | 17 | | 2 | | 10 | Շաբաթ | գկ |
| | 15 | | 18 | | 3 | | 11 | Կիւրակէ | դձ |
| | 16 | | 19 | | 4 | | 12 | 2 շաբաթ | դկ |
| | 17 | | 20 | | 5 | | 13 | 3 շաբաթ | աձ |
| | 18 | | 21 | | 6 | | 14 | 4 շաբաթ | ակ |
| | 19 | | 22 | | 7 | | 15 | 5 շաբաթ | բձ |
| | 20 | | 23 | | 8 | | 16 | Ուրբաթ | բկ |
| | 21 | | 24 | | 9 | | 17 | Շաբաթ | գձ |
| | 22 | | 25 | | 10 | | 18 | Կիւրակէ | գկ |
| | 23 | | 26 | | 11 | | 19 | 2 շաբաթ | դձ |
| | 24 | | 27 | | 12 | | 20 | 3 շաբաթ | դկ |
| | 25 | | 28 | | 13 | | 21 | 4 շաբաթ | աձ |
| | 26 | | 29 | | 14 | | 22 | 5 շաբաթ | ակ |
| | 27 | | 30 | | 15 | | 23 | Ուրբաթ | բձ |
| | 28 | Այար | 1 | | 16 | | 24 | Շաբաթ | բկ |
| | 29 | | 2 | | 17 | | 25 | Կիւրակէ | գձ |
| | 30 | | 3 | | 18 | | 26 | 2 շաբաթ | գկ |
| | 31 | | 4 | | 19 | | 27 | 3 շաբաթ | դձ |

Ամիսք Արեգականք Լատինացւոց, Բիւզանդացւոց, Հայոց եւ Լուսնի. Մասամբ շաբաթու եւ Ձայնիւ օրհնութեան

| Յունիս | | Ս. / Տրէ | | Քաղոց | | Թամուզ / Լուսնի | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 | | 5 | | 20 | | 28 | 4 շաբաթ | գկ |
| | 2 | | 1 | | 21 | | 29 | 5 շաբաթ | աձ |
| | 3 | | 2 | | 22 | | 30 | Ուրբաթ | ակ |
| | 4 | | 3 | | 23 | | 1 | Շաբաթ | բձ |
| | 5 | | 4 | | 24 | | 2 | Կիւրակէ | բկ |
| | 6 | | 5 | | 25 | | 3 | 2 շաբաթ | գձ |
| | 7 | | 6 | | 26 | | 4 | 3 շաբաթ | գկ |
| | 8 | | 7 | | 27 | | 5 | 4 շաբաթ | դձ |
| | 9 | | 8 | | 28 | | 6 | 5 շաբաթ | դկ |
| | 10 | | 9 | | 29 | | 7 | Ուրբաթ | աձ |
| | 11 | | 10 | | 30 | | 8 | Շաբաթ | ակ |
| | 12 | | 11 | | 1 | | 9 | Կիւրակէ | բձ |
| | 13 | | 12 | | 2 | | 10 | 2 շաբաթ | բկ |
| | 14 | | 13 | | 3 | | 11 | 3 շաբաթ | գձ |
| | 15 | | 14 | | 4 | | 12 | 4 շաբաթ | գկ |
| | 16 | | 15 | | 5 | | 13 | 5 շաբաթ | դձ |
| | 17 | | 16 | | 6 | | 14 | Ուրբաթ | դկ |
| | 18 | | 17 | | 7 | | 15 | Շաբաթ | աձ |
| | 19 | | 18 | | 8 | | 16 | Կիւրակէ | ակ |
| | 20 | | 19 | | 9 | | 17 | 2 շաբաթ | բձ |
| | 21 | | 20 | | 10 | | 18 | 3 շաբաթ | բկ |
| | 22 | | 21 | | 11 | | 19 | 4 շաբաթ | գձ |
| | 23 | | 22 | | 12 | | 20 | 5 շաբաթ | գկ |
| | 24 | | 23 | | 13 | | 21 | Ուրբաթ | դձ |
| | 25 | | 24 | | 14 | | 22 | Շաբաթ | դկ |
| | 26 | | 25 | | 15 | | 23 | Կիւրակէ | աձ |
| | 27 | | 26 | | 16 | | 24 | 2 շաբաթ | ակ |
| | 28 | | 27 | | 17 | | 25 | 3 շաբաթ | բձ |
| | 29 | | 28 | | 18 | | 26 | 4 շաբաթ | բկ |
| | 30 | | 29 | | 19 | | 27 | 5 շաբաթ | գձ |

Ամիսք Աշխարհիս, Լատինացւոց, Բոնկացւոց, Տաճկաց և Լուսնի. Աւուրք շաբաթու, և Ձայնք օրհնութեան:

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մեհեկի | 1 | Ր. Ապրիլ | 30 | Բօհաւար 1236 | 20 | Ռամազան և Լուսին | 28 | Ուրբաթ | գկ |
| | 2 | | 1 | | 21 | | 29 | Շաբաթ | դձ |
| | 3 | | 2 | | 22 | | 1 | Կիւրակէ | դկ |
| | 4 | | 3 | | 23 | | 2 | 2 շաբաթ | աձ |
| | 5 | | 4 | | 24 | | 3 | 3 շաբաթ | ակ |
| | 6 | | 5 | | 25 | | 4 | 4 շաբաթ | բձ |
| | 7 | | 6 | | 26 | | 5 | 5 շաբաթ | բկ |
| | 8 | | 7 | | 27 | | 6 | Ուրբաթ | գձ |
| | 9 | | 8 | | 28 | | 7 | Շաբաթ | գկ |
| | 10 | | 9 | | 29 | | 8 | Կիւրակէ | դձ |
| | 11 | | 10 | | 30 | | 9 | 2 շաբաթ | դկ |
| | 12 | | 11 | | 31 | | 10 | 3 շաբաթ | աձ |
| | 13 | | 12 | Ջօհատ | 1 | | 11 | 4 շաբաթ | ակ |
| | 14 | | 13 | | 2 | | 21 | 5 շաբաթ | բձ |
| | 15 | | 14 | | 3 | Շէվվալ | 13 | Ուրբաթ | բկ |
| | 16 | | 15 | | 4 | | 14 | Շաբաթ | գձ |
| | 17 | | 16 | | 5 | | 15 | Կիւրակէ | գկ |
| | 18 | | 17 | | 6 | | 16 | 2 շաբաթ | դձ |
| | 19 | | 18 | | 7 | | 17 | 3 շաբաթ | դկ |
| | 20 | | 19 | | 8 | | 18 | 4 շաբաթ | աձ |
| | 21 | | 20 | | 9 | | 19 | 5 շաբաթ | ակ |
| | 22 | | 21 | | 10 | | 20 | Ուրբաթ | բձ |
| | 23 | | 22 | | 11 | | 21 | Շաբաթ | բկ |
| | 24 | | 23 | | 12 | | 22 | Կիւրակէ | գձ |
| | 25 | | 24 | | 13 | | 23 | 2 շաբաթ | գկ |
| | 26 | | 25 | | 14 | | 24 | 3 շաբաթ | դձ |
| | 27 | | 26 | | 15 | | 25 | 4 շաբաթ | դկ |
| | 28 | | 27 | | 16 | | 26 | 5 շաբաթ | աձ |
| | 29 | | 28 | | 17 | | 27 | Ուրբաթ | ակ |
| | 30 | | 29 | | 18 | | 28 | Շաբաթ | բձ |
| | 31 | | 30 | | 19 | | 29 | Կիւրակէ | բկ |

Ամիս Աշտրխանայ, Լատինացւոց, Բռնակալցւոց, Տաճկաց եւ Լուսնի ․ Առաւօտ շաբաթու եւ Զայծ օրինակն ։

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [illegible] | 1 | [illegible] | 1 | [illegible] | 20 | [illegible] եւ Լուսին | 1 | 2 շաբաթ | գձ |
| | 2 | | 2 | | 21 | | 2 | 3 շաբաթ | գկ |
| | 3 | | 3 | | 22 | | 3 | 4 շաբաթ | դձ |
| | 4 | | 4 | | 23 | | 4 | 5 շաբաթ | դկ |
| | 5 | | 5 | | 24 | | 5 | Ուրբաթ | աձ |
| | 6 | | 6 | | 25 | | 6 | Շաբաթ | ակ |
| | 7 | | 7 | | 26 | | 7 | Կիւրակէ | բձ |
| | 8 | | 8 | | 27 | | 8 | 2 շաբաթ | բկ |
| | 9 | | 9 | | 28 | | 9 | 3 շաբաթ | գձ |
| | 10 | | 10 | | 29 | | 10 | 4 շաբաթ | գկ |
| | 11 | | 11 | | 30 | | 11 | 5 շաբաթ | դձ |
| | 12 | | 12 | Ապր | 31 | | 12 | Ուրբաթ | դկ |
| | 13 | | 13 | | 1 | | 13 | Շաբաթ | աձ |
| | 14 | | 14 | | 2 | | 14 | Կիւրակէ | ակ |
| | 15 | | 15 | | 3 | | 15 | 2 շաբաթ | բձ |
| | 16 | | 16 | | 4 | | 16 | 3 շաբաթ | բկ |
| | 17 | | 17 | | 5 | | 17 | 4 շաբաթ | գձ |
| | 18 | | 18 | | 6 | | 18 | 5 շաբաթ | գկ |
| | 19 | | 19 | | 7 | | 19 | Ուրբաթ | դձ |
| | 20 | | 20 | | 8 | | 20 | Շաբաթ | դկ |
| | 21 | | 21 | | 9 | | 21 | Կիւրակէ | աձ |
| | 22 | | 22 | | 10 | | 22 | 2 շաբաթ | ակ |
| | 23 | | 23 | | 11 | | 23 | 3 շաբաթ | բձ |
| | 24 | | 24 | | 12 | | 24 | 4 շաբաթ | բկ |
| | 25 | | 25 | | 13 | | 25 | 5 շաբաթ | գձ |
| | 26 | | 26 | | 14 | | 26 | Ուրբաթ | գկ |
| | 27 | | 27 | | 15 | | 27 | Շաբաթ | դձ |
| | 28 | | 28 | | 16 | | 28 | Կիւրակէ | դկ |
| | 29 | | 29 | | 17 | | 29 | 2 շաբաթ | աձ |
| | 30 | | 30 | | 18 | | 30 | 3 շաբաթ | ակ |

Ամիսք՝ Աշխարհային Լատինացւոց Յունգարացւոց Տաճկաց և Լատինէ · Աստուր շրջանին, և Ձայնք օրհնութեան :

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Յունուար | 1 | Յունուար | 1 | Տոսր | 19 | Զիլհիճէ և Լուսին | 1 | 4 շաբաթ | բձ |
| | 2 | | 2 | | 20 | | 2 | 5 շաբաթ | բկ |
| | 3 | | 3 | | 21 | | 3 | Ուրբաթ | գձ |
| | 4 | | 4 | | 22 | | 4 | Շաբաթ | գկ |
| | 5 | | 5 | | 23 | | 5 | Կիւրակէ, | դձ |
| | 6 | | 6 | | 24 | | 6 | 2 շաբաթ | դկ |
| | 7 | | 7 | | 25 | | 7 | 3 շաբաթ | աձ |
| | 8 | | 8 | | 26 | | 8 | 4 շաբաթ | ակ |
| | 9 | | 9 | | 27 | | 9 | 5 շաբաթ | բձ |
| | 10 | | 10 | | 28 | | 10 | Ուրբաթ | բկ |
| | 11 | | 11 | | 29 | | 11 | Շաբաթ | գձ |
| | 12 | | 12 | | 30 | | 12 | Կիւրակէ | գկ |
| | 13 | | 13 | | 31 | | 13 | 2 շաբաթ | դձ |
| | 14 | | 14 | | 32 | | 14 | 3 շաբաթ | դկ |
| | 15 | | 15 | | 1 | | 15 | 4 շաբաթ | աձ |
| | 16 | | 16 | Արաքսի | 2 | | 16 | 5 շաբաթ | ակ |
| | 17 | | 17 | | 3 | | 17 | Ուրբաթ | բձ |
| | 18 | | 18 | | 4 | | 18 | Շաբաթ | բկ |
| | 19 | | 19 | | 5 | | 19 | Կիւրակէ | գձ |
| | 20 | | 20 | | 6 | | 20 | 2 շաբաթ | գկ |
| | 21 | | 21 | | 7 | | 21 | 3 շաբաթ | դձ |
| | 22 | | 22 | | 8 | | 22 | 4 շաբաթ | դկ |
| | 23 | | 23 | | 9 | | 23 | 5 շաբաթ | աձ |
| | 24 | | 24 | | 10 | | 24 | Ուրբաթ | ակ |
| | 25 | | 25 | | 11 | | 25 | Շաբաթ | բձ |
| | 26 | | 26 | | 12 | | 26 | Կիւրակէ | բկ |
| | 27 | | 27 | | 13 | | 27 | 2 շաբաթ | գձ |
| | 28 | | 28 | | 14 | | 28 | 3 շաբաթ | գկ |
| | 29 | | 29 | | 15 | | 29 | 4 շաբաթ | դձ |
| | 30 | | 30 | | 16 | | 1 | 5 շաբաթ | դկ |
| | 31 | Փետ. | 1 | | 17 | | 2 | Ուրբաթ | աձ |

Ամիսք՝ Աշխարհացս Լատինացւոց, Բռնգաղցւոց, Տաճկաց և Լուսնի· Աւուրք շաբաթու, և Զատկի օրհնութն :

| Ագոստ | | Ղամար | | Սրաբօն | | Մուհարէմ՝ և Լուսին | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 | | 2 | | 18 | | 3 | Շաբաթ | ակ |
| | 2 | | 3 | | 19 | | 4 | Կիւրակէ | բձ |
| | 3 | | 4 | | 20 | | 5 | 2 շաբաթ | բկ |
| | 4 | | 5 | | 21 | | 6 | 3 շաբաթ | գձ |
| | 5 | | 6 | | 22 | | 7 | 4 շաբաթ | գկ |
| | 6 | | 7 | | 23 | | 8 | 5 շաբաթ | դձ |
| | 7 | | 8 | | 24 | | 9 | Ուրբաթ | դկ |
| | 8 | | 9 | | 25 | | 10 | Շաբաթ | աձ |
| | 9 | | 10 | | 26 | | 11 | Կիւրակէ | ակ |
| | 10 | | 11 | | 27 | | 12 | 2 շաբաթ | բձ |
| | 11 | | 12 | | 28 | | 13 | 3 շաբաթ | բկ |
| | 12 | | 13 | | 29 | | 14 | 4 շաբաթ | գձ |
| | 13 | | 14 | Յհադէլօ | 30 | | 15 | 5 շաբաթ | գկ |
| | 14 | | 15 | | 31 | | 16 | Ուրբաթ | դձ |
| | 15 | | 16 | | 1 | | 17 | Շաբաթ | դկ |
| | 16 | | 17 | | 2 | | 18 | Կիւրակէ | աձ |
| | 17 | | 18 | | 3 | | 19 | 2 շաբաթ | ակ |
| | 18 | | 19 | | 4 | | 20 | 3 շաբաթ | բձ |
| | 19 | | 20 | | 5 | | 21 | 4 շաբաթ | բկ |
| | 20 | | 21 | | 6 | | 22 | 5 շաբաթ | գձ |
| | 21 | | 22 | | 7 | | 23 | Ուրբաթ | գկ |
| | 22 | | 23 | | 8 | | 24 | Շաբաթ | դձ |
| | 23 | | 24 | | 9 | | 25 | Կիւրակէ | դկ |
| | 24 | | 25 | | 10 | | 26 | 2 շաբաթ | աձ |
| | 25 | | 26 | | 11 | | 27 | 3 շաբաթ | ակ |
| | 26 | | 27 | | 12 | | 28 | 4 շաբաթ | բձ |
| | 27 | | 28 | | 13 | | 29 | 5 շաբաթ | բկ |
| | 28 | | 29 | | 14 | | 30 | Ուրբաթ | գձ |
| | 29 | | 30 | | 15 | | 1 | Շաբաթ | գկ |
| | 30 | Նաւ. | 1 | | 16 | | 2 | Կիւրակէ | դձ |
| | 31 | | 2 | | 17 | | 3 | 2 շաբաթ | դկ |

Ամսոյ Աղուեսոյն. Լատինացւոց, Յոնվարի... Տաճկաց և Լուսնի. Ըստ զ... և Զայն օրհնութեն։

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [illegible] | 1 | [illegible] | 3 | [illegible] | 18 | [illegible] | 4 | 3 շաբաթ | աձ |
| | 2 | | 4 | | 19 | | 5 | 4 շաբաթ | ակ |
| | 3 | | 5 | | 20 | | 6 | 5 շաբաթ | բձ |
| | 4 | | 6 | | 21 | | 7 | Ուրբաթ | բկ |
| | 5 | | 7 | | 22 | | 8 | Շաբաթ | գձ |
| | 6 | | 8 | | 23 | | 9 | Կիւրակէ | գկ |
| | 7 | | 9 | | 24 | | 10 | 2 շաբաթ | դձ |
| | 8 | | 10 | | 25 | | 11 | 3 շաբաթ | դկ |
| | 9 | | 11 | | 26 | | 21 | 4 շաբաթ | աձ |
| | 10 | | 12 | | 27 | | 13 | 5 շաբաթ | ակ |
| | 11 | | 13 | | 28 | | 14 | Ուրբաթ | բձ |
| | 12 | | 14 | | 29 | | 15 | Շաբաթ | բկ |
| | 13 | | 15 | | 30 | | 16 | Կիւրակէ | գձ |
| | 14 | | 16 | [illegible] | 31 | | 17 | 2 շաբաթ | գկ |
| | 15 | | 17 | | 32 | | 18 | 3 շաբաթ | դձ |
| | 16 | | 18 | | 1 | | 19 | 4 շաբաթ | դկ |
| | 17 | | 19 | | 2 | | 20 | 5 շաբաթ | աձ |
| | 18 | | 20 | | 3 | | 21 | Ուրբաթ | ակ |
| | 19 | | 21 | | 4 | | 22 | Շաբաթ | բձ |
| | 20 | | 22 | | 5 | | 23 | Կիւրակէ | բկ |
| | 21 | | 23 | | 6 | | 24 | 2 շաբաթ | գձ |
| | 22 | | 24 | | 7 | | 25 | 3 շաբաթ | գկ |
| | 23 | | 25 | | 8 | | 26 | 4 շաբաթ | դձ |
| | 24 | | 26 | | 9 | | 27 | 5 շաբաթ | դկ |
| | 25 | | 27 | | 10 | | 28 | Ուրբաթ | աձ |
| | 26 | | 28 | | 11 | | 29 | Շաբաթ | ակ |
| | 27 | | 29 | | 12 | | 30 | Կիւրակէ | բձ |
| | 28 | | 30 | | 13 | [illegible] | 1 | 2 շաբաթ | բկ |
| | 29 | [illegible] | 1 | | 14 | | 2 | 3 շաբաթ | գձ |
| | 30 | | 2 | | 15 | | 3 | 4 շաբաթ | գկ |

Ամիսք Ազգերայց, Լատինացւոց, [illegible], Տաճկաց և Հայոց · Աւուրք շաբաթու, և Ձայնք օրհնութեան :

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մարտ ամսոյ | 1 | [illegible] | 3 | [illegible] | 16 | [illegible] | 4 | 5 շաբաթ | դձ |
| | 2 | | 4 | | 17 | | 5 | Ուրբաթ | դկ |
| | 3 | | 5 | | 18 | | 6 | Շաբաթ | աձ |
| | 4 | | 6 | | 19 | | 7 | Կիւրակէ | ակ |
| | 5 | | 7 | | 20 | | 8 | 2 շաբաթ | բձ |
| | 6 | | 8 | | 21 | | 9 | 3 շաբաթ | բկ |
| | 7 | | 9 | | 22 | | 10 | 4 շաբաթ | գձ |
| | 8 | | 10 | | 23 | | 11 | 5 շաբաթ | գկ |
| | 9 | | 11 | | 24 | | 12 | Ուրբաթ | դձ |
| | 10 | | 12 | | 25 | | 13 | Շաբաթ | դկ |
| | 11 | | 13 | | 26 | | 14 | Կիւրակէ | աձ |
| | 12 | | 14 | | 27 | | 15 | 2 շաբաթ | ակ |
| | 13 | | 15 | | 28 | | 16 | 3 շաբաթ | բձ |
| | 14 | | 16 | | 29 | | 17 | 4 շաբաթ | բկ |
| | 15 | | 17 | | 30 | | 18 | 5 շաբաթ | գձ |
| | 16 | | 18 | [illegible] | 1 | | 19 | Ուրբաթ | գկ |
| | 17 | | 19 | | 2 | | 20 | Շաբաթ | դձ |
| | 18 | | 20 | | 3 | | 21 | Կիւրակէ | դկ |
| | 19 | | 21 | | 4 | | 22 | 2 շաբաթ | աձ |
| | 20 | | 22 | | 5 | | 23 | 3 շաբաթ | ակ |
| | 21 | | 23 | | 6 | | 24 | 4 շաբաթ | բձ |
| | 22 | | 24 | | 7 | | 25 | 5 շաբաթ | բկ |
| | 23 | | 25 | | 8 | | 26 | Ուրբաթ | գձ |
| | 24 | | 26 | | 9 | | 27 | Շաբաթ | գկ |
| | 25 | | 27 | | 10 | | 28 | Կիւրակէ | դձ |
| | 26 | | 28 | | 11 | | 29 | 2 շաբաթ | դկ |
| | 27 | | 29 | | 12 | | 30 | 3 շաբաթ | աձ |
| | 28 | | 30 | | 13 | [illegible] | 1 | 4 շաբաթ | ակ |
| | 29 | [illegible] | 1 | | 14 | | 2 | 5 շաբաթ | բձ |
| | 30 | | 2 | | 15 | | 3 | Ուրբաթ | բկ |
| | 31 | | 3 | | 16 | | 4 | Շաբաթ | գձ |

Ամիսք Ազգերոյս, Լատինացւոց, Յունացւոց, Տաճկաց և Լատանէ. Անտարք զուգահաւասար և Չորսք օրհնութիւն :

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Նոյէմբեր | 1 | Դումայ | 4 | Կարութիկ | 17 | Րէպիւլ ամսի և Լուսին | 5 | Կիւրակէ | դկ |
| | 2 | | 5 | | 18 | | 6 | 2 շաբաթ | գձ |
| | 3 | | 6 | | 19 | | 7 | 3 շաբաթ | դկ |
| | 4 | | 7 | | 20 | | 8 | 4 շաբաթ | աձ |
| | 5 | | 8 | | 21 | | 9 | 5 շաբաթ | ակ |
| | 6 | | 9 | | 22 | | 10 | Ուրբաթ | բձ |
| | 7 | | 10 | | 23 | | 11 | Շաբաթ | բկ |
| | 8 | | 11 | | 24 | | 12 | Կիւրակէ | գձ |
| | 9 | | 12 | | 25 | | 13 | 2 շաբաթ | գկ |
| | 10 | | 13 | | 26 | | 14 | 3 շաբաթ | դձ |
| | 11 | | 14 | | 27 | | 15 | 4 շաբաթ | դկ |
| | 12 | | 15 | | 28 | | 16 | 5 շաբաթ | աձ |
| | 13 | | 16 | | 29 | | 17 | Ուրբաթ | ակ |
| | 14 | | 17 | | 30 | | 18 | Շաբաթ | բձ |
| | 15 | | 18 | Ագրօհան | 1 | | 19 | Կիւրակէ | բկ |
| | 16 | | 19 | | 2 | | 20 | 2 շաբաթ | գձ |
| | 17 | | 20 | | 3 | | 21 | 3 շաբաթ | գկ |
| | 18 | | 21 | | 4 | | 22 | 4 շաբաթ | դձ |
| | 19 | | 22 | | 5 | | 23 | 5 շաբաթ | դկ |
| | 20 | | 23 | | 6 | | 24 | Ուրբաթ | աձ |
| | 21 | | 24 | | 7 | | 25 | Շաբաթ | ակ |
| | 22 | | 25 | | 8 | | 26 | Կիւրակէ | բձ |
| | 23 | | 26 | | 9 | | 27 | 2 շաբաթ | բկ |
| | 24 | | 27 | | 10 | | 28 | 3 շաբաթ | գձ |
| | 25 | | 28 | | 11 | | 29 | 4 շաբաթ | գկ |
| | 26 | | 29 | | 12 | Ջէմազիէլ. | 1 | 5 շաբաթ | դձ |
| | 27 | | 30 | | 13 | | 2 | Ուրբաթ | դկ |
| | 28 | Հաւիրայ | 1 | | 14 | | 3 | Շաբաթ | աձ |
| | 29 | | 2 | | 15 | | 4 | Կիւրակէ | ակ |
| | 30 | | 3 | | 16 | | 5 | 2 շաբաթ | բձ |

Ամիս Աշխարհիս, Լուսնայնոց, Բանդօրեցոց, Տաճկաց և Լուսոյ. Անուն շաբաթու, և Ձայն օրինութեն:

| Դեկտեմբեր | Քաղոց ամիս | Ադրօշան | Ձմերային Լէկինէ և Լուսին | Անուն շաբաթու | Ձայն |
|---|---|---|---|---|---|
| 1 | 4 | 17 | 6 | 3 շաբաթ | բկ |
| 2 | 5 | 18 | 7 | 4 շաբաթ | գձ |
| 3 | 6 | 19 | 8 | 5 շաբաթ | գկ |
| 4 | 7 | 20 | 9 | Ուրբաթ | դձ |
| 5 | 8 | 21 | 10 | Շաբաթ | դկ |
| 6 | 9 | 22 | 11 | Կիւրակէ | աձ |
| 7 | 10 | 23 | 12 | 2 շաբաթ | ակ |
| 8 | 11 | 24 | 13 | 3 շաբաթ | բձ |
| 9 | 12 | 25 | 14 | 4 շաբաթ | բկ |
| 10 | 13 | 26 | 15 | 5 շաբաթ | գձ |
| 11 | 14 | 27 | 16 | Ուրբաթ | գկ |
| 12 | 15 | 28 | 17 | Շաբաթ | դձ |
| 13 | 16 | 29 | 18 | Կիւրակէ | դկ |
| 14 | 17 | Փօյսա 1 | 19 | 2 շաբաթ | աձ |
| 15 | 18 | 2 | 20 | 3 շաբաթ | ակ |
| 16 | 19 | 3 | 21 | 4 շաբաթ | բձ |
| 17 | 20 | 4 | 22 | 5 շաբաթ | բկ |
| 18 | 21 | 5 | 23 | Ուրբաթ | գձ |
| 19 | 22 | 6 | 24 | Շաբաթ | գկ |
| 20 | 23 | 7 | 25 | Կիւրակէ | դձ |
| 21 | 24 | 8 | 26 | 2 շաբաթ | դկ |
| 22 | 25 | 9 | 27 | 3 շաբաթ | աձ |
| 23 | 26 | 10 | 28 | 4 շաբաթ | ակ |
| 24 | 27 | 11 | 29 | 5 շաբաթ | բձ |
| 25 | 28 | 12 | 30 | Ուրբաթ | բկ |
| 26 | 29 | 13 | Ձմերային. 1 | Շաբաթ | գձ |
| 27 | 30 | 14 | 2 | Կիւրակէ | գկ |
| 28 | Արաց 1 | 15 | 3 | 2 շաբաթ | դձ |
| 29 | 2 | 16 | 4 | 3 շաբաթ | դկ |
| 30 | 3 | 17 | 5 | 4 շաբաթ | աձ |
| 31 | 4 | 18 | 6 | 5 շաբաթ | ակ |

# ՏՕՆԱՑՈՅՑ

## ՎԱՍՆ ԱՄԻ 1829 ։

Գիր տարւոյն Ո ։ Վերադիր 5 ։ Եօթներեակ Հռոմէաւոց 4 ։ Ըստ համեմատութե̅ Տօնացուցին զոր տպագրեալ ՚ի լոյս ընծայեաց Սրբազան Սիմէօն կաթուղիկոսն ամենայն Հայոց ՚ի Յամի Տեառն 1774 ։

Արամ 22 Կիւրակէ՝ տօն Ծննդեան և Յայտնութեան Տեառն մերոյ Յի̅ Քի̅ , Յայս 8 աւուրս յերկոյեն նախատօնակ կատարի ( միջոց ուտիքն քսան և ինն օր է ։

Արամ 23 Երկրորդ աւուր՝ տօն է Ծննդեան , ( Այս օր կիւրակէ է ։

Արամ 29 Կիւրակէ տօն է Յայտնութե̅ և Թլփատութե̅ Տեառն մերոյ Յի̅ Քի̅ ։

Արամ 30 Երկու շաբաթ՝ տօն է Ծննդեան սբ̅յն Յովհաննու Կարապետին ։

Ովդան 1 Երեք շաբաթ՝ տօն է սբ̅յն Պետրոսի Հայրապետին , Վլասայ եպիսկոպոսին , և աբիսողոմայ սարկաւագին ։

Ովդան 3 Հինգ շաբաթ՝ տօն է Անտօնի Ճգնաւորին ։

Ովդան 5 Շաբաթ՝ տօն է սրբոյն Թէոդոսի Թագաւորին , և Մանկանց եփեսոսի ։

Ովդան 7 Երկու շաբաթ՝ տօն է սրբոյն Կիւրակոսի , և մօրն Յուղիտայի , և սբ̅ց Վկայիցն Գորդիոսի , Պօղիկտոսի , և Գրիգորիսի ։

Ովդան 8 Երեք շաբաթ՝ տօն է սբ̅ց Վահանայ Գողթնացւոյն , և սրբոյն Եւգինեայ կուսին , և հօրն նր̅ Փիլիպպոսի , և մօրն Կղօդիայ , և երկուց եղբարցն Սերգիայ և Աւիտոնի , և երկուց ներքինեացն ։

Ովդան 10 Հինգ շաբաթ՝ տօն է սբ̅ց Ճգնաւորացն սրբ-

փոնի , Պարսամայ , և Ընովփրիոսի ։

Ովլդան 12 Շաբաթ՝ տօն է սրբոյ . Հայրապետացն ա-
թանասի , և կիւրղի ։

Ովլդան 14 Երկու շաբաթ՝ տօն է սրբ̃ցն Եւգինէոսի , մա-
կարիոսի , Վալերիոսի Կանդիտոսի , և
ակիւղասայ ։

Ովլդան 15 Երեք շաբաթ՝ տօն է սրբոյն Անդրէի Զօ-
րավարին , և բանակի նորին , Կալինիկո-
սի և դեմետրայ վկայիցն ։

Ովլդան 17 Հինգ շաբաթ՝ տօն է սրբոյն Անդրիանոսի ,
և Կնոջ նորա Անատօլայ , Թէոդորոսի ,
և եւլեւթիւրոսի վկայիցն ։

Ովլդան 19 Շաբաթ՝ սրբոյն Գրիգորի Ա̃ծաբանին ։

Ովլդան 20 Կիւրակէ՝ Բարեկենդան Առաջաւորի պա-
հոցն ։

Ովլդան 25 Ուրբաթ՝ տօն և յիշատակ Յօնանու Մար-
գարէին ։

Ովլդան 26 Շաբաթ՝ տօն է սրբոյն Սարգսի Զօրավա-
րին . և որդւոյ նորին Մարտիրոսին և
չորեքտասան զինուորացն ։

Ովլդան 28 Երկու շաբաթ՝ տօն է սր̃ց ատոմանց Զօ-
րավարացն ։

Ովլդան 29 Երեք շաբաթ՝ տօն է սր̃ց Սուքիասանց վկա-
յիցն , և Ոսկեանց քահանայիցն ։

Ովլդան 30 Չորեք շաբաթ՝ բույլոյցէ Տ̃Ն Է̃ առաջին ։

Նիրհան 1 Հինգ շաբաթ՝ տօն է քառասուն օրեայ Գալս-
տեանն 'ի տաճարին , որ և ասի տ̃ն ընդ-
առաջ , (Այսօր կիւրակէ է ։

Նիրհան 3 Շաբաթ՝ տօն է սրբոյն Իսահակայ պար-
թեւի Հայրապետին մերոյ ։

Նիրհան 5 Երկու շաբաթ՝ տօն է սրբոյն Մարկոսի ե-
պիսկոպոսին , Պիոնի քահանային , կիւր-
ղի և բենի Ամենի Սարկաւագացն , և սր̃ց
վկայիցն Արդըլմեհի , ոսմիդանայ , և
Սայենի ։

Նիրհան 6 Երէք շաբաթ՝ տօնէ սրբոց Ղեւոնդեանց քահանայից ։

Նիրհան 8 Հինգ շաբաթ՝ տօնէ սբց Վարդանանց Զօրավարացն մերոց 136 վկայիցն, որք կատարեցան ՚ի մեծ պատերազմին ։

Նիրհան 10 Շաբաթ՝ տօնէ սրբոյն Կոստանդնոյ Պօլսոյ սբ ժողովոյն, 150 Հայրապետացն ։

Նիրհան 11 Կիւրակէ բուն ԲԱՐԵԿԵՆԴԱՆ, (փոխեա զձանն և արա վերջ ։

Նիրհան 17 Շաբաթ՝ տօնէ սրբոյն Թէոդորոսի Զօրավարին ։

Նիրհան 18 Երկրորդ կիւրակէ՝ մեծի պահոյն ։

Նիրհան 24 Շաբաթ՝ տօնէ սրբոյն Կիւղի Երուսաղէմայ Հայրապետին, և միւս Կիւրղի եպիսկոպոսին, և մօր Նորա Աննայի ։

Նիրհան 25 Երրորդ կիւրակէ՝ Մեծի պահոյն ։

Նիրհան 26 Օրն 2 շաբաթ՝ Այսօր գիշեր և ցերեկ հաւասարէ այսինքն 12 ժամ գիշեր և 12 ժամ ցերեկ ։

Աւելեաց 1 Շաբաթ՝ տօնէ սրբոյն Յոհաննու Երուսաղէմայ Հայրապետին, և սրբոց Հայրապետացն մերոց Յոհաննու Օձնեցւոյն, Յոհաննու որոտնեցւոյն, և Գրիգորի տաթևացւոյն ։

Աւելեաց 2 Չորրորդ կիւրակէ՝ Մեծի պահոյն,

Համի 3 Շաբաթ՝ տօնէ սբց Մանկայն քառասնից ։

Համի 4 Հինգ երրորդ կիւրակէ՝ Մեծի պահոյն ։

Համի 9 Ուրբաթ երեկոյեն Նախատօնակ կատարի ։

Համի 10 Շաբաթ՝ տօնէ սբց Գրիգորի Լուսաւորչին մերոյ Սոսկալի չարչարանացն և մտին ՚ի վիրապն (Այսօր կիւրակէ է ։

Համի 11 Վեցերորդ կիւրակէ Մեծի պահոյն ։

Համի 17 Շաբաթ՝ յիշատակէ Յարուէն Ղազարու, (և Նախատօնակ Աւետեաց ։

Համի 18 Եօթներորդ կիւրակէ Ծաղկազարդ, և

տօն Աւետեաց սրբոյ կուսին, Իսկ յե-
րեկոյին (Գունաբայեք կատարի ։

Շամն 19 Աւագ երկու շաբաթ ։

Շամն 20 Աւագ երեք շաբաթ՝ Յիմար յիմաստնոյ տօն
կատարի ։

Շամն 21 Աւագ չորեք շաբաթ ։

Շամն 22 Աւագ հինգ շ՟թ՝ Յերեկոյին կարգ ոտնա-
լուայի կատարի, (Այսօր կիւրակի է,
Իսկ ՚ի գիշերին Հսկումնէ, եւ կատա-
րումն ամենայն Գրելոյ ։

Շամն 23 Աւագ ուրբաթ․ (Այսօր կիւրակէ է ։)

Շամն 24 Աւագ շաբաթ՝ յերեկոյին Ճրագալոյց սբյ
Զատկին, որեւ ասի Թաթախ ։ (Այսօր
կիւրակէ է ։

Շամն 25 ԶԱՏԻԿ ԿԻՒՐԱԿԷ՝ տօն Յարութե՟ն տ՟ն
մերոյ Յ՟ի Ք՟ի ։

Շամն 26 Երկու շաբաթ՝ Օր մեռելոց․ (Այսօր կիւ-
րակէ է ։

Ադամ 1 Շաբաթ՝ յիշատակ Գլխատման սբ՟ն Յո-
հաննու Կարապետին ։

Ադամ 2 Նոր կիւրակէ, որ եւ ասի Կրկնազատիկ ։

Ադամ 9 Երրորդ կիւ՟րկէ․ որ ասի աշխարհամատրան ։

Ադամ 23 Հինգ երրորդ կիւրակէ՝ տօն է Երեւման սբ՟յ
Խաչին ։

Շբաթ 4 Հինգ շաբաթ՝ Օր համբարձմանն Ք՟ի յեր-
կինս․ որ է քառասներորդ օր ՚ի Զատ-
կէն (Այսօր կիւրակէ է ։

Շբաթ 7 Օրն կիւ՟րկէ որ ասի Երկրորդ ծաղկազարդ ։

Շբաթ 13 Օրն շաբաթ Լրումնէ կարգի տնօրինակա-
նացն Յարութեան ։

Շբաթ 14 Հոգւոյն սրբոյ Գալստեան կիւրակէ, որ եւ
ասի Պենտէկոստէ, այսինքն յիսներորդ
Օր ՚ի Զատկէն ։ (եւ Բարեկենդան ե-
ղիական պահոյն ։)

Շբաթ 15 Երկու շաբաթ Պահք եղիական ։

Շբաթ 21 Առաջին կիւրակէ , (յերեկոյին Նախատօ-
նակէ , և Այսօրէն գիշերէն պէս կարճ
գիշեր չկայ բոլոր տարումն ։

Շբաթ 22 Երկու շաբթ՝ տօն է սբյ կուսանացն Հռիփ-
սիմեանց , և յերեկոյին Նախատօնակէ ։

Շբաթ 23 Երեք շաբաթ՝ տօն է սրբոց կուսանացն Գայ-
իանեայց ։

Շբաթ 24 Չորեք շաբաթ՝ յերեկոյին Նախատօնակէ ։

Շբաթ 25 Հինգ շաբաթ՝ տօն է սրբոյն Յոհաննու Կա-
րապետին , և աթանագինեայ եպիսկո-
պոսին ։

Շբաթ 26 Ուրբաթ՝ յերեկոյին Նախատօնակէ ։

Շբաթ 27 Շաբաթ՝ տօն է սբյն Գրիգորի մերոյ Լու-
սաւորչին , Ելանելոյն 'ի վիրապէն ։ (այ-
սօր կիւրակէ է ։

Շբաթ 28 Կիւրակէ՝ տօն է Կաթուղիկէ եկեղեցւոյ սբյ
Էջմիածնի ։

Շբաթ 29 Երկու շաբաթ՝ տօն է սրբոց մանկացն բեթ-
լէհեմի , և ակակիոսի Վկային , մով-
կիմայ քահանային , և Կոտրատիոսի զի-
նաւորին ։

Շբաթ 30 Երեք շաբաթ՝ տօն է սրբոց Կուսանացն Նու-
նեայ , և մանեայ ։

Նախայ 2 Հինգ շաբաթ՝ տօն է սրբոց իշխանացն Սա-
հակայ , և Յովսէփայ , և սրբոց վկայ-
իցն Սարգսի , և բակոսի ։

Նախայ 4 Շաբաթ՝ տօն է սբյն Ներսիսի մեծի Հայ-
րապետին մերոյ. և խաթայ եպիսկոպոսին ։

Նախայ 5 Կիւրակէ՝ Բարեկենդան սրբոյն Գրիգորի
Լուսաւորչի պահոցն ։

Նախայ 6 Երկու շաբաթ՝ տօն է սբյն Եպիփանու կիպ-
րացւոյն , Բաբելայ Հայրապետին , և ե-
րից աշակերտաց նորին ։

Նախայ 7 Երեք շաբաթ՝ տօն է սրբոյն Կոստանդիանո-
սի Թագաւորին , և մօրն նր Հեղինեայ ։

Նախայ 9 Հինգ շաբաթ՝ տօն է սրբոյն Թէոդորոսի գաղատացւոյն, և Թաղիլեայ բժշկին, և եօթն կուսանացն որք յանկուրիայ կատարեցան ։

Նախայ 10 Ուրբաթ՝ յերեկոյին Նախատօնակէ ։

Նախայ 11 Շաբաթ՝ տօն է գիւտի նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ։ ( Այսօր կիւրակէ է ։

Նախայ 13 Երկու շաբաթ՝ տօն է սրբոց վկայիցն Անտոնինոսի, Թէոփիլոսի, անիքտոսի, և փոտինոսի ։

Նախայ 14 Երեք շաբաթ տօն է սրբոյն դանիէլի Մարգարէին, և երից մանկացն ։

Նախայ 16 Հինգ շաբաթ՝ սրբոց Թարգմանչաց Վարդապետացն մերոց սահակայ, և մեսրոպայ ։

Նախայ 18 Շաբաթ՝ տօն է սրբոյն Տրդատայ Թագաւորին մերոյ, և աշխէն Տիկնոջն, և խոսրովի դխտոյն ։

Նախայ 19 Կիւրակէ տօն է սրբուհւոյ Ածածնի տփոյ գտմանն ։

Նախայ 20 Երկու շաբաթ՝ տօն է սրբոյն Կալիստրատոսի, և 49 Վկայիցն, և Ղունկիանոսի քահանային ։

Նախայ 21 Երեք շաբաթ՝ տօն է սրբոյն Զաքարիայ Մարգարէին ։

Նախայ 23 Հինգ շաբաթ՝ տօն է եղիսէի Մարգարէին ։

Նախայ 25 Շաբաթ՝ տօն է սրբոց երկոտասանից Առաքելոցն Քրիստոսի, և սրբոյն երեքտասան Առաքելոյն Պօղոսի ։

Նախայ 26 Կիւրակէ՝ Բարեկենդան Վարդավառի պահոյն ։

Դամար 2 Շաբաթ՝ յիշատակէ Տապանակին Հնոյ, և տօն Նորոյս սուրբ եկեղեցւոյ ։

Դամար 3 Վարդավառ կիւրակէ, Միջին ուտէք երեք շաբաթ է ։

Դամար 4 Երկու շաբաթ Օր մեռելոց, (այսօր կիւրակէ է:)

Դամար 7 Հինգ շաբաթ տօն է մեծին Եսայեայ Մարգարէին:

Դամար 8 Ուրբաթ յերեկոյին Նախատօնակէ:

Դամար 9 Շաբաթ տօն է սրբոյն Թադէոսի Առաքելոյն, և Սանդխտոյ կուսին, (Այսօր կիւրակէ է:)

Դամար 11 Երկու շաբաթ տօն է սրբոյն Կիպրիանոսի եպիսկոպոսին, և 49 Վկայիցն, և ս̃ց կուսանացն յուստինեայ, Եփիմեայ, և Քրիստինեայ:

Դամար 12 Երեք շաբաթ տօն է սրբոյն աթանագինեայ եպիսկոպոսին, տասն աշակերտացն, և Հինգ վկայիցն:

Դամար 14 Հինգ շաբաթ տօն է սրբոց Նախահարցն Ադամայ, Աբէլի. Սեթայ, Ենովսայ, Ենովքայ, Նոյի, Մելքիսեդեկի, Աբրահամու, Իսահակայ, Յակոբայ, Յովսեփայ, Ահարօնի Եղիազարու, Յեսուայ, Սամուէլի, Սամփսոնի, Յեփթայեայ, Բարակայ, Գեդէօնի, և այլոց ս̃ց հարցն:

Դամար 16 Շաբաթ տօն է սրբոց որդւոց և թոռանց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, Արիստակեսի. Վրթանիսի, յուսկանն, Գրիգորիսի և Դանիէլի:

Դամար 18 Երկու շաբաթ տօն է սրբոց մակաբայեցւոցն Եղիազարու քահանային, և Շամունեայ, և եօթն որդւոց նորին:

Դամար 19 Երեք շաբաթ տօն է սրբոց երկոտասանից Մարգարէիցն, Ովսեայ, Ամովսայ, Միքեայ, Յովէլեայ, Աբդիու Նաւումայ, Ամբակումայ, Յովնանու, Սոփոնեայ, Անգեայ, Զաքարիայ, և Մաղաքեայ:

Դամար 21 Հինգ շաբաթ տօն է սրբոյն Սոփիայ, և ե-

րից դստերացն , Պիստոսի , Ելպիսի , և
ագապի ։

Ղամար 23 Շաբաթ՝ յեփեսոսի սուրբ ժողովոյն , եր-
կու հարիւր Հայրապետացն ։

Ղամար 24 Կիւրակէ՝ Բարեկենդան սբ Ածածնի Վե-
րափոխման պահոցն ։

Ղամար 30 Շաբաթ՝ տօն է շողակաթին սրբոյ Էջմի-
ածնի , եւ տեսլեան սրբոյն Գրիգորի մե-
րոյ Լուսաւորչին ։ ( յայս երեկոյես սկ-
սեալ Նախատօնակէ փոխման սբ Ածած-
նին , մինչ և ՝ի միւս կիւրակէ երեկոյն
որ է Նադար 8 ։ որ է Աւուրք 9 ։ )

Նադար 1 Սուրբ Ածածնի վերափոխման կիւրակէ ։

Նադար 2 Երկու շաբաթ՝ Օր մեռելոց , ( Այսօր կիւ-
րակէ է ։

Նադար 8 Երկրորդ կիւրակէ՝ յերեկոյին Նախատօ-
նակէ , և լրումն աւուրց Նախատօնակաց ։

Նադար 10 Երեք շաբաթ՝ տօն է սրբոյն Յովակիմայ ,
և Աննայի ծնողաց սուրբ Ածածնին , և
կանանցն իւղաբերից ։

Նադար 12 Հինգ շբթ՝ տօն է եսեմիայի Մարգարէին ։

Նադար 14 Շաբաթ՝ տօն է սրբոց Առաքելոցն Թովմայի ,
Յակոբայ , և Շմաւոնի ։

Նադար 15 Կիւրակէ՝ տօն է Գիւտի Գօտւոյ Սուրբ
Ածածնին ։

Նադար 16 Երկու շաբաթ՝ տօն է սրբոյն Ստեփաննոսի
ուլնեցւոյին , և սրբոց վկայիցն Գոհարի-
նեայ , ծամիդեսի , Տուքիկոսի , և Իրա-
տիկոսի ։

Նադար 17 Երեք շաբաթ՝ տօն է սրբոց Մարգարէիցն ե-
զեկիէլի , եզրի , և Զաքարիայի հօրն Յո-
հաննու Մկրտչի ։

Նադար 19 Հինգ շաբաթ՝ տօն է սբյն Յոհաննու կա-
րապետին , և յօբայ արդարոյն ։

Նադար 21 Շաբաթ՝ տօն է Նիկիոյ սբ ժողովոյն 318

Հայրապետացն ։ և յերեկոյին Նախատօնակ ։

Նադար 22 Կիւրակէ՝ տօն է սբ Ածածնի Ծննդեանն ՚ի Յաննայէ, և Բարեկենդան սբ խաչին ։

Նադար 24 Օրն 4 շաբաթ այսօր Գիշեր և ցերեկ հաւասարէ ։

Նադար 28 Շաբաթ՝ տօն է սրբոյ եկեղեցւոյ, ՚ի Նաւակատիս սրբոյ Խաչին ։

Նադար 29 ՍՈՒՐԲ ԽԱՉ կիւրակէ, և յերեկոյին վերայ կատարի ։

Նադար 30 Երկու շաբաթ՝ տօն է խաչի, և Օր մեռելոց, ( Այսօր կիւրակէ է ։ )

Թիրայ 6 Կիւրակէ՝ Բարեկենդան Վարագայ սբ խաչին, բայց տօնք լինին ։

Թիրայ 7 Երկու շաբաթ՝ տօն է սրբոյն Մամասայ, փիլիքթիմոնի, և Սիմէօնի սիւնակեցւոյն ։

Թիրայ 8 Երեք շաբթ՝ տօն է սբց կուսանացն փեփրոնեայ, Մարիանեայ, և Շուշանայ դըստերն մեծին Վարդանայ ։

Թիրայ 10 Հինգ շաբաթ՝ տօն է սրբոյ Հարապետացն բարղամու, անթիմոսի, և երանոսի ։

Թիրայ 12 Շաբաթ՝ տօն է սրբոյն Գէորգեայ Զօրավարին, աղոկտոսի ․ և Ռոմանոսի երգեցողին ։

Թիրայ 13 Կիւրակէ տօն է Վարագայ սրբոյ խաչին ։

Թիրայ 14 Երկու շաբաթ՝ տօն է, Դաւթի դւինեցւոյն, և սրբոյ վկայիցն Ղամբէոսի, և Ղամբուհւոյ ։

Թիրայ 15 Երեք Շաբաթ՝ տօն է սբցն Եւստաթէոսի, և կնոջ նորա Թէոպիստոսի, և երկուց որդւոցն, և սրբոյ կուսանացն Երմոնեայ, և Նէքտաւինեայ ։

Թիրայ 17 Հինգ շաբաթ՝ տօն է սրբոյ Իշխանացն սահակայ, և Համազասպայ ։

Թիրայ 19 Շաբաթ՝ տօն է սրբոյ Եօթանասուն երկու

աշակերտացն Քրիստոսի ։

Թիրայ 21 Երկու շաբաթ՝ տօն է սրբոյն Փոկասու Հայրապետին, և Երանոսի հետևողին Առաքելոյն ։

Թիրայ 22 Երեք շաբաթ՝ տօն է սրբոց Կուսանացն Թեկղի, Վառվառեայ, և Գլեղիգեայ ։

Թիրայ 24 Հինգ շաբաթ՝ տօն է սրբոյն Պանդալեոնի բժշկին, և Երմողեայ քահանային, և Եւպրակսեայ կուսին ։

Թիրայ 26 Շաբաթ տօն է սրբոց Թարգմանչացն Վարդապետացն մերոց, Մեսրոպայ, Եղիշէի, Մովսէսի քերթողին, Դաւթի անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն, և Ներսէսի կլայեցւոյն ։

Թիրայ 28 Երկու շաբաթ՝ տօն է Գիւտի նշխարաց սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսին, և սրբոց հարցն Թաթլոյ, Վարոսի, և Թովմասու, Անտոնի, և Կրօնիդեայ, և 7 խոստաճարակացն, որք Յիննակնեայ վանս կատարեցան ։

Թիրայ 29 Երեք շաբաթ՝ տօն է սրբոց Առաքելոյն աննայի, Մատթէի, Բառնաբայ, Փիլիպպոսի, Յոհաննու, Շիղայի, և Սուղիանոսի ։

Դամայ 1 Հինգ շաբաթ՝ տօն է սրբոյն Դիոնէսիոսի Արիսպագացւոյն, և սրբոց Առաքելոյն Տիմոթէոսի, և Տիտոսի ։

Դամայ 3 Շաբաթ տօն է սրբոց Աւետարանչացն Մարկոսի, Ղուկասու, և Յոհաննու ։

Դամայ 5 Երկու շաբաթ տօն է սրբոյն Ղունկիանոսի հարիւրապետին որ հաւատաց 'ի խաչելութիւնն Քրիստոսի, և Յովսեփայ Ընծահօրն, և Յովսեփայ Արեմաթացւոյն, և բարեկամին Քրիստոսի Ղազարու, և քերց նորա Մարթայի, և Մարիամու ։

Դամնայ 6 Երեք շաբաթ՝ տօն է սրբոյն Թէոդիտոսի քահանային, և Զենոնի զինուորին, և Մակարայ, Դոքսիայ, և Բուսինեայ :

Դամնայ 8 Հինգ շաբաթ՝ տօն է սրբոց խարիթեանցն, և սրբոց վկայիցն Արտեմեայ, և Քրիստափորի, և երկուց կանանցն Կալինիկեայ, և Ակիւլինեայ :

Դամնայ 10 Շաբաթ՝ տօն է սրբոց երկոտասան Վարդապետացն Իերոթէոսի, Դիոնեսիոսի, Սեղբեստրոսի, Աթանասի, Կիւրղի Երուսաղէմացւոյն, Եփրեմի խորին ասորւոյ, Բարսղի Կեսարացւոյն, Գրիգորի Նիւսացւոյն, Գրիգորի Աստուածաբանին, Եպիփանու Կիպրացւոյն, Յոհաննու Ոսկեբերանին, և Կիւրղի Աղեքսանդրացւոյն :

Դամնայ 11 Կիւրակէ խաչգիւտ է :

Դամնայ 12 Երկու շաբաթ՝ տօն է սրբոյն Անաստասայ քահանային, Վարոսի, և Թէոդորիտեայ, և որդւոյ նորա, և որք ընդ նմա կատարեցան :

Դամնայ 13 Երեք շաբաթ՝ տօն է սրբոց Հիպլիքեանցն. որք ՚ի Սամոսատ կատարեցան, և սրբոյն Սևերիանոսի Սեբաստացւոյն, և Բաբելայ ծերոյ, և 84 աշակերտաց նորին :

Դամնայ 15 Հինգ շաբաթ՝ տօն է սրբոյն Յոհաննու Ոսկեբերան Հայրապետին :

Դամնայ 17 Շաբաթ՝ տօն է ամենայն սրբոց հնոց և նորոց, յայտնեաց, և անյայտից :

Դամնայ 19 Երկու շաբաթ՝ տօն է սրբոյն Ստեփաննոսի Հռոմայ Հայրապետին. և քահանային, և սարկաւագացն, և ժողովրդոցն :

Դամնայ 20 Երեք շաբաթ՝ տօն է սրբոյն Ակեփսիմեայ եպիսկոպոսին, և Յովսեփայ քահանային, Այիթալայ սարկաւագին, և Պղատոնի վկային :

Դամայ 22 Հինգ շաբաթ՝ տօն է սրբոց Հայրապետացն Մետրոփանոսի, Աղեքսանդրոսի, և Պօղոսի խոստովանողին, և սբց նօտարացն Մարկիանոսի, և Մարտիրոսի ։

Դամայ 24 Շաբաթ տօն է սրբոց Հրեշտակապետացն Գաբրիէլի, և Միքայէլի, և ամենայն երկնային զօրացն ։

Դամայ 26 Երկու շաբաթ տօն է սբցն Մելիտոսի Անտիոքայ Հայրապետին, և Մինասայ Եգիպտացւոյն, և միւս Մելիտոսայ եպիսկոպոսին, Բուրայ քահանային, և Շինու սարկաւագին ։

Դամայ 27 Երեք շաբաթ՝ տօն է սբցն Դեմետրեայ վկային, և Բասեղիսկոսի քահանային ։

Դամայ 29 Հինգ շաբաթ՝ տօն է սրբոյն Գուրիասայ, Սամոնասայ, և Աբիբայ սարգաւագին, Թամանոսի միայնակեցին, Մանկանն խոստովանողի, և Հիւսիքոսի զինաւորին ։

Համիրայ 1 Շաբաթ՝ տօն է սբց Առաքելոյն անդրէի, և Փիլիպպոսի ։

Համիրայ 2 Կիւրակէ՝ Բարեկենդան յիսնակի պահոյն ։

Համիրայ 5 Չորեք շաբաթ՝ յերեկոյին Նախատօնակ է ։

Համիրայ 6 Հինգ շաբաթ՝ տօն սբ. Ածածնի երկրամայն ընծայեցման ՚ի տաճարն ։

Համիրայ 8 Շաբաթ՝ տօն է սրբոյն Գրիգորի սքանչելագործին, Նիկողայոսի Հայրապետին, և միւռոնայ եպիսկոպոսին ։

Համիրայ 10 Երկու շաբաթ՝ տօն է սբց կուսանացն Յուլիանեայ, և վասիլուհւոյ, և սբցն Աբրահամու, և Խորենայ, և անարծաթ բժշկացն կողմայի, և Դամիանոսի, և Ածատրոյ վկային ։

Համիրայ 11 Երեք շաբաթ՝ տօն է սրբոյն Ղունկիանոսի քահանային, և սբցն տարագրոսի, պրոբոսի, Անդրոնիկոսի, և Ոնոսիմեայ՝ և

այլոց աշակերտացն Պօղոսի ։

Համիրայ 13 Հինգ շաբաթ՝ տօն է սրբոյն Կղեմայ Հայրապետին, և բագարատայ տաւրոմենոյ եպիսկոպոսին,

Համիրայ 15 Շաբաթ՝ տօն է սրբոց Առաքելոց և առաջին Լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթուղիմէոսի, ( Այսօր կիւրակէ է ։

Համիրայ 17 Երկու շաբաթ՝ Գենարիոսի եպիսկոպոսին, և մերկուրիոսի զինաւորին, Յակովկայ, և իրաւափառայ ։

Համիրայ 18 Երեք շաբաթ՝ տօն է սրբոյն Մինասայ երմոգինեայ, և Գրաբոսի, և կամաւոր աղքատացն Յոհաննու, և աղեքսիանոսի ։

Համիրայ 20 Հինգ շաբաթ՝ տօն է մեր Հարցն եգիպտացւոց, Պօղոսի Պօղայ, Մակարայ, Եւագրի, Յոհաննու գբնեցւոյն, Յոհաննու կարճահասակին, Նեղոսի, Արսէնի Սիսիանու, Դանիէլի, Սրապիոնի, Մակարիոսի, Պիմէնի, և այլոց մեր Հարցն ։

Համիրայ 22 Շաբաթ՝ տօն է մերյն Նիկողայոսի զմիւռնացւոյ սքանչելագործ Հայրապետին ։

Համիրայ 23 Կիւրակէ՝ Բարեկենդան սուրբ Յակոբայ պահոյն, և յերեկոյն նախատօնակէ ։

Համիրայ 24 Երկու շաբաթ՝ տօն է յղութեան սրբոյ կուսին ՚ի Յաննայէ, և այս օրէն ցերեկէն պէս կարճ ցերեկ չկայ բոլոր տարումն ։

Համիրայ 25 Երեք շաբաթ՝ տօն է սրբոյն Կոռնէլիոսի հարիւրապետին, և շմաւօնի ազգականին Քրի որ խաչեցաւ Երուսաղէմ, Պօղիկարպոսի Հայրապետին զմիւռնացւոյ, և մեր վկայիցն որք յարևելս կատարեցան ։

Համիրայ 27 Հինգ շաբաթ՝ տօն է սրբոյն Եւստրատիոսի, Օքսէնտիոսի, Եւգինէոսի, Որէստէսի, և Մարգարէոսի ։

Համիրայ 28 Ուրբաթ՝ յերեկոյին նախատօնակէ ։

Համիրայ 29 Շաբաթ՝ տօն է սրբոյն Յակոբայ մծբնայ հայրապետին, մարգարէի ձգնաւորին, և մելիտոսի եպիսկոպոսին ։

Արամ 1 Երկու շաբաթ՝ տօն է սրբոց հայրապետացն Իգնատիոսի, և Ադդէի, և մարութայ եպիսկոպոսին ։

Արամ 2 Երեք շաբաթ՝ տօն է սբյն Թէոպոմպայ եպիսկոպոսին, և Թէոնեայ վկային, և չորից զինուորացն բասոսի, Եւսեբի, Եւտիքէի, և Բասիլիդեայ ։

Արամ 4 Հինգ շաբաթ՝ տօն է սրբոց կուսանացն Խինդոսի, և Դոմնայի, և Գղերիկոսի քահանային, և երկուց բիւրուցն որք այրեցան յեկեղեցին Նեկոմիդացւոց ։

Արամ 6 Շաբաթ՝ տօն է Նախավկայ և անդրանիկ Թագաւորին մերոյ սբյն Աբգարու ։

Արամ 7 Կիւրակէ՝ յերեկոյին Նախատօնակէ ։

Արամ 8 Երկու շաբաթ՝ տօն է սբյն Դաւթի Մարգարէին, և Յակոբայ Առաքելոյն ( և յերեկոյին Նախատօնակէ ։

Արամ 9 Երեք շաբաթ՝ տօն է սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, և առաջին Մարտիրոսի ։

Արամ 10 Չորեք շաբաթ յերեկոյին Նախատօնակէ ։

Արամ 11 Հինգ շաբաթ՝ տօն է սբց Առաքելոյն Պետրոսի, և Պօղոսի ։

Արամ 12 Ուրբաթ՝ յերեկոյին Նախատօնակէ ։

Արամ 13 Շաբաթ՝ տօն է որդւոյն որոտման սրբոյն Յակոբայ Առաքելոյն, և Յովհաննու աւետարանչին ։

Արամ 14 Կիւրակէ՝ Բարեկենդան Ծննդեան պահոյն ։

Արամ 20 Շաբաթ՝ տօն է սրբոյն բարսղի Հայրապետին, և եղբօր նորին Գրիգորի Նիւսացւոյն, սեղբեստրոսի Հռօմայ Հայրապետին, և աբբայ խորին ասորւոյ ։

| | | |
|---|---|---|
| Արամ | 21 | Շաբաթ՝ ճրագալոյց Ծննդեան տն մերոյ Յի Քի, որ և ասի Թաթախ ։ |

Կատարումն տարւոյս լինի արդեամբք ՚ի փառս ամենակալին աստուծոյ, և ՚ի պատիւ ամենայն սրբոց իւրոյ ։

Ցոյցնաբերութիւնք հանդերձ՝ աւուրց տէրունականաց, և ցուցակք տօնից՝ նոր տոմարիս շարժականաց և այլն ։

| | | |
|---|---|---|
| Արամ | 22 | Ծնունդ և յայտնութի տն մերոյ Յի Քի ։ |
| Ովդան | 20 | Բարեկենդան առաջաւորի պահոյն ։ |
| Նիրհան | 1 | Տեառն ընդ առաջ ։ |
| Նիրհան | 11 | Բուն Բարեկենդան ։ |
| Շամն | 18 | Աւետեաց տօն ։ |
| Շամն | 25 | Զատիկ ։ |
| Շբաթ | 4 | Համբարձում ։ |
| Շբաթ | 14 | Հոգեգալուստ, և Բարեկենդան եղիական պահոյն ։ |
| Նախայ | 5 | Բարեկենդան լուսաւորչի պահոյն ։ |
| Նախայ | 26 | Բարեկենդան Վարդավառի պահոյն ։ |
| Ղամար | 3 | Վարդավառ, միջոց ուտիք երեք շաբաթէ ։ |
| Ղամար | 24 | Բարեկենդան սբ ածածնի պահոյն ։ |
| Նադար | 1 | Սբ Ածածին, միջոց ուտիքն երեք շաբաթէ ։ |
| Նադար | 22 | Բարեկենդան սբ խաչի պահոյն ։ |
| Նադար | 29 | Սուրբ խաչ ։ |
| Թիրայ | 6 | Բարեկենդան Վարագայ խաչին ։ |
| Թիրայ | 13 | Վարագայ սբ խաչ, միջոց ուտիքն եօթն շաբաթէ ։ |
| Դամայ | 11 | Խաչգիւտ ։ |
| Դամայ | 22 | Տօն Հրեշտակապետացն |
| Համիրայ | 2 | Բարեկենդան յիսնակաց պահոյն ։ |
| Համիրայ | 23 | Բարեկենդան սբ Յակոբի պահոյն ։ |
| Արամ | 14 | Բարեկենդան Ծննդեան պահոյն ։ |

## Աւուրք հիւրանոց պահելոյ, ըստ 'ի բնական հիւրանոցին :

Ծննդեան առաջին, երկրորդ, և ութերրորդ աւուրքն :
Տն ընդ առաջին, Աւետեաց, և Համբարձման աւուրքն :
Աւագ հինգ շաբաթ, ուրբաթ և շաբաթ աւուրքն :
Զատկի, Վարդավառի, Ա͞ծածնի, և սուրբ Խաչի երկու շաբաթ աւուրքն :
Ա͞ծածնի երեք տօնի աւուրքն, այսինքն Յղութեան Ծննդեան, և երից ամսոյն :
Հրեշտակապետաց տօնի շաբաթ օրն :
Թադէոսի, և Բարդուղիմէոսի առաքելոյ 2 տօնի աւուրքն :
Գրիգոր Լուսաւորչի 3 տօնի աւուրքն. և ամենայն սրբոյ տօնի օրն :

## Անուանք Եկեղեցպանաց, Գործակալաց եւ Դպիր, Կալկաթայ եւ Չինչրայ սուրբ Եկեղեցեացն հայոց :

| | |
|---|---|
| Պ͞նյք Խաչիկ Աստուածատուր Գէորգ<br>և<br>Կարապետ Յարութիւն Վարդանէս | Եկեղեցպանք վերին ս͞ր եկեղեցւոյն եւ գործակալք ս͞րյ Ամենափրկչին վանին : |
| Պ͞նյք Յարութիւն Վարդանէս<br>Պօղոս Որդանեան<br>Յարութիւն Գալուց<br>Գրիգոր Աբգար | Գործակալք վերին սուրբ Եկեղեցւոյն : |
| Պ͞րն Աւետիկ Նազար ... ... | Դպիր : |

## Անուանք վերակացուաց քահանայիցն Կալկաթայ սուրբ Նազարեթայ Եկեղեցւոյ եւ Չինչրայ սուրբ Յովհաննիսայ Եկեղեցւոյն :

| | |
|---|---|
| Տ͞ր Անտոն Աւագեան<br>Տ͞ր Աբրահամ Տէր Կարապետ<br>Տ͞ր Յովհաննէս Գալստան | Աւագ քահանայ<br><br>Քահանայք : |

# ԷՄԻԿԵԲԸԼ ԻՆՇՈՒՐԸՆՍ ԱՔԻՍ։

կառավարի՝ տայրէնքն՝ Հոգաբարձուք ։

Պ՜նյք Աւետ Աղաբէգ · Սարգիս Յովհան · Յարութիւն Գա-լուպ · և Պօղոս Որդանեան ։

Սեկրետարն, որ է ատենադպիր · Պ՜ն Գէորգ Փ· Բաղրամ ։

Սըրվէյըր, որ է քննիչ · Քապտան Օկս ։

Էյջէնթ · տայրէնքն՝ Գործակալք ՚ի Լոնտոն ։

Պ՜նյք Բազէթ, Փարկուսըն, Կրաֆօրտ և Կոմփանի ։

Ի Կալկաթա, յամի Տեառն 1828 ։

---

## ԾՆՈՒՆԴՔ ։

1828

Արեամ 13 Տիկին Ոսկում Գէորգ Գրիգորեան ծնաւ որդի անուն կոչեցին Գրիգոր ։

Ոչդան 2 Տիկին Թադուհի Առաքել Գրիգորեան ծնաւ որդի անուն կոչեցին Յովհաննէս ։

Նիրհան 23 Տիկին Գիշխուն Ղազար Աղաբէգեան ծնաւ որդի անուն կոչեցին Ջնթլում ։

Ադամ 22 Տիկին Հռիփսիմայ Պետրոս Յ· Պօղոսեան ծնաւ դուստր անուն կոչեցին Մարիամ ։

Ադամ 25 Տիկին Հռիփսիմայ Մէլքում Գասպար ծնաւ որդի անուն կոչեցին Մարգար ։

Շբաթ 2 Տիկին Աննայ Յովհաննէս Մարտիրոսեան ծնաւ դուստր անուն՝ կոչեցին Հռիփսիմայ ։

Նախայ 9 Տիկին Աննայ Յարութիւն Աբրահամեան ծնաւ որդի անուն կոչեցին Աբրահամ ։

Ղամար 21 Տիկին Աննայ Ջնթլում Աւետեան ծնաւ դուստր անուն կոչեցին Եղիսաբեթ ։

Նադար 5 Տիկին Նանաջան Գաբրիէլ Եղիազ Գրիգորեան ծնաւ դուստր անուն կոչեցին Ոսկանայ ։

Նայեմբ 29 Տիկին Խաչխաթուն Գրիգոր Աբգարեան ծնաւ որդի անուն կոչեցին Ղազար ·

Թիրայ 10 Տիկին Հռիփսիմայ Մինասեան Տէր Բաղդասարեան ծնաւ որդի անուն կոչեցին Յովհաննէս ։

Համիրայ 9 Տիկին Թագուհի Առուտ Մ · Վարդանեան ծնաւ դուստր անուն կոչեցին Եղիսաբեթ ·

1828

## ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՔ·

Ողդան 17 Պրն Ստեփաննոս Յ · Յովսէփեան ամուսնացաւ ընդ օրիորդ Յովհաննայ Մարթէոսին ·

Շբաթ 13 Պրն Գրիգոր Յ · Աւետիքեան ամուսնացաւ ընդ Տիկին Բեգում Յովհաննէս Յ · Վարդանէսին ·

Գռամայ. 14 Պրն Խաչիկ Գալստանեան ամուսնացաւ ընդ օրիորդ Մարիամ Կարապետ Զարութինին ։

Գռամայ 29 Պրն Վահան Մ · Վարդան ամուսնացաւ ընդ օրիորդ Թագուհի Մ · Միքայէլին ·

1828

## ՄԱՀՔ·

Ողդան 21 Պրն Ստեփաննոս Եղիազար Առաքելեանն 21 ամ և 2 ամիս հասակի ·

Ողդան 21 Տիկին Խաչխաթուն Մելքում Մանուկեան 34 ամ 1 ամսոյ և 16 աւուրց հասակի ·

Շամն 17 Տիկին Մարիամջան Սարգիս Տէր Յովհաննէսեանն, 76 ամ հասակի ·

Շամն 24 Առաքել Ոսկան Թորոսն ՚ի մանկական հասակի ·

Ադամ 11 Պարոն Մարգար Յարութիւն Վարդանէսեան 18 ամ 5 ամսոյ և 15 աւուրց հասակի ·

Ըդամ 15 Պրն Յակոբ Յովսէփն 64 ամ հասակի ։
Ադամ 24 Օրիորդ Մարիամ Պետրոս Յ. Պողոսն 'ի մանկական հասակի ։
Նախայ 10 Օրիորդ Մարիամ Մնացական Տէր Բաղդասարն 'ի մանկական հասակի հասակի ։
Նախայ 19 Նիկողայոս Խաչատուր Մալխասն 'ի մանկական հասակի ։
Ղամար 7 Պրն Յովհաննէս Յովակիմ 37 ամ հասակի ։
Նադար 17 Պրն Սարգիս Սաֆար Սալմաստցի 50 ամ հասակի ։
Թիրայ 1 Օրիորդ Մարիամ Բաղդասար Գասպարն 'ի Մանկական հասակի ։
Դամայ 1 Պրն Դաւիթ Պետրոս Սուքիանոսն 25 ամ հասակի ։
Դամայ 7 Տիկին Թիրվանդայ Յարութի. Յ. Յովսէփի 14 ամ և 7 ամսոյ հասակի ։
Դամայ 23 Պրն Ոսկան Գալստանեան Մելիքթաղեան 35 ամ հասակի ։

Ընտրեալ տօնից հեթանոսաց Բանկալացւոց, յորս փակեալ լինին գործատունք դիւանատանեան և այլն, յամի տեառն 1829։

| | | |
|---|---|---|
| Փէվրէր 8 և 9 | Կիւրակէ և 2 շաբաթ | Սըր Պօնճօմի։ |
| Մարչ 4 և 5 | 4 շաբաթ և 5 շաբաթ | Սիբհօյ Ռատրի։ |
| Մարչ 20 մինչ 22 | Ուրբաթ մինչ Կիւրակէ | Դօլ Ջատտարայ։ |
| Ապրիլ 1 | 4 շաբաթ | Բարունի։ |
| Ապրիլ 10 մինչ 11 | Ուրբաթ և Շաբաթ | Ճօրըկ Պուջայ։ |
| Ապրիլ 12 | Կիւրակէ | Սըր Ռամնօհօմի։ |
| Ջուն 12 | Ուրբաթ | Դոսսօհօրայ։ |
| Ջուն 17 | 4 շաբաթ | Ճան Ջատրայ։ |
| Ջուլայի 3 | Ուրբաթ | Ռօթ Ջատրայ։ |
| Ջուլայի 11 | Շաբաթ | Ուլտայ Ռօթ։ |
| Ագօստ 14 | Ուրբաթ | Ռակհի Պուրնիմայ։ |
| Ագօստ 22 | Շաբաթ | Ջօնմօյ Օստոմի։ |
| Սեպտեմբեր 27 | Կիւրակէ | Մօհալըյայ։ |
| Ագտօբր 3 և 10 | Շաբաթ մինչ Շաբաթ | Դուրգայ Պուջայ։ |
| Ագտօբր 27 | 3 շաբաթ | Լոյկայ Պուջայ։ |
| Ագտօբր 29 | 5 շաբաթ | Բհրատօյ Դուտիյայ։ |
| Նօվէմբր 5 և 6 | 5 շաբաթ մինչ Ուրբաթ | Ջօգհօդատրի Պուջայ։ |
| Նօվէմբր 14 և 15 | Շաբաթ մինչ Կիւրակէ | Կարտիկ Պուջայ։ |

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Յորում պարունակին աւետալոյր անցք խաղաղութ՟ պատե-
րազմին որ ՚ի մէջ Ռուսաց և Պարսից, և պատճէնք
Թղթոց աւետաբերողաց զցանկալի լուրս անդոր-
րութեան Արարատեան աշխարհին ։

# ԱՍՏՈՒԾՈՅ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ
# ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ
## ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ
## ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ

և այլոց, և այլոց, և այլոց.

Սրբազան Ներսէս Արքեպիսկոպոս Հայոց՝

'Ի վաղ ժամանակաց և 'ի դիպուածս բազմադիմիս ցուցեալ է Ձեր զհանդէս ըղձակերտութեան Ձերոյ առ Ռուսաստան, և մանաւանդ յայժմեան պատերազմի ընդ Պարսից, որոյ բարեյաջող կատարածն՝ որպէս յուսամ, պարտի լինել վաղվաղակի. Դուք անխոնջ վաստակակից եղէք Զօրաց մերոց՝ մինչև անձնագրաւ լինել անհրաժեշտ վտանգի։ Հրամանատար յատկացեալ Կովկասեան Գնդի Ղեներալ Ադիւտանտ Պասկևիչն բազմիցս ծանոյց ինձ զայսպիսի գովանի ճգանց Ձերոց՝ բացայայտելով՝ թէ ընդ բովանդակ շարունակութիւն գործոց պատերազմի՝ Դուք սըխրալի հանդիսացայք գեղօրինակ ջերմեռանդութեամբ յօգուտ Ռուսաստանի, հաստատուն պահպանեալ յԱզգի Հայոց զանաղարտ սէրն առ Մեզ ոչ միայն խոհական խորհրդովք և յորդորանօք Ձերովք, այլ և զանձն Ձեր իսկ օրինակ ընծայելով։

'Ի հրատարակութիւն այսքան օգտակար վաստակոց Ձերոց և 'ի ցոյց յատուկ բարեհաճութեան իմոյ առ ամենայն Ազգն Հայոց, իրաւացի դատեցայ դասակցել զՁեզ 'ի կարգ Ասպետութեան Սրբոյն Աղեքսանդրի Նեւսկւոյ՝ զորոյ զնշանն առաքեալ ընդ սմին առ Ձեզ՝ մնամ՛ առ Ձեզ բարեհաճ.

Նախատիպն ստորագրեալ է ի-
նքնին ձեռամբ Նորին Կայսե-
րական Մեծափառութեանն այսպէս ։

ՆԻԿՈՂԱՅՈՍ.

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ։

Ամենազուարճ օր անուանակոչութե Նորին Կայսերական Բարձրութե Մեծ Իշխան Միխայէլ Պավլովիչի տօնախմբեցաւ 'ի Ռուսաց 'ի մէջ նոյն իսկ Պարսկաստանի։ Զօրքն՝ որ 'ի Դէյ Կարղան հանդիսացուցին զայն՝ զգացեալ յանձինս իւրեանց զճշմարիտ և զսրտադիւր խնդամտութի։ Ընդհանրական ուրախութեան Ռուսաց հաղորդ գտաւ և Աբբաս Միրզայ ժառանգն Թագաւորութեան Պարսից, որ ընդ լսելն զառաջին հրաւէրն՝ փափագեաց առաջինկայ գտանիլ 'ի հանդիսին։

'Ի 10 ժամու առաւօտուն Հրամանատար Կովկասեան գնդին Գեներալ Ադիւտանտ Պասկեւիչն հանդերձ բոլոր Մեծամեծօք եկն 'ի բանակն՝ 'ի վրան եկեղեցւոյ, ուր զկնի Աստուածային Պատարագի մատուցան Տեառն Աստուծոյ աղօթք գոհութե հանդերձ արձակմամբ Թնդանօթից։ Զօրքն կային շուրջ զխորանաւ եկեղեցւոյն վարեալ յանթերի սպառազինութիւն շուքոյ։

Յետ Աստուածային պաշտօնի եկն Աբբաս Միրզայ ընդ 15 ամեայ որդւոյ իւրում՝ Խոսրով Միրզայի և ընդ ուղեկցի իւրում Գեներալ Լէյտէնանտ Սուխտելէն կոմսի։ Առաջի բանակին Աբբաս Միրզայ հանդիպեալ Հրամանատարի Կովկասեան Գնդի՝ փոխադարձ եղանակաւ բարեկամութեան ողջունեցին զմիմեանս. ապա ընկալեալ 'ի Պանկրատիեվ Գեներալ Մայիօր Գնդապետէ զանգիր յաղթարարութի և զտոմսակ զինուորական, էանց նա 'ի միասին ընդ Գեներալ Ադիւտանտ Պասկեւիչի մերձ առ Ճակատ զօրացն, եհարց զողջունէ նոցա, եկաց առընթեր իւրաքանչիւր գնդի, իւրաքանչիւր Մեծաւորի քաղցրամիք բանիւք զողջոյն մատուցանելով։ Ապա անցին զօրքն հանդիսաւոր քայլարկութբ, և ժառանգ Թագաւորութեան Պարսից մեծագոյն ուշադրութեամբ կայր 'ի կննին նոցա. մաքրութի հանդերձից, վարժութիւն ունելոյ զհրացանս, արագութի և կարգ շարժողութեանն, հաւասարութի քայլարկութեան, այս ամ 'ի զարմանս և յապուշ կրթէր զԱրքայորդին Պարսից։

Յետ այսր հանդիսի Հրամանատարն Կովկասեան գնդի հրաւիրեաց զԱբբաս Միրզայն յառանձին տաղաւար՝ պատրաստեալ վասն նր̄․ յորում էր մեծահաց նախաճաշիկ հանդերձեալ ՚ի Հրամանատարէ Թիկնապահ գնդի ՚ի Շիպօլ Գնդապետէ զոյգ ը̄ այլ աստիճանաւորաց նորին գնդի՝ տօնախմբողաց զանուանակոչութիւն Վսեմափառ Մեծաւորին իւրեանց ։

Տաղաւարն զարդարեալ էր զինուորական կարասեօք ՚ի վերայ երկուց կենդրոնական գերանաց՝ շրջապատելոց բրգամբք հրացանից․ Ճառագայթէին փայլմամբք զինուց Նշանատառք Ինքնակալ Կայսերն և Նորին կայսերական Բարձրութեան Մեծ Իշխան Միխայէլ Պաւլովիչի ․

Վասն Աբբաս Միրզայի շինեալ էր ՚ի նմին տաղաւարի առանձին սենեակ և զարդարեալ ըստ ծիսի Արեւելեայց, յորում պատրաստեալ կայր սեղան վասն երից անձանց․ ՚ի միջավայրի նստաւ Աբբաս Միրզայ, յահեկէ՝ որդի նորա, իսկ յաջմէ Հրամանատարն Կովկասեան գնդին։ Իսկ ՚ի մեծի վրանի պատրաստեալ էին յերկուց կողմանց սեղանք՝ զորովք բազմեալ էին գլխաւորագոյն անձինք ուղեկցաց Արքայորդւոյն և Զօրավարք մեր և Աստիճանաւորք․ զԱսիական կերակուրս վասն Արքայորդւոյն և իւրայնոյն պատրաստեցին խոհարարք նորա․ Հացկերոյթն՝ թէև նուազութիւն է յայսմիկ կողմունս ամենայն իրաց, էր արժանաւոր հանդիսի Վսեմափառ Պատճառի այսր տօնախմբութեան, և հազիւ պակաս երևէր քան զխնճոյս Մայրաքաղաքաց Եւրոպիոյ ։ ՚Ի շարունակել նախաճաշկին դասք դուսանաց, փողարաց և երգեցկաց փոխառփոխ հարկանէին զնուագարանս և երգէին ։ Կոչնականքն արբին վասն առողջութեան Ինքնակալ Կայսերն և Վսեմափառ Տօնակատարին աղաղակելով, կեցցէ Արքայ և արձակելով ըն-թնդանօթս․ յետոյ արբին վասն առողջութեան Աբբաս Միրզայի և որդւոյ նորա՝ ցանկայողաց խաղաղութեան․ և ՚ի վերջոյ՝ վասն առողջութեան Հրամանատարի Կովկասեան գնդի ։

Զկնի վախճանի խնճոյից Աբբաս Միրզայ գոհացեալ զկոչնատերանց ել ՚ի վրանէն․ եկաց առ դուսանօքն

և երդեցիկօք, և ապա չոքաւ ՚ի տուն ։ Համօրյ թուեցաւ նմա յոյժ նուագածութիւն մեր ։ Պարսիկք ՚ի զալիմնս գըրաւին ընդ համաձայնութիւն բազմաթիւ գործեայ երաժշտութե̄ ։

Խնջոյք այս պատկերացուցանէր զնորերևոյթ և յիւրում տեսակի Աշխարհապէս զանօրինակ տեսարան ։ Արքայորդին Պարսից շրջապատեալ ՚ի Ռուս Գեներալաց, Մեծամեծք Պարսից համախմբեալք ընդ Աստիճանաւորաց մերոց՝ Ղազախք և Ջօրականք մեր խառնեալք ընդ Մարաց և ընդ Պարսից, անհամար խուռնեայ բազմութ̄ի ժողովրդեան և շինականաց՝ հիացելոց ընդ զօրութիւն Ռուսաց և ընդ քաղցրաբարոյութ̄ի, այս ամենայն ընծայէր ակն տեսարանի զանստոր և զսխրալի երևոյթ լինի ։ Անդստին ՚ի սկզբանէ Թագաւորութեանն Պարսից չիք ուրուք տեսեալ, թէ հպարտ և անմատոյց Շահք կամ զաւակք նր̄ յայց ելյեն կամ տայցեն զձեռս և կամ սեղանակից լինիցին ումեք. և որդիք իսկ նր̄ չարժանանան այսմ պատուոյ և չհամարձակին նստիլ առաջի Հօր ։ Զօրք Ռուսաց և եթ յաղթահարեալ զանթիւ խոչս անպարտելին Պարսից, պարտեալ ՚ի դաշտին պատերազմի զգուշաւորակս նոցա կարօղք եղեն նանրացուցանել և զչարաւոր սնապաշտութիւնս ։

Տփխիս ։ 4 Դեկտեմբերի, 1827 ։ ՚Ի Տպ. Ռւս. Հայոց ։

Կառավարութեան Սրբոյ Էջմիածնի,

Ողջոյն Տէրական մատուցանեմ յարգութեամբ ։

Շնորհաւորելով Ձեզ և ամենայն որդւոյ ողջունի Տանն ԱԾ զկենդաստու օր Ծննդեան և յայտնութե̄ Միածին Որդւոյ ԱԾ և Տեառն մերոյ Յի Քի, մաղթեմ զփրկաւէտ շնորհ մեծ մարդասիրութեան Նորա Ձեզ ամենեցուն և զամենայն գլխութիւն մխիթարութեանց փրկելոյս անձառ տնօրէնութեամբ Նորա այժմ և միշտ ։

Հանդէս տօնախմբութեանց բոլորեալ լինէր օրինա-

կական իմն քրիստոնէական մեծվայելչութք , եթէ ոչ ան-
դէն 'ի ժամու յառաջ մատուցանելոյն 'ի գետ զխաչն աւե-
նապատակաւն՝ բացեալ լինէին երկինք յորդահոսու՝ ձեանց
զգրունս · այլև հանդերձ այնու ամիւ ըստ աւժանուրելոյ
Ամենաբանականին , նորադուարձ այսմ Ածազարդ մեծվայ-
ելչութեանց փրկական տօնի՝ աննահանջելի բարեպաշտութբ
պարզ և անխարդախ քրիստոնէավայելուչ խորհրդոց հան-
դէս երկուց եկեղեցեաց Ռուսաց և Հայոց ժամադիր մի-
մեանց՝ յառաջեալ յիւրաքանչիւր կողմանց 'ի գլուխս միա-
բանութեց երկուց Ճանապարհաց ընդ զառ 'ի վայրն որ անէ
'ի կամուրջ ։ Առաջինն դիմեալ 'ի կողմանց Հիւսիսոյ 'ի սբ
Սարգիս եկեղեցւոյն Հայոց բնակելոյ 'ի Զորագիւղ · և
երկրորդն 'ի Հարաւոյ 'ի սբ Նիկողայոս եկեղեցւոյն Ռու-
սաց որ յամրոցի անդ յԵրևան , սրբեալ օրհնութեամբ և
նուիրեալ նախընծայ տաճար սրբուն Ամենասուրբ Երրոր-
դութե ։ Շնորհաւորութբ միմեանց միացեալ 'ի միախառնմբ
և ձայնակցեալ իւրաքանչիւր երգաբանութեամբ ունելով
յառաջոյ զՃաՃանչաւէտ բոլորակ խաչին՝ 'ի ձեռս Քա-
հանայի Հայոց · և 'ի թիկանց նորա զպատկեր գեղազարդ
ամենասուրբ Աստուածածնին 'ի գիրկ այլում Քահանայի ·
և 'ի թիկանց նորա զմեծադիր հրաշակերտ Ածընկալ սբ
խաչն՝ սքօղեալ 'ի վերայ սկտեղ ամբարձեալ ձեռամբ
երկուց Քահանայից · և 'ի թիկանց նորա զմեռոնն եօթ-
նալոյս կանաչադեղ սքօղեալ յոսկեզօծ աղաւնակերպի բառ-
մեալ 'ի սկտեղ վերապատուեալ 'ի ներքոյ քառանկիւնի
ամպանման գեղատեսիլ վայելչազարդ հովանւոյ 'ի ձեռս
զգեստաւորեալ պատարագիչ Վարդապետի , և 'ի թիկանց
նորա մեք՝ Արհիական մեծափառութբ սրբազան զգեստուց
ունելով 'ի ձեռս զԳաւազան և զսբ խաչ · և ընդ աջմէ
ամենեցուն և յահեկէ զմի մի սպիտակ 'ի ձեռս Դպրաց եր-
կուց · և յառաջոյ սուրբ Նշանայն նշանակելոյ բուրվառ-
մի մի և երկու երկու · և հանդէս բազմութեան եկեղե-
ցականայն հանդերձ վառուք և մոմեղինօք յերկուս կարգս
ձգեալ էր երկար կողմայն զսրբազան տէրունականս ։ Քա-
հանայք առ հասարակ ունելով զփորուրար և զշուրջառ-

պատուական · և Դասապետք Քահանայից նաև պաշտա-
ւորս , ունելով ՚ի գիրկս զԱւետարանն սուրբ ։ Եւ Է աջ-
մէ իմմէ և յահեկէ Քահանայք Ռուսաց շուրջառօք և
փորուրարօք ՚ի ձեռս առաջնոյն խաչն Փրկչական եղեալ
՚ի գլուխ Թագ խաչին · և ՚ի գիրկս երկրորդին Աւետա-
րան սուրբ ։ Եւ ամենայն Զօրապետք Ռուսաց խուռն բազ-
մութեամբ զհետ ընթացեալ Նորին Գերազանցութե Գե-
ներալ Լէյտենանտ Աֆանասի Իւանիչ Կրասովսկւոյ առ
ամենաբարեպաշտի և ամենաերկիւղած գերագոյն Աստուա-
ծասիրի և Կավալէրի պարայածեալ զառաջաւորօք կարգի
Հոգևորականաց՝ ունելով զզօրսն առ հասարակ նախապատ-
րաստեալ կարգ կարգ ընդ աստիճանս զառ ՚ի վայրին որ
յատորոտ բերդին յԱրևմտից կողմանէ սկսեալ ՚ի վերուստ
մինչ յեզրն առուին հազարաւոր բազմութեամբ · և զքանի
մի Թնդանօթս ամբարձեալ ՚ի գլուխ քարափնեայ բարձրուէ
յԱրևմտից կողմանէ · և ժողովուրդքն Քրիստոնէից և
Այլազգեաց խուռեալք բազմութիւնք արք և կանայք Է ա-
մենայն կողմանս ուստի երևելի լինէր սալայատակն տախտա-
կեայ ուր կատարելոյն էին օրհնութիք ջրոյն , Է մէջ նոյին
անցեալ հանդէսն եկեղեցական գնայր իմանալի իմն մեծագոյն
զգայողութե այցելութեց երկնից · և յանգանելն ընդ դուռն
կամրջին՝ նուագարանք Ռուսաց կարգաւորեալք ընդ երկայ-
նութե կամրջին ՚ի Հիւսիսոյ կողմանէ , սկսան հնչեցուցա-
նել իւրաքանչիւր զիւր ձայն հրաշաձայն և այնպէս զերգ
Է երգ դաշնակցեալ Հոգևորականաց , և մարմնաւորակա-
նաց գնային ժամանէին ՚ի տախտակակերտ սալայատակն և
կարգեալ յանցս Ճանապարհին զայլն առ հասարակ՝ զխաչս
և զմոմեղէնս և զամենայն զվայելչականսն հանդիսին Ածա-
յայտնութեան · Խաչաբարձ Քահանայք և Վարդապետն
մեռոնակիր մեօք հանդերձ կացեալ ՚ի վերայ տախտակացն
և կատարեալ զաղօթսն օրհնութե ջրոյն · ահա իբրև եհաս
ժամ արկանելոյ զխաչն Ռուսաց և Հայոց՝ ՚ի ջուր Հրազդան
գետոյ՝ և հեղլոյ զմեռոնն սուրբ · բայցն հրացանք ամենայն
հանդիպահայեաց զօրականացն բազմութեանց հազարաւո-
րաց յԱրևելից կողմանէ գետոյն , և Թնդանօթք յԱրևմտից

կողմանէ․ և յաւարտ ընթերցուածոյն առեալ զամենայն զՍրբութեան նոյին կարգաւ և միաբան ընթացեալ նոյնպէս մինչև ցգլուխս միութեան Ճանապարհայն․ անդէն բաժանեալ ողջունիւ միմեանց, գնացին Ռուսք յեկեղեցի իւրեանց ՚ի բերդն․ և Հայք յեկեղեցի իւրեանց ՚ի սուրբ Սարգիս և աւարտեալ զնախատօնակ սրբոյն Յովհաննու Մկրտչի ըստ օրինի․ գոհացաք զմարդասիրէն ԱՅ և զփրկչէն մերմէ Յսէ Քսէ արժանաւորողէն զմեզ այսմ ամենայնի։

Մատուցանեմ Ձերում հանդիսի զմեծ գոհունակութիւն իմ յաղագս մասնակցելոյն մեզ զայս ամենայն ըզզարդս և զզգեստս եկեղեցականս․ եւս և զՈրբեդայս և ըզՍարկաւագունս և զԴպիրս․ որովք կատարիւր ըստ կարի ՚ի մէջ անկրթութեանց Հոգևորականաց մերազանց վայելչական իմն տեսարան․ շնորհակալ եմ և յաղագս առաքելոյն զԲարձր Արժանապատիւ Յովսէփ Վարդապետն՝ որ որչափ զօրէր, ոչ խնայէր զկար իւր ՚ի բարւոք կարգադրութիւն։

Եւ՜ յանձն առնելով շնորհաց յաւիտենական ողորմութեանց ԱՅ զազգն մեր և զմեզ զամենեսին լրութեամբ սուրբ եկեղեցւոյ մերոյ․ եմ և մնամ Ձեզ իսկական վերապատուութեամբ միշտ ՚ի սրտէ բարեացակամ։

1828․ Յունվարի 8․ Խոնարհ ծառայ
ձերկամ։ Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս։

# ՀՐԱՄԱՆ

## ՅԱՏԿԱՑԵԱԼ ԶՕՐԱՑ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՆԴԻ․

Աջ Ամենաբարձրելոյն պսակեաց զվաստակս Ձեր արժանաւոր խաղաղութեամբ վասն Ռուսաստանի․ Արդարութիւն գործոյն մերոյ հանդիսացաւ․ քաջութիւն Ռուս զօրականաց նուաճեաց զգոռոզութի թշնամեաց, և հաստոյց նոյա զփոխարէն անիրաւ յարձակմանն ՚ի Սահմանս Մեր․

Արիութիւն Ձեր, նախանձելի ջերմեռանդութի և հաստատութիւն, որովք տոկայիքդ և տօթոյ՝ ամառան և խստութեան ձմեռան և ըստ դժուարութեանց պատերազմի յաշխարհ ամայի, մարտուցեալ ընդ թշնամեաց և ընդ նմին իսկ բնութեան, գտին զերախտագիտութիւն իմ առ Ձեզ և զշնորհակալութիւն սիրելի Հայրենեաց մերոյ, բայց առաւել արժանագոյն են հեզահամբոյր կենցաղավարութիւն Ձեր ընդ պարտելոյն, պահպանութիւն ստացեալ աշխարհաց և քաղաքաց, հաստատուն զգուշութիւն ըստ գերօրինակ կարգի և ստորակարգութեան զինուորաց: Նոյն իսկ թշնամիք Ձեր՝ ընկճեալք ՚ի յաղթական զինուց Ռուսաստանի հիացան ընդ վեհանձնութիւն Յաղթականացդ: Դուք լիաչափ ճշմարտեցիք զակնկալութիւնս իմ:

՚Ի հրատարակութիւն բազմապատիկ աշխատանաց Ձերոց վասն Աթոռոյ և Հայրենեաց՝ Հրամայեմ ամենայն Զօրականաց՝ որք մասնակից գտան գործոց ընդդէմ Պարսից յամին 1826, 1827 և 1828 կրել զառ ՚ի Յինէն հաստատեալ Միտալ մակագրութեամբս՝ Յաղագս պատերազմին Պարսից. խառն ժապաւինօք Ասպետութեան Սուրբ և Յաղթական Մեծ Նահատակին Գէորգայ և Առաքելապատիւ Սուրբ Իշխանի Վլոդիմիրի:

Եղիցի նշանս այս յիշատակարան արիութե և գերօրինակ հեզաշունչ կենցաղավարութեան Ձերոյ: Եղիցի նոր գրաւական հաւատարիմ ծառայութեան Զօրացն Ռուսաց և իմոյ Ձեզ շնորհապարտութեան:

՚Ի Ս. Պ. Բուրգ.
15 Մարտի 1828:

՚Ի վերայ նախագրին բուն ձեռամբ
Ինքնակալ Կայսերն ստորագրեալ է

ՆԻԿՈՂԱՅՈՍ:

Ամենաբարեպաշտ Պատուելի Երամից սրբոյ լուսաւորչին Հայոց հոգևորականաց և մարմնաւորականաց բնակեցելոց ՚ի Կալկաթա, Մեծագործ քահանայից աւագաց և եղելոց յիւրաքանչիւր կարգի. և Գերապատիւ ազգասէր իշխանաց՝ Հոգաբարձուաց հասարակութեան. և վերատեսչաց սրբոյ եկեղեցեաց երեցփոխանաց և Գանձապետաց, և առ հասարակ ամենայն ժողովրդականաց՝ արանց և կանանց՝ մեծաց և փոքունց. ողջոյն քրիստոսատուր նուիրեմ բազմապատիկ օրհնութեամբ:

Օրհնեալ Տէր Ած խորհելի՝ որ յայց եւ մեզ և արար զփրկութն ժողովրդեան իւրոյ, երգեալ ՚ի Ծննդեանն սրբոյն Յովհաննու քահանայն Զաքարիա: Զնոյն այժմ երգակցեալ նմին՝ աւետարանեմ ձեզ զմեծամեծայն Աստուծոյ ՚ի հասեալ ժամանակի յայսմիկ վասն անձառ մարդասիրութ փրկութեանցն նորա Հայրենեաց հայաստանի արարատեան աշխարհի՝ և բազմութեան Հայկազանց տառապելոց ընդ ամենայն սահմանս Արարատեանի՝ հզօր զօրութ և բազկաւ օծելոյն իւրոյ ինքնակալի Ամենայն Ռուսաց և մեծ տիեզերակալի ԹԱԳԱՒՈՐ կայսր ՆԻԿՈՂԱՅԻ առաջնոյ:

Լուեալ իսկ Թերևս կանխաւ յառաջ, զի յամի 1826, յամսեանն յուլիսի, յանկարծակի անկեալ զօրաց պարսից ՚ի վերայ բնակչաց մերձակայ սահմանաց Ռուսաց ի գաւառն շիրակայ՝ յարցախայ, որ է ղարաբաղայ, շագուայ և շամախոյ, կոտորեցին՝ գերեցին ուր և կարացին զբազումս ՚ի Հայոց և յաւետարանական ժողովրդոց. այն է՝ նեմեցաց՝ ամօք յառաջ վերաբնակելոց յեւրոպիոյ ՚ի սահմանաց վիրտէմբուրգայ ՚ի սահմանս վրաստանու՝ տեղակալելոց ՚ի մասին Հայաստանի սոմխեթիայ կոչեցելոց: Արշաւանք՝ յիրաւի զարհուրագին յոյժ՝ ոչ յաղագս ահեղ զինուորութեանց նոցին, այլ յաղագս բազմաթիւ յարձակմանց նոցին ՚ի ժամու բարեկամութեան և ՚ի ժամանակի անպատրաստութեան քաջազէն զինուորութեան Ռուսաց և ամենայն հասարակութեան հաւատարիմ հպատակաց քրիստոնէից՝

Հայոց և վրաց , յորժամ իսկոյն միաբանեալն ընդ նոսա և ամենայն հասարակութիւնք հպատակեալք 'ի մահմեդականաց բնակչաց 'ի սահմանս ամենայն նշանակեալ գաւառաց ։

Այսմ հետևեալ ապստամբութեան իւրեանց յառաջ՝ զառաջինն յայնժամ բարեբախտ եղեն պարսիկք առանց դիմակալութե հակառակորդաց ուրեք՝ տիրել հսկայապէս իւրն ամենայն նախագրեալ տեղեացն • և տանջել՝ կեղեքել մանաւանդ 'ի նուաթի պքապուան 'ի Հայոց • յորժամ նոյին դիմադրաւ մնաց միայն 'ի ղալաբաղ ամրոյն նորին 'ի գլուխս լերին՝ շուշի անուանեալ քաղաք • յորում էին բազմութիւնք Հայոց և գունդ փոքրիկ սահմանակալ զօրաց Ռուսաց • իսկ բնակիչք 'ի մահմեդականաց թէպէտ և իշխանաւորք և կարողագոյնք, այլ ոչ այնքան բազմաւորք • յոյր սակս մեծ բանակն պարսից էր կառավարութեամբ ժամանգի տէրութեանն պարսից զաւուրս քառասուն և ինն զբաղեալ 'ի պաշարման նորին , մարթ է ասել , թէ այն եղև յայնմ ժամանակի աւազակաբար ասպատակութեան նորին՝ առիթ ազատութեան ազգերոյն յամենայն սահմանս վրաստանու 'ի վերահասեալ վտանգէ նորին • յորժամ կարողացեալ զօրաց Ռուսաց եղելոց 'ի տարակայութեան ի զանազան տեղիս իւրեանց հաւաքել 'ի մի • և հանդիպանալ ախոյեան հզօր յանդիման թշնամեաց 'ի սահմանս Ելիսավետօպօլոյ, այն է՝ գանձակայ 'ի շամքօռ անուանեալ նահանգի ընդ զօրապետութեամբ ղեներալ մայօր հայկազն քնեազ Մադաթովի • որ և յաջողութեամբ Աստուծոյ պարտեալ սակաւաւորօք զմեծ բազմութիւնն պարսից՝ կոտորեցին զբազումս • գերեցին զհարիւրաւորս • առանին և զմեծ զօրագլուխն նոցա զքեռի յիշեալ շահզադային զԱմիրխան սարդար • և 'ի նմին իսկ աւուր տիրեալ Ելիսավետօպօլ քաղաքին և ամենայն սահմանաց նորա յետ ոչ բազում աւուրց հասեալ անդ առ նոսա և ղեներալ լէյտենանտ Իւան Փէտրիչ Պասկևիչ միւս ևս փոքրիկ գնդաւ զօրաց՝ այն ինչ մտադիր լինէր նա դիմել 'ի վր մեծ բանակի արքայորդւոյն պարսից՝ որ պաշարեալ ունէր զամրոյն շուշի • ահա ինքն արքայորդին 'ի բաց լքեալ զպաշարումն՝ դիմէ անհնարին յառ-

մամբ ՚ի վերայ բանակին Ռուսայ՝ որ յելիսաւէտօպօլ՝ ա-
նուաղ զվրէժ հարուածոյն նոյա խուրդն․ այլ զի Տէր է՝ որ
յաջողէ զամենայն յամի, անդ ևս հզօրացեալ արխայէս բա-
րեբաղդ Զօրապետ գեներալ լէյտենանտ գեներալ մադ-
ատով Պասկեւիչն օգնականութէ՛ երկնից՝ զգլուխ հարեալ
բազմութեան Թշնամեաց խուռնքն սակաւաւորօք՝ ցրուեալ
հալածեաց զբուն բանակն պարսից, գերեալ զհազարաւորս
՚ի հետևակաց նոցին, և սատակեալ զբազումս ՚ի հետևա-
կաց և ՚ի հեծելոյ՝ յորժամ ինքն արքայորդին սրբաւար
արշաւանօք նժոյգ երիվարայ հազիւ ուրեմն փախստակա՛ն
անցեալ է երասխ ՚ի սահման իւրեանց՝ մնացաւորս զամէն
ապրեցուցանէ յահեղաստ հրոյ և սրոյ յաղթողաց։ Եւ
եթէ զոյր պաշար բանակին՝ յայնժամ իսկ զհետ ընթացեալ
նոցա զօրէր մտանել ՚ի դաւրէժ ՚ի նմին իսկ ամենայն
սեպտեմբերի բանակն Ռուսայ․ այլ զի նորոգ կարօտէր
ա՛մ պատրաստութէց պատերազմականաց վասն անակնկալ
պատահմանցն այնպիսի պատերազմութեանց․ ոչ առհա-
ռաչեաց ինչ յահարկուն Թշնամեաց միայն՝ անցեալ ընդ
երասխ, և անդի ևս փախստական արարեալ զարքայորդին,
և տիրեալ նահանգայ այնոցիկ՝ վերադարձա՛ անդրէն վ՛
վերաժամանելոյ ձմեռան։

Տէրութիւն ռուսայ կարգաւորեալ զա՛մ յընթացս
ժամանակաց սատակու՛ ձմերայնոյ՝ իսկ և իսկ ընդ բանիլ
դարնան յառաջ խաղացուցեալ զզօրսն իւր ՚ի 6 ապրիլի․
հասին նախնթաց զօրք նորին յԱթոռ սուրբ էջմիածնի ՚ի
13 ապրիլի 1827 ամի․ է որս և մեք Թէպէտ ոչ զինակիր
այլ որպէս զինուորակից փրկական խմբի նոցին՝ աղօթիւք
և հարազատութեամբ հոգւոյ յետ 15 ամաց պանդխտու՛
մերոյ վիճակաւոր արքեպիսկոպոսութեամբ ՚ի սահմանս
վրաստանու արժանի եղաք ո՛չ ըստ մերոյ արժանաւորութէց՝
այլ ըստ առատ մարդասիրութէց Աստուծոյ, համբուրել
զվափագելին հոգւոյ մերոյ․ և լինիլ ականատես սքանչելի
ներգործութեանց այցելութեանց երկնից ՚ի փրկութիւն
մերոյ հայրենեաց և ամենասիրելի համազգեաց՝ որով և
գտանիլ բարեբաղդ՝ լինիլ աւետաւոր առ ձեզ և առ ա՛մ

ազգս Հայոց ։ Մեծ արար Տէր զառնել իւր ընդ մեզ ․ և մեք եղաք բերկրեալք ։ Քանզի ով ամենաբարեպաշտ Արքայք՝ որդիք հայրենեաց Հայաստանի՝ անշօշափելի էր այս յամ նախատեսութեան մարդկային մտաց ․ զի յետ տարաժամ ընթացից պատերազմական գործոց ամսօրեայ ժամանակօք ՝ այն ինչ արքայորդին պարսից Աբբաս միրզայ Թողեալ ըզմեծ բանակն Ռուսաց ՝ի Նախիջևան գաւառի՝ ոչ անգոռնելի խոհական ընտրութեամբ՝ ստուար բանակաւ եկեալ զտեղի կալեալ մերձ ՝ի սուրբ կաթուղիկէ էջմիածին ՝ի տեղի ապահով ըստ ժամ՝ ամրակուռ դրութեանց ՝ի դաշտին օշական գեղջ ․ և առաքեալ զգունդ հետևակ զօրաց հանդերձ Թնդանօթիւք ՝ի 13 Օգոստոսի յաւուր տօնի սրբոյ կաթուղիկէ էջմիածնի ակիզբն արարին հարկանել Թնդանօթիւք ոչ զկաթուղիկէ եկեղեցւոյն՝ այլ զպարիսպն ամրոցի նորին զաւուրս 4 ․ մինչև ՝ի հինգերորդումն՝ որ օր տօն և եօթներորդ էր ամսոյն ՝ փութացեալ յօգնութիւն բարում գոլութեան արժանաւոր քաջ ղեներալ լէյտենանտ Աֆանասի իւանիչ կրասովսկի 2500 հետևակօք՝ և 500 ձիաւորօք ՝ երկոտասան Թնդանօթիւք՝ ՝ի բանակէն՝ որ յապարան առ ստորոտով լերինն արայի ։ Զորմէ լուր առեալ Թշնամեաց ՝ի մէջ գիշերի՝ Թողեալ զպաշարումն՝ գանխուլ ընթանան միանան ընդ զօրս մեծ բանակին իւրեանց ․ և ընդլուսածագն առաւօտուն զգացեալ մեր վասն գալստեան օգնական զօրաց՝ և գոլով ծանօթ մեծութեան բանակի Թշնամեաց և ամրութեանց տեղւոյն և անձկութեանց քարակակառ ճանապարհայն՝ ընդ որ անցանելոց էին զօրքն Քնազօրք ՝ և ամենայն հնարաւորութեամբ նախապատրաստ աղօգայթիցն լարելոյ շուրջ զճանապարհաւն ՝ յուսացեալք յօգնականութիւն Տեառն ԱԾ միաբան առ հասարակ փութացաք ՝ի սուրբ եկեղեցին ․ և մատուցեալ զջերմեռանդական աղօթս բազում արտասուօք խնդրեցաք զօգնականութիւն երկնից ․ և յետ կատարման պաշտամանցն ելեալ ՝ի բարձունս տանեաց սրբոյ կաթուղիկէին՝ կայաք ՝ի դիտին ։ Եւ ահա ՝ի գալ ժամանել բարձր փառաւորագոյն զօրաց Ռուսաց ՝ի տեղին՝ ուր յառաջ քան զՀ 1477 ամ ՝ այն է յամի Տն 351 ՝

Վահան ամատունի հզօրացեալ Աստուծով՝ նիզակահար յերկիր կործանեալ զզօրագլուխն Տիւսխտակենաց կա- կատակենաց՝ վանեաց զզօրսն նորին. անդէն 'ի նմին տեղւոջ՝ երկրորդ անգամ այժմ արքայորդին պարսից զպատերազմն իւր սաստկացուցեալ յիններորդ ժամու յառաջ քան զկէս- օրն. 'ի լրման ութն ժամուց ահեղ պատերազմութե՟ ընդ- արձակեալ զՃանապարհ իւրեանց՝ գրեթէ խորտակմամբ ամ՟ զօրուեց Թշնամեաց հսկայօրէն յոյժ յոյժ, անցեալ ը՟ ամ՟ դժուարութիւնս քարակիրճ Ճանապարհայն՝ եկին ժամա- նեցին 'ի սուրբ կաթուղիկէն էջմիածնի ա՟ծազօր գունդքն հզօրաց երկոտասան Թնդանօթիւք իւրեանց. Այս քաջութ՟ նոյա սասանեցուցիչ էր Թշնամեաց, այլ այնու ամենայնիւ առդիոլեցաւ և մեզ տրտմութի մեծ. այն զի հետևակազօրք ռուսաց ժամս 12 Ճանապարհորդեալք ը՟ անջուր անապատ՝ և յանդիման արեգակնակէզ օդոյ վՃարեալ զպատերազմն ութն ժամուց՝ ընդ ժամանելն 'ի ջուր այգեստանեայ կաթու- ղիկէ էջմիածնի՝ գունդն առաջին անցեալ յայլահոսի գայր ժամանէր յԱԹոռն և գունդն վերջին ընդ նորին գերազան- ցութեան քաջամարտ ղեներալ Աֆանասի իւանիչ կրասո- վոկւոյ կալեալ զառաջս Թշնամեացն գայր պատերազմաւ. գունդն որ 'ի միջի որպէս 'ի տեղի ապահովի՝ բացակայ յառաջնոյն և 'ի վերջնոյն անկանի 'ի մէ՟ ջրոյն՝ գոլով յաղթահարեալ յուժգնութեց ծարաւոյ. ուր 'ի մէ՟ հասեալ հեծելազօրաց Թշնամեաց դարանակալաց մերձ առ նո՟ սրահար նիզակահար սպանանեն զանկեալսն 'ի մէ՟ ջրոյ զհարիւրաւորս քանիս. գերի վարեն և աւելի քան զերկերիւրս՝ մինչև ցժա- մանել առ նո՟ վերջին բանակին, որ հալածեալ զԹշնամին զապրեցուցեալսն 'ի սրոյ և 'ի գերութեց նոցին՝ էած ընդ իւր 'ի ս՟ էջմիածին. Ուրախութի լինէր Թշնամեաց արդարև տրտմութիւն մեր այս, եթէ հարուածք իւրոյն և դիակունք անկելոցն չլինէր հնդապատիկ առաւել. Զարհուրեալ արքայորդւոյն փորձառութեամբ սակաւաւորաց զինուորու- Թեանց ռուսաց, այն ինչ ղեներալ կրասովոկի պատրաստէր զիւրսն ընդարձակ Ճանապարհաւ անկանիլ 'ի վերայ բանակի նոցին՝ կոչելով յիւր յօգնութի փոքրիկ գունդ այլ 'ի բանա-

կէն. նա՛ որ առեալ ունէր զչափ այսորիկ պատերազմունց՝ ոչ ևս կարողացեալ ապաւինել յամրութեան տեղւոյ իւրումն բանակին՝ և ոչ 'ի զօրութեան զինուց իւրոյն բազմաւորաց, յերրորդում աւուր խոյս տուեալ անտի 'ի յօշականայ՝ և անցեալ ընդ Հրազդան գետ, եմուտ 'ի խորաձորս ծաղկոնեայ նահանգի. ուր զկնի աւուրց առեալ զլուր մերձադարձի գլխաւոր կառավարչի ամ զօրաց նորին բարձր գերազանցութե ղեներալ Օտինֆանտերի ղեներալ ադիւտանտ Պասկեւչի 'ի խնդիր իւրումն բանակին յառաջ քան զմերձենալ նորին առ ինքն երագեալ փախստական՝ և անցեալ ընդ երասխ առ ստորոտով լերինն արարատայ ընդ դժուարընթաց ճանապարհս՝ չոգեաց 'ի խոյ քաղաք. և գուցես թէ երբէք մինչ խալաւ զյոյս իւր 'ի վերայ իւրոյն ամ զօրութեանց. զի յետ այնորիկ ոչ ևս միաանգամ կարողացաւ ընդ առաջ ելանել սակաւուց կամ բազմութեանց զինուորութեանց Ռուսաց:

Ղեներալ ադիւտանտ Պասկեւիչ 'ի 4 ամսեանն սեպտեմբերի ժամանեալ՝ զբանակ հարեալ յանդիման բերդին Երևանայ յաւուրն երկրորդի խաղացոյց զբանակն 'ի սուրբ կաթուղիկէն էջմիածին, և 'ի 11 նորին ամսոյ օգտակարագոյն խորհրդածութբ յառաջեալ դէպ յարևմուտս էջմիածնի 'ի գաւառն արշարունեաց, և բանակեալ մերձ յերասխ գետ՝ ուր էր 'ի կողմանէ հիւսիսոյ նորակառուցոյ ամրոյն անուանեալ Սարտարապատ. և յարևմտից կողմանէ երևելի գիւղն Հայոց յայնկոյս երասխայ անուանեալ կողբ. յորում իբրև յամրոցի ինքն ժողովեալ պահէր հիւսէյին ղուլի խան սարտարըն երևանու զբնակիչս աշտարակի, օշական և բարձրար անուանեալ գիւղօրէից Հայոց՝ և զշտեմարանս բաւական ցորենոյ և գարւոյ. Ազդեցութեամբ իւիք թերևս նախախնամութեանց երկնից՝ զմտաւ ածեալ մեր անդէն 'ի բանակէն, և առաքեալ անդր զոմանս 'ի մերայնոց՝ հրաւիրեցաք զերևելիսն 'ի Հայոց փութալ երագել առ մեզ 'ի բանակ անդր հեռաւոր յինքեանց իբրև չորից ժամուց ճանապարհաւ. որք և ըստ ազգական ամենաջերմեռանդն սիրոյ և հարազատութեան իւրեանց ժամանեալ առ մեզ խնդրոյն 'ի չորրորդ պահու գիշերոյն՝ ընդարձակեցին մեզ ամ անձ-

կութիւնն այն վայր· քանզի որ անծանօթ էր մեզ յառա-
ջագոյն, նք̃ յայտնեցին մեզ վն̃ շտեմարանայն ցորենոյ և
գարւոյ՝ որոց առաւել էր կարօտութիւնն ահաւոր զօրաց
յայնոսիկ աւուրս· յետ որոյ գտեալ զայն պաշար բաւական՝
հաստատեաց զմիտս իւր պաշարել նախ զայն ամրոց նորա-
կերտ· ուր կայր հասանխան եղբայր սարտարին քանի հազա-
րաւորօք բերդապահ զօրաց· և յաւուր ինն և տասն երրորդի
ընդ երեկս որ լուսանայր ունէր օրն երեքշաբաթի 'ի 20 սեպ-
տեմբերի, զարհուրեալք 'ի կործանմանէ հարաւային պարս-
պաց ամրոցին 'ի հարուածոց մեծամեծ ռմբաց աստանի անտա-
նեալ պաշարօղ թնդանօթից· յուսացեալ 'ի պաշտպանութ̃
գիշերային խաւարի՝ բացեալ զդուռն արևելեան՝ աճապարեաց
'ի փախուստ ամ̃ զօրօք իւրովք՝ սկզբնապատճառ կործե-
ցեալ այսոցիկ ուխտադրուժ պատերազմունէց Հասանխան·
որում զհետ ընթացեալ հեծելազօրաց՝ զհարիւրաւորս քա-
նիս կոտորեցին ուր և գտին. և այնպէս բանակ զօրաց
Ռուսաց մտեալ յամրոցն՝ տիրեաց խաղաղութեամբ, գտեալ
'ի նմին զլիութիւն առատութեանց ցորենոյ՝ գարւոյ և զանազան
հանդերձանաց պատերազմականաց: Յերրորդումն աւուր թո-
ղեալ անդէն զբերդապահս՝ երագեաց գլխաւոր կառավարիչն
զօրաց մեծ բանակաւն յերևան քաղաք· և պաշարեալ զան-
մատչելի կարծեցեալ մոլորեցուցիչն յուսոյ ամենայն ասիա-
կանաց՝ զամրոցն նորին յարևելից հարաւոյ՝ կործանեաց նովին
թնդանօթիւք և զպարիսպս նորին զարտաքինն և զներքինն 'ի
միջոցի 6 աւուրց· յորժամ ևս այն ինչ դարձեալ խուճապէր
'ի փախուստ փախուցեալ 'ի սարտարպատոյ՝ համբաւոք
անոտեաց հռչակեալ 'ի զօրապետութեն իւրում անարին Հա-
սանխան, յայնմ ևս վրիպեալ 'ի յուսոյ իւրմէ ապստամբութ̃
ամ̃ զօրաց և բնակչաց յիւրոյն հնազանդութեց զարհուրելոց
'ի վերայ հասեալ համայնակորուստ վտանգէ յետ կործան-
մանցն պարսպաց՝ բայց ընդդէմ կամաց նորին դուռն ամրո-
ցին· յետ որոյ յուսացեալ նա 'ի հովանաւորութ̃ նորակերտ
աղօթարանի կառուցելոյ յեղբօրէ իւրմէ՝ անդէն 'ի սենեկի
միում նորին պատսպարեցաւ կալանաւորիլ 'ի սասանեցուցչէ
ամենայն պարսկական զինուորութեանց 'ի ղենէրալ կրասով-

կւոյ 'ի I Դեկտեմբերի · ուր ես կարգաւորեալ զհարկա-
ւորան իւրոյ կառավարութեանց մեծ զօրավարին Պասկեւիչ՝
կացուցեալ անդէն 'ի կառավարութեան զօրաց զղեներալ
կրասովսկի և 'ի կառավարութեան քաղաքական գործոց զնա՛
և զմեզ՝ և զկամենտանողն բերդապահ Պօլկովնիկ, դիմեաց
ինքն ազատաքայլ այնուհետև անցանել ընդ երասխ · գնալ 'ի
դաւրէժ · ուր յառաջ քան զժամանել նորա վաղագոյն ես
հասեալ յառաջընթաց զօրաց՝ անարգել առանց իրիք հա-
կառակութեանց թշնամեաց մտեալ 'ի քաղաքն տիրեցին նմ
խաղաղութբ · յետ որոյ 'ի բաց եդեալ ժառանգի պարսից
տէրութեան Աբբաս Միրզայ զամենայն զ յոյս զինուց իւրոյ
և այլոց հնարից՝ արկեալ զինքն 'ի գիրկս գթութեանց և
ներողութեանց ամենողորմած ինքնակալի կայսեր ամենայն
ռուսաց՝ դիմեաց խուռնի առ բարեբաղդ կուսակալն նորին
զեներալ Օտինֆանդերի զեներալ ատիւտանտ զանազան
նշանակիր իշխան Քետօրիչ Պասկեւիչն · և գտեալ ճշ հաճոյս
նորին զհնար պահպանութեանց աթոռոյ հօր իւրոյ՝ մատոյց
նմա զկճար ծախուցն պատերազմականաց տասն քրօր ոսկւոյ
և արծաթոյ · որ կացուցանէ թուղթ դրամ ռուսաց՝ ութսուն
միլիոն ռուբլի ։ Այլ որպէս ինձ թուի, առաւել քան զայն
գտանի նմա զգալի այս բարեբախտութիւն Հայկազանց · զոր
համաձայն մերոյ խնդրանաց 'ի գործ արկեալ յիշեալ մեծ
Զօրավարին բազում բարերարութեամբ աղքատաց հասարա-
կութեան Հայոց եղելոց ընդ իշխանութեամբ նոցին՝ ըստ
կարգի այլոցն հարկաւորաց դաշնակցութեան պարտաւորեաց
դաշնակցիլ և առ այն, զի Հայք կամ այլ քրիստոնեայք
եղեալք ընդ իշխանութեամբ իւրեանց՝ ես և մահմեդականք
գտանիցին ազատք ըստ իւրեանց կամաց մնալ 'ի տեղի իւ-
րեանց 'ի ներքոյ պարսկական իշխանութեանց՝ կամ չուել
ամենայն կահիւք և կարասեօք իւրեանց 'ի սահմանս Ռուսաց ։
Մեք առ այն 'ի մեր դիմաց առաքեալ քարոզ և հրաւիրակ
ամենայն ժողովրդեան մերազանց զՍտեփաննոս եպիսկոպոս
ենովքեան տփխիզայի՝ և ընկերակցայս վարդապետ զար-
բաղդի՝ անդէն և ինքն մեծ զօրավարն օն անդր խնամակա-
լութեամբ կարգեալ 'ի դիմաց տէրութեան հրաւիրակ և

օժանդակ լուսոյն համազգեաց զյիշատակին օրհնութեանց հայրենասիրացն Ջուղայեցւոց զկտակն որդի վեհազն աղայ Յովակիմայ Եղիազարեան զբարձր բարեծնունդ. Պօլկովնիկ 'ի գնդին գուսարտի՝ վեհազնեայ աղայ Եղիազար Յովակիմեան Եղիազարեանց, յանձնեալ նմա գործակիցս զԹոռն եղբօր Յովսէփ կաթուղիկոս կոչեցելոյ՝ զմայօր կնիազ Մովսէս զաքարեան արղութեանց՝ զմայօր կնիազ իւանէ յովսեփեան մելիքեանց, զկօլլէժսկի ասսէսօր՝ այն է՝ քաղաքական աստիճանի մայօր խաչակ տէր առաքելեան զամադեանց, զԴաւիթ և զԱղէքսանդր սուփանեան ղօրղանեանց զինուորական աստիճանաւորք, և զայլս ոմանս յաստիճանաւորաց Հայոց, տուեալ նմա և 'ի պէտս հարկաւորութեան աղքատաց 'ի գանձարանէ Տէրութեան Թղթադրամ ասիգնացի անուանեալ հարիւր հազար ռուբլի դրամ, որ է 25 հազար մանէթ արծաթ։ Եւ ահա գոհանամ զԱՅ՝ զի ընդոստուցեալ յամԹմբրութենէ մնաց ամենափրկելի ազգն մեր Հայոց, գան ժողովին օր ըստ օրէ 'ի կողմանց ատրպատականի 'ի սահմանս երևանայ՝ նախիջևանայ և ղարաբաղու. յորոց այժմ 'ի սոյն կէտ դրութեանց՝ ներկայ էին աստ առ մեզ անձինք առաջաւորք հասարակութեանց վերաբնակեցելոց 'ի Դաւրիժոյ և 'ի մարաղայէ՝ ես և 'ի խոյոյ աւելի քան 1500 տանց. և որպէս ընթեռնումք զգրութիւնս եպիսկոպոսաց՝ վարդապետաց և աստիճանաւորացն նշանակեցելոց մինչև ցերս մայիսի կամ յառաջագոյն ևս ամենայն բնակիչք ուրմւոյ, սալմաստայ և խոյոյ սահմանաց՝ որպէս ակն ունիմք, եկեսցեն աւելի քան 10,000 տունք 'ի մերազանց՝ որդիք հարազատք սուրբ լուսաւորչին՝ որք վերանորոգեսցեն զաւերակսն Հայրենեաց իւրեանց. և զԱԹՈՌ մեծ քահանայութեան ամենայն Հայոց և զբազմութիւն երևելի երևելի վանորէից հիմնեցելոց 'ի սուրբ լուսաւորչէն և յայլոց երախտաւորաց ազգի Հայոց՝ շնորհօք և մարդասիրութեամբ փրկողին զինքեանս ԱՅ և ամենազօր կայսեր ամենայն ռուսաց։

Գո՛յ յոյս, և արդէն իսկ երևին նշմարանք կերպարաներդոյն այնպիսի յուսոյ, թէ զօրութիւնն երկնից՝ որ օգնեաց քրիստոնէից ստորանկելոյ բռնակալութեան պարսից, օգնեսցէ

և քրիստոնէից ստորանկելոց բռնակալութեան օսմանցւոց · եթէ ո՛չ տէրութիւն օսմանեանց մեղմեալ զբռնակալութիւն՝ զհետ լինիցի յայսմ հետէ իւրեանց և արդարութեանց թագաւորավայելուչ գթութեամբ և ողորմութեամբ ։

Սրբազնագոյն կաթողիկոսն կայ տակաւին յեպիսկոպոսարանի մերում ՚ի տփխիս քաղաքի · և կամիմ փութալ անձամբ հրաւիրել զնա յԱ̃թոռ սրբութեան իւրոյ գէթ մինչև ց20 յունիսի ։

Բազմութիւնք հոգևորականաց եպիսկոպոսաց և վարդապետաց և ա̃մ դասուց կղերիկոսաց արժանի գտեալ ցանկալեաց խաղաղութեանց՝ տքնին ՚ի ջանս և ՚ի վաստակս վերանորոգութեանց սրբոյ կաթուղիկէ էջմիածնի մայր եկեղեցւոյ ամենայն Հայոց ։

Լիապէս ես պատմեսցէ վասն ա̃մ ախորժականացն ձեզ հարազատ որդի մե̃ լուսաւորչին ՚ի ձէնջ բարեբարեալ սիրելին իմ աղայ Մոսէս Յարութիւնեան տփխիսեցի · որում յանձնեցաք և զնմանս ծանրութիւնս տպեալս ՚ի տպարանի ուսումնարանի Հայոց ՚ի տփխիս՝ համարելով զայնս հաճոյականս ձերումդ ամենաբարեպաշտ հոգւոյ՝ թարգմանեցեալս ՚ի ռուսաց լեզուէ ՚ի Հայ բարբառ ։ Եւ աղաչեմ զԱ̃ծ , զի տուեալ ես յայսմ հետէ արժանի արասցէ զմեզ գրել ձեզ հետ զհետէ զուրախականս և զսիրելիս ձեր զաւետարանութիւնս ազգական բարութեանց և յառաջադիմութեանց ։ Եւ ես կամ և մնամ միշտ խնկական վերապատուութե̃ և կատարելագոյն ջերմեռանդութեամբ հոգւոյ իմոյ յաւէրժ բարեսպասարար ձեզ և ՚ի սրտէ բարեացակամ՝

Ձերում ամենաբարեպաշտ արժանանձնութեանց՝

՚ի 1828 ապրիլի 28 · } Խոնարհ ծառայ՝
՚ի մե̃ կաթողիկէն էջմիածնին · }

Արք եպիսկոպոս ,
Հայոց վրաստանեայ Ներսէս ։

Յարգոյ Պարոն Պօղոս Որդանանեան

՚ի կալկաթայ ։

՚Ի 20 ին սոյնոյ երկարօրէն գրեալ եմ քեզ զլուր Համազգեայ մերոյ՝ զոր ռուսք տարեալ են ընդ ինքեանց յԱտրպատական գաւառէ ՚ի գաւառն Արարատայ․ իսկ արդ ցանկալի է ինձ զարդարել քեզ հետագայ լուրքս ։

Պրն Յակոբ Ջրպետեան հանդերձ գաղղիացի կանամբ իւրով է ՚ի Թիֆլիզ․ և երբեմնապէս քննութիւն տայ ուսման աշակերտաց Դպրատան նոյն տեղւոյ․ Ներսէս Առաջնորդն յԷջմիածին է, և նշանաւորէ վասն սալմաստցի Համազգեաց մերոյ զտեղի բնակութե․ փրկեալքս այսօրիկ ըստ տգիտական մտաց իւրեանց չեն ուրախ ընդ փրկութիւն իւրեանց ՚ի ձեռաց յանօրէն ազգէն Պարսից․ և ապերախտաբար տրտնջեն զռուսաց որպէս իսրայելացիք զմովսէսէ ։ Կայսրն Ռուսաց ասեն հրամայեալ է զի հայք 6 ամ լիցին ազատ ՚ի հարկէ, սակայն ընդ այս շնորհ կայսեր դժուարին․ և չհամարին համեմատ չընչին տան և այգեաց իւրեանց՝ զոր կորուսեալ են ։ Աղայ Եղիազար Յովագիմեանն ՚ի մոսկովայ եկեալ է ՚ի հայս մարդասիրական և մանաւանդ թէ համազգասիրական զգայութեամբ զի խնամ տարցի վտարանդելոյն հայոց ։

Ներսէս Առաջնորդն վառեալ հոգւով՝ ՚ի սէր ազգասիրութեան, և շարժեալ ազնիւ կրիւք ազատութեան, հանդերձեալ է դիմագրաւ լինիլ առ կայսրն Ռուսաց վասն հաստատելոյ միջնորդութեամբ շնորհաց նորա զթագաւորութ հայոց ։ Տէր օգնեսցէ Ներսէս Առաջնորդին յընթացս ամ բարենախանձ իղձութեանց իւրոց․ և տացէ նմա շնորհս առաջի կայսեր ։ Յընթացս մարտին Ռուսաց և Պարսից աւելի թէ հայք, ունէին զդրօշակ հայոց ՚ի բանակի իւրեանց և նշանն էր ընդ թևովք Արծուոյն Ռուսացն ։

Աբբաս միրզայն ունի առաջադրութիւն երթալոյ առ Պիտրբուրգ ՚ի վերայ Դեսպանական Պաշտօնի, այլ սպասէ ստանալ զընդունելութիւն ՚ի կայսերէն Ռուսաց ։

Վրացի Պարոն Մովսէս Յարութիւնն որ էր առ ժամանակ մինչ ՚ի գործ Պարոն Յովսէփ ջօհանեայն, զկնի աւուրց

մինչ հասանելոց է աստ 'ի Շիրազայ. և որպէս լսեմ. կամի երթալ առ տեղի վասն տուրևառական գործոյ.

Ռուսք միջնորդութբ հայոց կարի դիւրութբ տիրեալ են զբայազիտ, Ղարս, Ախալցխա, Արզրում, զՏրապիզոն և զայլ բազում աւանս. և կայսրն ինքն ունի 'ի մտի գրոհ տալ 'ի վերայ կոստանդնուպօլսոյ. Տր յաջողեսցէ զբարին քրիստոնէից.

Երեք լատինացի քահանայք հասեալ են առ ջուղայ. և դարձուցեալ են զմի 'ի հաւատոյ:

Մինչ եւրոպացիք հրատարակեալ են զմարտն ընդ օսմանցւոց, խօնդքարն կոչեալ է զպատրիարգն հայոց որ 'ի կոստանդնուպօլիս՝ և ստիպեալ նմա լինել երաշխաւոր ազգին իւրոյ. Պատրիարգն խոստացեալ է լինել երաշխաւոր վասն հարազատոց միայն և ոչ դարձելոյն 'ի հաւատոյ. ընդ- [illegible]ս խօնդքարն հրամայեալ է արտաքսել զկաթօլիկ հայսն 'ի կոստանդնուպօլսոյ, որ և յունկիւրիայ բնակին այժմ:

Պատմի աստ թէ գաղղիացիք զօրաժողով լինին. և Անգղիացիք չգիտելով զպատճառն՝ ինքեանք ևս հաւաքեն զզօրս իւրեանց. բայց հաւանական է ասեն զի երկոցունց ևս առարկայ փոխեսցի 'ի շնորհ Ռուսաց վասն գլորելոյ զգոռոզացեալ Տէրութիւնն օսմանցւոց: Առաջադրութիւն կայսերն Ռուսաց է բառնալ յեւրոպիոյ զթագաւորութիւնն օսմանցւոց. ասեն թէ խօնդքարն 3,50,000 զօրս է հաւաքեալ 'ի կոստանդնուպօլիս վասն պաշտպանութեան անձին իւրոյ և Տէրութեանն.

Ցանկալով քեզ երջանկութիւն և բարեբաստութիւն՝

'ի Բուշէռ,
'ի Ջուլայի 28, 1828.

Մնամ քեզ խոնարհ ծառայ՝
[redacted]

(Թարգմանութիւն 'ի Պրն Պօղոսէ Մխիթարեան' որ 'ի Ադրիանուպօլիս:)

# ՍՐԲԱԶԱՆ ՀԱՏՈՒԱԾՔ:

Օրինակ թղթոյ միոյ գրեցելոյ 'ի Տեառնէ և 'ի Փրկչէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ օրհնելոյ գտեալ 84 մղոնաչափ հեռի 'ի քաղաքէն Իկոնիոյ, 60 ամօք յառաջ քան զծննդեանն Փրկչին մերոյ. յղեալ ի քաղաքէն 'ի հաւատացեալ հրէից միոյ, հրովարտակաւ թարգմանեալ ի նախագաղափարէ՝ յեբրայեցւոց օրինակէ յԼատին Տեառն Կովպայ 'ի Միլանոյ: Այս գիր էր գրեալ 'ի Յիսուսէ Քրիստոսէ, և գտեալ 'ի ներքոյ քարի մի մեծ կլոր միոյ. և 'ի վերայ քարագրեալ օրհնեալ է որ շրջեսցուսցէ զնա. ամենեքեան որք տեսին զայն, աղօթեցին առ Աստուած զերմագին, և խնդրեցին զի յայտնեսցէ նոցա զմիտս այսր գրուածոյ. որպէս զի մի 'ի զուր ջանան արկցեն շրջեցուցանել զայն. 'ի նոյն ժամու եկեալ երեխայի միոյ փոքրիկ՝ շրջեցոյց զայն 'ի զարմացումն ամենայն ամբոխին՝ որք անդր կային. որոյ ներքոյ գտաւ թուղթ մի գրեալ 'ի Յիսուսէ Քրիստոսէ, որ պարունակէր զհրամանս և հաւանեցաւ անդ: Եւ 'ի նմա էր գրեալ պատգամք՝ ջանադրեալ 'ի գաւառէն հրեշտակին 98 ամօք յառաջ քան զծնունդ Փրկչին մերոյ. յոր նշեցաւ թուղթն Ագրիպպաս թագաւորի և պատուականին Փրկչին մերոյ. նա և հաստատեալ ծանօթութեամբ՝ յաղագս հերձուածոց անցին նորա՝ որ 'ի թուղթն ընթացեալ առ ծերպենցոյն Հռովմայ, հանդերձ հրաշալեօք նորին:

Եւ արդ՝ որ ոք գործեսցէ յաւուր Շաբաթու՝ եղիցի նզովեալ: Պատուիրեմ քեզ գնալ յեկեղեցի. և սուրբ պահել զօր տեառն առանց գործելոյ երբեք զգործ ինչ: Մի՛ կորուսանէք զժամանակ ձեր՝ պճնելով 'ի մեծագին հան-[illegible]ելիս. քանզի հաստատեցի զայն՝ օր հանգստեան. սուրբ կալայց ես զօրն զայն, զի և մեղք ձեր թողեալ լիցին: Մի՛ անցանէք զպատուիրանօքն. խնամով լերո՛ւք և պահեցէք զօր տեառն սուրբ: Զգրեալս իսկական ձեռամբ իմով՝ գրեցէք և դուք 'ի միտս ձեր սրտագրեցէս. գիտացէք՝ զի գրեցաւ այս իսկ ձեռամբ իմով. և խօսեցաւ իսկ բերանով իմով: Ոչ միայն դուք երթիջիք

յԵկեղեցի, այլ և ածէք ընդ ձեզ զծառայս ձեր և զաղախնեայս ձեր. և ունկն դիք բանից իմոց և ուսարուք զպատուիրանս իմ: Յաւուր շաբաթու զկնի Ճաշոյն իբրև 'ի վեց ժամուն՝ աւարտեսջիք զաշխատանս ձեր. զի յայնմ ժամու պատրաստութիւն միաշաբաթու սկսանի: Պատուիրեմ ձեզ պահել զՀինգ ուրբաթս յամ տարւոջ, առ 'ի յիշատակ Հնգից արիւնաթաթախ վիրացն՝ զորս ընկալայ վասն ամենայն ազգի մարդկան՝ սկսանելով յԱւագ ուրբաթէ մինչև 'ի լրումն այլ ևս չորից ուրբաթուց: Զգուշութեամբ և խաղաղութբ աշխատեցէք 'ի յարաբերական գործս ձեր՝ յորս Հաճեցաւ Աստուած կոչել զձեզ: Սիրեցէք զմիմեանս եղբայրական սիրով. և զարթուցէք զոչ մկրտեալսն գալ յԵկեղեցին և ընդունել զսուրբ խորհուրդս մկրտութեան և Հաղորդութե և լինել անդամս այնորիկ. և առնելովն ձեր այսպէս՝ տաց ձեզ զերկար կեանս և զբազում օրհնութիւնս. և երկիր ձեր պտղաբեր լիցի կարի յոյժ. տաց զօրհնութիւն իմ ձեզ, և 'ի բազում փորձութե մխիթարեցից զձեզ. և արդարև որ զներհակն արասցէ, անիծեալ լիցի և անպտուղ: Սուրբ պահեցէք զօր շաբաթուն, զի զեօթներորդ օրն ընտրեցի ինձ Հանգիստ: Եւ որ ունիցի օրինակ մի գրոյս գրեցելոյ իմով իսկ ձեռամբ և ասացելոյ իմով իսկ շրթամբք, և պահեսցէ առանց Հուշակելոյ այլոց, անիծեալ լիցի նա. իսկ որ Հուշակեսցէն՝ օրհնեալ եղիցի յինէն. և եթէ մեղք նորա լիցեն անթիւ իբրև զաստեղս երկնից, թողեալ լիցին սմա. իսկ եթէ նոքա ոչ Հաւատասցեն յայս պատուէր իմ՝ առաքեցից 'ի նոսա պատիժս և մաշեցից զնոսա և զկաւակս նոցա և զանասունս: Եւ որ ունիցի օրինակ գրոյս այսորիկ գրեցելոյ ձեռամբ իմով և պահեսցէ 'ի տան իւրում, ոչ ինչ նեղեսցէ զնա. ժանտախտ՝ կայծակն կամ որոտումն ոչ վնասեսցէ նոցա. և կին որ յղի իցէ, և յերկս ծննդեան՝ և օրինակ մի այսր գրոյ իցէ առընթեր նորա, և նա զՀաւատ իւր պինդ ունիցի յիս, ողջիկ ազատեսցի յերկանց իւրոց: Ոչ ինչ գիտասջիք զինէն՝ բայց եթէ 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ մինչև յօր դատաստանին: Ամենայն բարութի և աջողութի լիցի 'ի տան անդ՝ յորում գտանիցի օրինակ մի սորին:

## Թուղթ Աւգբեղդառոյ Թագաւորին :*

Լուեալ է իմ զքէն և զբժշկութեանցն՝ որք լինին ՚ի ձեռն քո առանց արմատոյ և դեղոյ. զի համբաւեալ է, թէ դու լոյս տաս կուրի. և տաս կաղին՝ գնալ, և բորոտին՝ սրբիլ. զմեռեալս յարուցանես. հանես զդևս և զայս պղծս. և բժշկես զորս միանգամ չարչարեալեն հիւանդութեամբ և երկարատև ցաւօք. և լուեալ զքէն զայս ամենայն՝ գլխովին հաւատացի եթէ դու ես Ճշմարիտն Աստուած իջեալ յերկնից ՚ի գործել զայսմանիկ հրաշս. կամ թէ որդի ես դու Աստուծոյ՝ որ զայդ առնես. վն այսորիկ յղեցի առ քեզ զայս քանի տողս. աղերսելով զքեզ գալ այսր և բժշկել զհիւանդութիւն իմ: Նաև լուայ զի հրէայք տրտնջեն զքէն՝ և ջանան առնել քեզ զանիրաւութիւն. սակաւիկ հրաւիրեմ զքեզ ՚ի քաղաքն իմ. որ թէ և փոքրիկ է՝ այլ գեղեցիկ և բաւական ՚ի դիւրութիւն երկոցունցս:

## Պատասխանի Փրկչին Մերոյ:

Երանեալ ես դու վն հաւատալոյդ յիս՝ զոր չէ քո տեսեալ. զի գրեալ է զինէն, թէ որք տեսանենն զիս՝ ոչ հաւատասցեն. և որք ոչն են տեսեալ՝ հաւատասցեն և կեցցեն. բայց սակաւ իմասցիս զՃշմարտուի այնր ամի՝ զոր գրեցերդ. զի ամ ինչ վասն որոյ առաքեցայ ես աստ, պարտի լնանիլ. և ապա ամբարձայց և դարձայց առ նա՝ որ առաքեացն զիս. այլ յամբառնալ իմում առաքեցից զմի յաշակերտաց իմոց՝ որ զցաւ քո բժշկեսցէ և տացէ զկեանս ամենեցուն՝ որք ընդ քեզ են:

## Թուղթ Լէնտուլոսի առ Ծերակոյտն Հռովմայ:

Երևեցաւ ՚ի ժամանակս մեր այր ոմն առաքինի՝ Յիսուս

---

* Չէր Աւգբեղդոս որ գրեաց Յի զայս Թուղթն, այլ Տէրն Աբգար Թագաւոր, որպէս պատմէ Խորենացին. Գիրք Բ, գլուխ 29:

Քրիստոս անուն. որ 'ի մարդկանէ կոչիւր Մարգարէ, բայց յիւրոց իսկ աշակերտաց՝ Որդի Աստուծոյ. յարուցանէ նա զմեռեալս և բժշկէ զամենայն ազգս հիւանդութեանց. այր մի է սա հրաշագեղ և փառաւոր. փոքր ինչ երկայն և վայելուչ և մեծարոյ 'ի դէմս. յոր եթէ ոք հայեսցի զգայցէ զերկիւղ և զսէր առ նա. հեր իւր է 'ի գոյն շագանակի հասելոյ, և հարթ մինչ յականջսն. և անտի 'ի վայր գանգուրք ծածանին 'ի վերայ ուսոց նորա. 'ի միջոյ գլխոյ նորա իջանէ 'ի վայր նշան ինչ բաժանման որպէս զնազովրեցւոյ. Ճակատն հարթ և հաստատ է առանց կնճռոյ կամ արատոյ. երեսք նորին չքնաղ և քաջադէմ կարմիր. քիթ նորին և բերանն այնպէս ձևացեալ՝ մինչ լինել նց̅ անհամեմատ. մօրուք իւր խիտ և 'ի գոյն հերաց իւրոց. աչքն խարտեաշ և անբիծ և արագ 'ի յանդիմանել. անաչառ է նա 'ի բանս և քաղցր 'ի խորհուրդս. ոչ ոք է տեսեալ զնա ծիծաղել, բայց բազումք տեսեալ են զնա 'ի լալ. ը̅ս̅ պատշաճութե̅ անձին իւրում է նա բարեձև 'ի կերպարանս, կանգուն և վայելուչ. ձեռք և դէմք իւր յոյժ հաճոյականք. 'ի խօսիլն կարի բարեխառն և համեստ. և անզուգական գեղեցկութե̅ իւրով յաւէտ գերազանց է նա քան զամենայն որդիս մարդկան.

Օրինակ Թղթոյ գրեցելոյ ՚ի Պատրիարքութենէն Հայոց Մոսկուայ

Առ

Ամենապատիւ բարձրապատիւ և գերապատիւ Տէր Ներսէս վիճակաւոր Արքեպիսկոպոսն վրաստանու Հայոց՝

Սուրբ աջոյն համբոյր խոնարհական՝ կարօտակէզն որդիական նուիրմամբ.

Ընդ պատմելի յնծութե անձին, ամենազօրաւոր հրճուանօք սրտի և խանդաղատական բերկրանօք հոգւոյ ընդգրկեալ համբուրեցաք զաւետաւոր զաւետաբեր զառ ՚ի Սրբազնութէդ գշնորհագիծն նամակ հայրախնամ օրհնութեանց և պատմագրական ծանօթատուութեանց ազատութեան Հայրենեաց մերոց՝ Աստուածընտիր մասինն Հայաստանեայ աշխարհի և հոգևոր մօրն մերոյ Սբյ Աթոռոյն էջմիածնի, ՚ի յԱծպահ հզօր զօրաց Քրիստոսասէրն Տիեզերակալ վեհափառ կայսերն ամենայն Ռուսաց ՚ի Նիկողայոսէ։

Օրհնեալ է Աստուած՝ հզօրն՝ ողորմածն՝ բարերարն՝ գթածն՝ և երկայնամիտն, որ անհուն բարերարութբ իւրով համբերեաց անդրէն վերստին հայրագութ և ամենատես աչօք իւրովք հայել ՚ի տառապեալ յարարածս իւր և յերբեմն սիրեցեալ յորդիս իւր. յայն՝ որ ՚ի դարս բազումս և յամս յոլովս յաղագս բազմապատիկ յանցանաց և մեղաց իւրոց հեռացեալ մեկուսացեալ էր ՚ի բազմապարգև յարարչէ իւրմէ, օտարացեալ և խորթացեալ ՚ի բարերար տեառնէ և ՚ի գթառատ Հօրէ՝ որ ՚ի խրատ և ՚ի դարձ մոլորելոցս հայրանման գթովք իւրովք թոյլ ետ մեզ ձգձգիլ պէսպէս խոշտանկութեամբք. սակայն և այնպէս՝ անհնար էր ողորմած և մարդասէր լինելոյն Աստուած գոլոյն մոռանալ և մերժել զմեզ իսպառ։

Եւ ո՞ ոք ՚ի Հայկազն մարդկանէ խախանէր արգելուլ զօրէ՝ աստանօր զ ցնծութեան զարմանալ յորդահոսս և զառատաբուղխս. ո՞վ բարէ՞ սքանչել ինչ անհուն և սխրալի ողոր-

մութեան ամենազօր ձեռինն Աստուծոյ՝ որ փրկեաց զմեզ ՚ի գժոխըմբեր և ՚ի դժնդակ գերութենէ մերմէ. որ զերծոյց ազատեաց ՚ի բաց կոչեաց զԾ մեր Ադինասարաս՝ յանիրաւ յանողորմ՝ ՚ի կեղեքիչ և յոգեսպառ բռնակալաց անտի. որք ոչ միայն զամն Եօթանասունս ըստ Իսրայէլեան զաւակաց՝ բռնացեալ հարստահարէին զարեամբ իւրոյ միածնի գնեալ զորդիսն, այլ զեօթնիցս Եօթանասունս. ո՛չ առ պիտակ անուամբ օծելոյն Կամբիւսեանն Կիւրոսի, այլ ահեղասաստ և Քնադրոշմ զօրօք ՚ի շնորհաց Սուրբ Հոգւոյն օծելոյ ամենայաղթ Արքային Նիկողայոսի կայսեր մեծին Ռուսաց՝ յաղթեղ բարերարին և խնամակալութին Տանն Թորգոմայ և ազգին Հայոց.

Փա՛ռք ամենազօրին Աստուծոյ՝ արարչին Համայնից և հաստչին Էակաց բոլորից. որ եբաց զբերանս մեր զխցեալս անհնարին Թախծութք, առ ՚ի մեծաբարբառ աղաղակել ը̅ կայծակնամաքուրն Եսայեայ Մարգարէին "Լուսաւորեա՛ց լուսաւորեա՛ց Էջմիածին, զի հասեալ է լոյս քո Ք̅ս վերստին զքեզ Ճառագայթափայլ լուսաւորել, և փառք Տ̅ն ՚ի վերայ քո ծագեցին՝ զի ահա խաւար ծածկեաց զերկիր և մառախուղ զհեթանոսս, բայց ՚ի քեզ Տէր յայտնեսցի և փառք նորա ՚ի քեզ երևեսցին. համբա՛րձ շուրջ զքև զաչս քո, և տես ժողովեալ առ քեզ զամենայն մանկունս քո, զի եկին հասին (գալոց և հասանելոց են) ՚ի հեռաստանէ որդիք քո, և դստերք քո ՚ի վերայ ուսոց նոցա բարձեալք բերցին. գոչեա՛ զօրութեամբ և մի՛ անխայեր. բարձրացո՛ իբրև փողոյ զբարբառ քո ասելով, ո՞վ են սոքա որք իբրև զամպս թռուցեալք են և իբրև զաղաւնիս ձագախառն երամովին գան առ իս: Վասն զի ահա ձմեռն էանց, անցրևք անցին՝ և գնացեալ մեկնեցան, ծաղիկք երևեցան յերկրի ժամանակ յատանելոյ եհաս, ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում. Թզենին ընձիւղեաց զբողբոջ իւր, այգիք մեր ծաղկեցան և ետուն զհոտս իւրեանց: Ուստի ցնծասցէ անձն իմ ՚ի Տ̅ր զի զգեցոյց ինձ զհանդերձ փրկութեան և զպատմուճան ուրախութեան, իբրև փեսայի եդ ինձ զպսակ՝ և իբրև զհարսն զարդու զարդարեաց զիս":

Ըղղաքէն լսեաք մեզ՝ ո՞ վսեմական Հայր մեր Հոգևոր՝ զայնս պատուականն Թուղթ ընդ պարսից, և զբարեպէս աւարտողին, որով և զփրկութիւն Հայրենեաց մերոյ, բայց և այն յօտար լեզուէ և ի կցկտուր գրուէ մերազնեայց միայն․ սմին իրի ողբացեալ և կարօտ մնայաք լիակատար ծանօթութեանց ՝ի բուն յարմարոյ այսոր զովարար քաղաքական աղբեր՝ ՝ի Հոգեզուարճ տանէ մօրդ սեամ՝ պարարողի յերկինս, և ՝ի շընորհաձիր ձեռամբ վեհամիայն սրբազանութեդ նորոյս մերոյ յողնաշխատն Եզրի օրէնսգրի․ և արդ ժամանեալ Հասեալ մերում տենչանաց սրտիք մեր խնդութեամբ զեղանիլն․ քանզի ՝ի Հարիւրաւոր ամաց Հետէ՝ ցանկալին Հարց մերոց՝ մեք աւադիկ արժանացաք տեսանել՝ լսել՝ և ընթեռնուլ․ վա՜ որոյ ո՞ր բանս ո՞ր բերան և ո՞ր լեզու բացատրել կարէ զմեր զայս ազգային խնդամտութիւն և զերախտագիտութիւն առ Հայրդ մեր ամենագորով և աւետաւոր Հեռաւոր և կարօտակէզ որդւոյս։ Երանի՜ է աչաց ձերոց, երանի՜ այնոցիկ որք տեսանենն զգալի տեսանելեօք զանկարծահաս զփրկութիւն մերոյս Հայրենեաց․ զի եթէ միայն ՝ի յիշատակ բերկրականին զուարճանամք մեք այսքան, քանի՜ն առաւել և ՝ի տեսանելն և ՝ի վայելելն զնա արդեամբք։ Այլ մեր աչք այսուՀետև անդուլ առ Սրբազնութիւն ձեր յառեալ մնան յընթեռնուլ զայսպիսի աւետաւոր անդս Հայրենեաց մերոյ և ազգին միանգամայն․ վասն զի լուաք ՝ի նորոյ զաղատմանէ քանի մի մեծամեծ գաւառաց սաՀմանին Հայաստանեայց յՕսմանեանց գրաւեալոյն։ Արդ՝ որ և անոխակալն Աստուած Հաշտեալ երևի ընդ մերում ազգի և աշխարՀի՝ ՝ի սէր կենդանի նաՀատակին իւրոյ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի ։

Զմեծարմունս Սրբազնութեանդ շնորՀակալութ նամակօք նորքին վեՀափառեն կայսեր, և զպսակմանէ զՍրբուն ձեր աւագերէտին նշանօք լուեալ՝ եւս քան զեւս առաւելըն և առաւելուն խնդութիւնք սրտից մերոց, լիաբերան գոՀանակութիւնս ՝նոյնս մատուցանելով Պսակողին պսակաւորայն Քրիստոսի, որ վարձատրէ զարժանաւորս Հովիւս բանաւոր Հօտից իւրոյ ՝ի ձեռն երկրաւոր արքայի՝ ՝ի նշան պսակաց

զոր երկնաւոր Արքայն է շնորհելոց, ըստ անսուտ բանին թէ՝ "Ամէն ծառայ բարի և հաւատարիմ՝ մուտ՛ յուրախութիւն Տեառն քո":

Արդարև այսուհետև բանան Սրբութեան Ձերում դրունք մեծամեծ ջանից և աշխատութեանց 'ի բարեկարգութեան բիւրաւոր իրողութեանց ազգային պայծառութեանց. այլ որ զօրայոյսին է քաջ հովուայ՝ խորոյն բանաւոր հօտից, որք երբեմն անդ 'ի հնումն Յեսուայ Յովսեդեկեանց և Զօրաբաբէլին Սաղաթիելեանց, զօրայսուցանել ունի զՍրբազնութիւն Ձեր 'ի բարեկարգութիւն աշխարհիդ և ազգիդ, և 'ի շինութիւն տաճարացդ Ածաբնակաց, ըստ օրինակի համանմանութեան վեհին Սրբոյ մեծին Ներսէսի Պարթևականն սերնդի ճշմարտին շառաւիղի Գրիգորի ամեներջանիկ Հօրն մերոյ Լուսաւորչի հայկականաց գրոհի, բայց և այնպէս, թէև զժրաջան մշակն տանն Աստուծոյ և դքաջ հովիւսն բանաւոր հօտից խորոյ զարխապանծ զմխաբանութիւնդ, որք անդուլ ջանմբք է ձեզ աշխատակցին, ոչ ինչ կասկածեալ խիթամք թէ՝ ողորմութեամբն Աստուծոյ զարդարեալ քո՛ 'ի գերահռչակ մայրաքաղաքին Մոսկովու 'ի դպրատան բարեպաշտի և ազգասիրի Եղիազարեանն սերնդի, և 'ի յուսումնարանի 'ի Տփխիս կառուցելոյ ջանիւք Սրբազնութեան և քաջի հովուի, ունին արդարև ձեռնտու և նպաստամատոյց լինել իրողութեանց մեծի, զորէն կորուխորհրդոյն Յեսուայ՝ Մեծի Մարգարէին Մովսէսի. Ցօթանց գերընտիր սարկաւագացն երջանիկ առաքելոյն Քրիստոսի. և Սրբասուն խմբից Հայաստան հրահանգելոյն՝ գերագոյն թարգմանչայն մերոյ Մեսրոպեայ և Սահակայ Պարթևի:

Ցնծամք և մեք ընդ անպարտ հարսին Քրիստոսի Մօրն մերոյ. Սրբոյն Էջմիածնի՝ յաղագս վերադարձման նորին Աստուածարեան աթոռակալի և ամեներջանիկ գերամայրեալ Հօրն մերոյ Արքեպիսկոպոսի Տեառն Եփրեմայ Հայրապետի, որ 'ի բազում ժամանակաց հետէ հալածեալն է 'ի բռնակալութենէ կեղեքչաց անտի. ցնծայ է և նա ինքն հոգևոր Հայրն մեր հեղահոգին 'ի տեսանել զայցելութիւն տանն Աստուծոյ և իւրոյ աշխարհի, ձայնելով ըստ երջանիկ

Մարգարէին Դաւթի, ''Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն եհերծ յինէն զքուրձ եւ ինձ զգեցոյց զուրախութիւն'': Զորոյ ՍԷ եւ զԱստուածամերձ Աջն համբուրելով բազմապատիկ եւ պատկառելի խոնարհութբ ՚ի հեռաւոր տանէ, խնդակից լինիմք գերապատուն ՍԷՅ Հօրն մերում՝ հոգեւորական ընթերա-կայութեամբ, ձայնակցիմք եւ ընդ նմա ասելով, ''Եհան զմեզ ՚ի գբոյ տառապանաց՝ ՚ի կաւոյ եւ ՚ի տղմոյ, եկայք եւ տեսէք զգործս Աստուծոյ որ արար զնշանս եւ զարուեստս ՚ի վերայ երկրի: Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի՝ որ յայց ել, եւ արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ.''

Ապաքէն այսուհետեւ տունն Հայկայ պարտական եւ երախտապարտ է օրհնեալ եւ բարեբարոյ Ազգին Ռուսաց եւ տանն մեծին Պետրոսի. որ յազդեցութենէ Երկնաւոր Արքային սկիզբն էառ մտօք ՚ի Հայաստան առնել եւ զերծուցանել զայն ՚ի գերութենէ անտի իւրոյ բազմամեայ, եւ որդիքս Հայկայ ոչ ՚ի յուսոյ անտի մերմէ վրէպ գտաք յաւել զաչս մեր ՚ի վաղուց հետէ՝ առ օրհնեալ շառաւիղս նորին, յորոյ եւ մեզ Ճշմարիտ բարերար հանդիսացաւ ամենաբարեպաշտ Օգոստափառ կայսրն Նիկողայոս. որոյ ամենամեծ երախտեացն չիք երբէք տրիտուր հատուցման, այլ նոյն ինքն Թագաւորն Թագաւորաց զօրացուսցէ հաստահիմն արասցէ զնա, զԹագաւորութիւն իւր եւ զբովանդակ ազգն Ռուսաց.

Եւ ՚ի կնիք գլխաւորութեան աւարտման բանի խնդակցութեան Քարտէնիս՝

՚Ի Մոսկուա ՚ի 28 Նոյեմբերի, 1828.

Մնամք բարձր սրբազնութե͞ ձերում Ամենախոնարհ ծառայք՝

Տէր Հայրապետ Տէր Գրիգոր բաշխումեանց, Մադրասիս Հայոց վիճակի Քահանայ.

Ամենախոնարհ ծառայ Սարկաւագ Թադէոս Քալանթար Սարգսեան.

Սէթ Սամեան.

Մանուկ Աճարեան.

Թովմաս Պողոսեան.

Աստուածատուր Յարութիւնեան.

Գրիգոր Սամեան ։
Ստեփաննոս Ներսէսեան ։
Նիկողայոս Բարեամբէգեան ։
Սարգիս Տէր Առաքելեան ։
Համիր Զօրէրեան ։
Մկրտիչ Զօրաբեան ։
Յարութիւն Կիրակոսեան ։
Սիմէոն Մկրտումեան ։
Յակոբ Յովհաննէսեան ։
Ստեփաննոս Յովհաննէսեան ։
Մանուկ Պետրոսեան ։
Եսայի Մանուկ Պետրոսեան ։
Ստեփաննոս Ղազարեան ։
Յարութիւն Թադէոսեան ։
Եղիազար Սէթ Սամեան ։
Յովհաննէս Ներսէսեան ։
Նիկողայոս Յովհաննէս Գուլըմրեան ։
Դաւիթ Տէր Կարապետեան ։
Դաւիթ՝ մի ՚ի սերելոյն ամենապայծառ Շէհրիմանեանց Տոհմին ։
Բաղդասար Մանուկ Աճատրեան ։
Գրիգոր Մանուկ Աճատրեան ։
Վարդան Սէթ Սամեան ։
Մատթէոս Թորոսեան ։
Անդրէաս Սէթ Սամեան ,
Յովհաննէս Աւետ Սէթեան ։
Յովհաննէս Մ, Զօրաբեան ։
Մանուկ Զօրաբեան ։
Պօղոս Ստեփաննոս Յովհաննէսեան ։
Յովհաննէս Մանուկ Աճատուրեան ։
Յովհաննէս Յակոբեան ։
Յարութիւն Յակոբ Յովհաննէսեան ։
Յովհաննէս Ներսէս Կրտսեր ։
Սարգիս Յարութիւնեան ։
Նիկողայոս Ստեփաննոս Յովհաննէսեան ։

Տաղ 'ի վերայ Ծննդեան և Օգոստափառ Կայսեր համօրէն Ռուսաց ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՊԱՒԼՈՎԻՉԻ · յօրինեալ Սրբազան Տեառն Յովհաննու Մանուէլեան Աստուածատուրեանց Աւագ Քահանայի · 'ի Կալկաթա · 'ի Ռուսին
1828 · Նոյեմբերի 24 ·

1 Նորահրաշ նշան դու երևեցար ,
և երկրորդ Յեսու՝ նոր Իսրայէլեան ·
որպ՟ զարեգակն՝ լուսափայլեցար ,
աշխարհ ամ՟՝ զարհուրեալ դողան :
ՈՎ Տէր իմ Յիսուս պահեա անսասան ,
Մեծ Կայսր Նիկողայոս յաղթող ծննդեանն : } Կրկնեա

2 'Ի Հոգւոյն սրբոյ՝ օծեալ Թագաւոր ,
գեր քան զՏրդատ՝ յաղթող զօրաւոր ·
երկրորդ Սողոմոն արդար դատաւոր ,
ազգիս Արամեան Թալպիոլթ ամուր ,

3 Կարող զօրութեամբ ամենազօրին ,
սասանեցուցեր զազգ Իսմայէլին ·
որպ՟ Գեդէոն՝ զհին Թշնամին ,
տանն Արամեան նորոգող կրկին :

4 Ուրախութիւն մեծ՝ և ձայն աւետեաց ,
ք՟նզի ազանց՝ այսօր լոյս ծագեաց ·
Տ՟րն մեր Յիսուս մեզ Տ՟ր առաքեաց ,
չար բռնաւորաց՝ զմեզ ազատեաց :

5 Ղամպար լուսափայլ՝ աստղ առաւօտու ,
աշխարհասասան կորիւն առիւծոյ ·
սասանեցուցեր զարքայն Բիւզանդոյ ,
կամիս տիրանալ նորին աթոռոյ :

6 Արփի լուսաւոր և ջահ զարդարեալ ,
'ի մէջ աշխարհի քաջ անուն Թողեալ ·

դիւցազանց վեհին Հայկայ նմանեալ.
՝ի վերայ բռանց՝ յաղթանակ կանգնեալ։

7 Յարմատոյ բարեաց վեհին Պօղոսի,
յաւէրժայաղթ փառք՝ սրբոյն Պետրոսի.
բնաջինջ առնել զազգ հեթանոսի,
նորոգել կրկին զազգն Յիսուսի։

8 Ոսկի աշտանակ ՝ի մէջ աշխարհի,
ելեր ՝ի հանդէս լո̅ Դաւթայ մեծի.
չարն Գողիաթ հարեր ՝ի յերկրի,
բառնալ նախատինս՝ նոր Իսրայէլի։

9 Սարսափին համայն բռնաւորք ՝ի քէն,
առեր զշնորհս անեղ Արարչէն.
աղեղունք և զէնք ՝ի քեզ ո՛չ հասցեն,
աջն հայրական հովանի պահէն։

# ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ։

Հաստատեալ ՚ի հասարակութենէ Հայոց, ՚ի 2 Ապրիլի, 1821։

## ԺՈՂՈՎ ԿԱՌԱՎԱՐՉԱՑ։

| | | |
|---|---|---|
| Պարոն Խաչիկ Ածատուր Գէորգ, | Առաջին և Վարիչ Հոգաբարձու։ | |
| Պարոն Յարութիւն Գալուստեան, | Երկրորդ Հոգաբարձու։ | |
| Պարոն Ղազար Աղաբէգեան, | Երրորդ Հոգաբարձու։ | |
| Պարոն Յարութիւն Աբգարեան, | Չորրորդ Հոգաբարձու։ | |

| | | |
|---|---|---|
| Պարոն Եղիազ Աւդալ, ... ... | Դպիր և Տնտես։ | |
| Պարոն Յարութիւն Գալուստեան, | Գլխաւոր Վարժապետ։ | ՀԱՅԿԵԱՆ ԼԵԶՈՒԻ։ |
| Պարոն Յովհաննէս Ավդալեանց, | Երկրորդ։ | ՀԱՅԿԵԱՆ ԼԵԶՈՒԻ։ |
| Մստր Ջ. Ջ. Հակինս, | Վարժապետ։ | ԱՆԳՂԻԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ։ |
| Մստր Ճառլըս Քրէդրիկ Մէկնմարայ, | Երկրորդ։ | ԱՆԳՂԻԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ։ |
| Մստր Ջան Վօզ, ... ... ... | Բժիշկ։ | |
| Տիկին Մարիամ Եղիազ Աւդալեան, | Վարժապետուհի և Տան տիկին։ | |

՚Ի ՏՊԱՐԱՆԻՆ։ Յովհաննէս Տէր Յակոբ՝ Գրաշար։ Ռամզօն Բանուրջէ՝ Սրբագիր։

Յամի Տեառն 1829 ՚ի 27 երորդ Յունվարի ամսոյ՝ յաւուր երեքշաբաթի՝ գումարեալ 16 երորդ ընդհանրական ժողովն ՚ի Մարդասիրական Ճեմարանի անդ. յորոյ օգուտ հաստատեցաք և կնքեցաք զհետագայ կանոնադրութիւնս որպէս ՚ի վայր ։

Նախ՝ Մեք ՚ի ներքոյ ստորագրողքս ՚ի միասին վերահասու եղաք բոլոր հաշուից գրոց և այլոց թղթոց վերաբերելոց առ Մարդասիրական Ճեմարանն, զորս գտաք յամենայնի ուղիղ և անխալ որպէս ՚ի ներքոյ թղթոյս ստացուածոց և ելեմտից տարեկան հաշւին. և այժմ ուսանող մանկունք են՝ 39 վարձուք և 23 ձրի ։

Երկրորդ՝ Ոսկեհեան Ճեմարանի ունեցեալ դրամն կումպանու սանտղի վր լինելով եկամուտն շատ սակաւ է, վասնորոյ հարկ համարեցաւ հաստատել հասարակ հաւանութ՟ և պատուէր տալ կառավարչաց Ճեմարանին զի պէտք այսու միտ եդեալ ջանասցեն նոյն դրամոյն աջողակ և այնպէս եկամուտն գնեն վր սոյն Ճեմարանին, որոյ եկամուտն աւելի լինի քան թէ կումպանու սանտղի մուդաթն ։

Երրորդ՝ Ոսկեհեան առաջին և Վարիչ կառավարիչ Պրն Պօղոս Որդանանի մի տարի ժամանակին լրացեալ է, վասնորոյ ըստ կարգադրութեան նա ելթող զպաշտօն իւր և ՚ի տեղի նր Պարոն Խաչիկ Ծատուր Գէորգեանն ընտրեցաւ լինել առաջին և վարիչ կառավարիչ վասն առաջիկայ տարւոյ. Պրն Յարութի Գալուստեանն լինիլ երկրորդ, Պարոն Ղազար Աղաբէկեանն Երրորդ, և Պարոն Յարութին Աբգարեանն ՚ի նորոյ հասարակ հաւանութեամբ ընտրեցաւ չորրորդ կառավարիչ ։ Ամսոյս 27 էն թուով գրեալ մի թուղթ ընթերցեալ եղև գրեալ ՚ի Պնյք Խաչիկ Ծատուր Գէորգ և Կարապետ Յարութիւն Վարդանէսեանէ կառավարչաց Նազարէթայ Սուրբ Եկեղեցւոյ առ կառավարիչն մարդասիրական Ճեմարանի, որով ծանուցանեն թէ այժմեան Եկեղեցւոյ կարողութիւնն չէ բաւական ամսական Ճեմարանին հատուցանելի 130 ռուփին զկնի այսր հատուցանեն. որպէս զկնի այսու ընդհանրական ժողովէն հրաժարելոյ և եկեղեցւոյ այժմեան ելմտից կայութեն յայտնելոյն հասարակութեն ։

՚ի պատասխանի սոյն գրութեանն հաստատեցաւ դնել և խնդրել զի ամսական 130 ռուփին՝ որ եկեղեցին օգնական-նէր Ճեմարանին, զկնի այսու ևս հատուցանեն մինչ զկնի Է̃ համրական ժողով լինելոյն որպէս որ հաշուականութեան առաջադրեն և հաստատեն այն մասին, նոյնպէս արասցեն ։

Հաստատեցաւ և պատուիրեցաւ կառավարչաց զկնի այսու Թողեալ ընդհանրական հարցաքննութիւնն՝ զի երեք ամսէն մի օր քանի պարոնաց ներկայութեամբ առանձին հարցաքննութիւնն լինիցի մանկանց ուսմանցն և առաջադիմութեանցն. զայս Թուղթ կառավարչաց հոգալ ՚ի ժամանակի իւր պատշաճին ։

Հասարակ հաւանութեամբ առաջադրեցաւ մատուցանել վարիչ կառավարիչ Պարոն Պօղոս Որդանանին զշնորհակալութիւն ժողովոյս սակս բարեպէս կատարելոյ զպաշտօն կառավարչութեան իւրոյ ։

Յամի Տեառն 1828 Ջանէր I էն մինչ Դիկմբր 31 Մադրասի
և մինչ համառօտ ծանօթութեանց ։

| | | |
|---|---|---|
| Գանձարանի գումարնայ Աքայ ռուփի ... ... ... | | |
| Անցեալ տարոյ գումարն ... ... ... ... ... | 72397 | |
| Ինկլիզի Եպիսկոպոսի Պարգեւն ... ... ... ... | 100 | |
| Տեղիս մերազնեայց Պարգեւն ... ... ... ... ... | 783 | |
| Տնանկ Մանկանց ուսմանց ծախսի օգնականութիւն ... ... | 1000 | |
| Հանգուցեալ Տիկին Ռիսանայ Մ․ Ստեփաննոս Շքուրին խոստմունքն ... ... ... ... ... ... ... | 1000 | |
| Սինքափուրայ Պ՛ինց Պարգեւն ... ... ... ... ... | 500 | |
| Գօալիէրու Սպարապետ Յակոբ Պետրոսի Պարգեւն ... | 1000 | |
| Սուրբ Նազարէթայ Եկեղեցու տարեկան օգնականութիւնն | 1560 | |
| Մանկանց Պխտոյից տօմարոյ աւելին ... ... ... | 45 | |
| Տուն առածի ելեւմտից աւելին ... ... ... ... ... | 1135 | |
| Եկած վաշխ տարեկան ... ... ... ... ... ... | 2186 | |
| Գումարնայ | 81706 | |
| Մանկանց ուսմանց վարձ և կերակրի գին ... ... ... | | |
| Ձեռայ քաթին տալիք ... ... ... ... ... ... | | |
| Արարատեան գրայտան Պարգեւն ... ... ... ... ... | | |
| | Գումրնց | |
| Ճեմարանի տարեկան ծախս են ... ... ... ... ... | | |
| | Մնաց | |
| Ճեմարանի Տնեղինայ գին ... ... ... ... ... | 2737 | |
| ՝Ի վերայ Տան ... ... ... ... ... ... ... ... | 20568 | |
| Կոմպանու 5 ամոց մուրհակ ... ... ... ... ... | 45500 | |
| Այբբենական՝ Քերականութիւն՝ Խրախճան Բառարան՝ և Աղօթամատոյցի գին ... ... ... ... ... ... | 3999 | I |
| Երկաթեղէնի գին ... ... ... ... ... ... | 166 | |
| Հօրինարան Մուղմետ Սարքարիս առնելիք ... ... | 3354 | |
| Պարոնայ Յարութ և Առաքէլ կոստանդինոսի ձեռն ապարկածի քաթի առնելիք ... ... ... ... | 829 | |
| Սուխտի քաթի առնելիք ... ... ... ... ... ... | 363 | I |
| Գիրք առածի քաթի առնելիք ... ... ... ... ... | 165 | |
| | 77684 | |

Պ․ Որդանանեան
Վարիչ Հոգաբարձու։

Յառաջադրութիւն վասն հաստատելոյ զգրատուն մի կոչեցեալ՝

# ԱՐԱՐԱՏԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ։

---

Գիտութիւն լիցի հասարակութեան մերազնէից զի զՅորդորական Թուղթ մի ընկալաք Հոգաբարձուքս Ճեմարանին ՚ի Պրն Յովհաննէսէ Աւդալեանց Թուեալ ի 10 Յունվարի 1828, վասն հաստատելոյ զգրատուն մի ՚ի տանն ասացեալ Ճեմարանին յօգուտ մանկանցն ուսանողաց և ազգին մերոյ ընդհանրապէս։ Արդ՝ սոյն առաջադրութիւն նորին գոլով արժանի ընդունելութեան Հոգաբարձուացս և հասարակաց մերազնէից՝ առաջարկեցաք զայս Թուղթ ստորագրութեան յօրինել և շրջեցուցանել ՚ի մէջ մերազնէից վասն հանգանակութեան մատենից և գրոց։

Յառաւել ծանօթութիւն հանգանակողացն՝ արժան համարիմք քաղելով գրել աստանօր զվերջին հատուած թղթոյն Պարոն Յ. Աւդալեանց։ "՚Ի վախճան ամենայնի արժան է գիտել, զի գրատունս այս հաստատեսցի ՚ի Մարդասիրական Ճեմարանին, ընդ կառավարութեամբ և տնօրէնութեամբ Հոգաբարձուաց դպրատանն։ Պրն Պօղոսն ազգասիրութեամբ յանձնառու եղև շրջեցուցանել զայս Թուղթ առ մերազնեայս վասն հանգանակութեան։ Զկնի գտանելոյ զհանգանակութիւնս, յայնժամ կարգք և կանոնք հաստատեսցին վասն այսր Նորատունկ գրատանն"։

՚Ի Կալկաթա, ՚ի 7 Ապրիլի, 1828։

Մնամ յարգոյ ազգին իմոյ՝

Խոնարհ Ծառայ՝

Պ. Որդանանեան։

Գործ. Հոգ. Մար. Ճեմ.

## Պարգևատուք Արարատեան Գրատարանին ։

| | Ս․քայ ռուբլի |
|---|---|
| Տիկին Կատարինայ Յ․ Դաւթեան՝ որ ՚ի Բումբայի․ | 50 |
| Յարութիւն Աբգարեան ... ... ... ... ... | 50 |
| Յովհաննջան Էլիազեան ... ... ... ... ... | 50 |
| Տէր Գրիգոր Տէր Յ․ Տէր Աճատրեան որ ՚ի Սինկապուր պարգևէ զերկուս մատեանս՝ որոց արժէքն է ... | 20 |
| Գրիգոր և Եսայի Զաքարեանց ... ... ... | 100 |
| Մկրտիչ Մ․ Մոլիսեան ... ... ... ... | 25 |
| Պիտեր Ռայ՝ Նաւապետ ... ... ... ... | 20 |
| Պօղոս Որդանանեան պարգևէ զպէսպէս մատեանս՝ որոց արժէքն է ... ... ... ... ... | 200 |
| Յովհաննէս Ավդալեան պարգևէ զպէսպէս մատեանս՝ որոց արժէքն է ... ... ... ... ... | 200 |
| Սարգիս Յ․ Սարգսեան պարգևէ զպէսպէս մատեանս՝ որոց արժէքն է ... ... ... ... | 115 |
| Ղազար Աղաբէգեան պարգևէ զպէսպէս մատեանս՝ որոց արժէքն է ... ... ... ... ... | 100 |
| Վարդան Մ․ Վարդանեան և եղբարք ... ... | 50 |
| Կարապետ Յ․ Պետրոսեան պարգևէ զերիս գրեանս՝ որոց արժէքն է ... ... ... ... ... | 50 |

Մեսրովբ Դաւթեան պարգևէ զվեց գրեանս ։
Տիկին Մէրջան Ստեփաննոսեան պարգևէ զմի մատեան ։

# ՏՊԱՐԱՆ

Հաստատեալ՚ի Մադրասու Ճեմարանի, ՚ի 1 Յունվարի, 1824։

Ցուցակ գործոց մինչ ցարդ ՚ի լոյս ընծայելոց ըստ կարգի տպա-րանեանց ։

## ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ

Դաշնակաքաղ արարեալ ՚ի պէսպէս գրոց աղօթից, ՚ի պէտս հասարակաց մերազնեից, տպագրեալ յամի Տն 1827։

## ԱՅԲԲԵՆԱՐԱՆ։

Աշխատասիրեալ ՚ի պէտս մանկանց դպրոցին ՚ի քարեյիշատակ Պրն Յ. Յ. Աղանուրեանց, տպագրեալ յամի Տն 1824։

## ԱՏԱԼԱ

Բանաստեղծութիւն սրտառուչ և կենդաղօգուտ՝ Թարգմանեալ ՚ի Պարոն Յովհաննիսէ Ավդալեանց, տպագրեալ յամի Տն 1826։

## ԲԱՌԱՐԱՆ

Անգղիական և Հայկական լեզուի՝ համառօտագրեալ յԱնգերեան Բառարանէն ՚ի պէտս մանկանց դպրոցին աշխատասիրութեամբ Պարոն Յովհաննու Ավդալեանց, տպագրեալ յամի Տն 1825։

## ԽՐԱԽՃԱՆ

Պատմութեան Հայոց՝ յօրինեալ ՚ի Հայր Միքայէլ վարդապետէ Չամչեանց, և վերստին տպագրեալ աստ ՚ի պէտս մանկանցն դպրոցին յամի Տն 1824։

## ՀՌԱՍՍԵԼԱՍ

Ընտիր բանաստեղծական նկարագրութիւն մարդկային կենաց ՚ի պէսպէս վիճակս երջանկութե և թշուառութե՝ Թարգմանեալ ՚ի Պարոն Յովհաննիսէ Ավդալեանց, տպագրեալ յամի Տն 1826։

## ՃԱՌ

Կամ պտղալից յորդորակ յընթեռնուլ և ՝ի գիտել զԱծ-աշունչ գիրս՝ Թարգմանութիւն Պարոն Յովհաննու Ավդալ-եանց, յամի Տն 1828։

## ՃԱՌ

՝Ի վերայ մահուան և չարչարանաց Փրկչին մերոյ Յի Քի՝ Թարգմանութի Պրն Յովհաննու Ավդալեանց, յամի Տն 1828։

## ՅՈՐԴՈՐԱԿ

Յաղագս հաստատելոյ զՀայկեան ճեմարան մի ՝ի մեծի մայ-րաքաղաքին Անգղիոյ ՝ի Լոնդոն՝ աշխատասիրեալ Պարոն Յովհաննու Ավդալեանց, յամի Տն 1825։

## ՏԵՏՐԱԿ

՝Ի վերայ հաստատութե հնոյ և նորոյ կտակարանաց՝ Թարգ-մանութի Պարոն Յովհաննու Ավդալեանց, յամի Տն 1828։

## ՏԵՏՐԱԿ

Յաղագս հաստատութե, նպատակի և արդեանց քրիստոնէ-ութեան, և յատկապէս յաղագս վարդապետութե փրկագոր-ծութե՝ Թարգմանութի Պարոն Յովհաննու Ավդալեանց, յա-մի Տն 1828։

## ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հայկազեան լեզուի յօրինեալ ըստ նախնի ուղղախօսութե՝ ՝ի Հայր Միքայէլ վարդապետէ Չամչեանց. և առ հա-մառօտագրութե ՝ի լոյս ընծայեալ յամի Տն 1823։

## ՔՐԻՍՏՈՍՈՒՄԱՅՑ

Յորում պարունակի բովանդակութիւն գլխաւոր վկայութեց ճշմարտութեան և երկնային ծագման Յայտնութեան քրիս-տոնէութե՝ Թարգմանեալ Պարոն Յովհաննու Ավդալեանց, տպագրեալ յամի 1828։

Ներքոյ նշանակեալն է յատկութիւն ծախուց տպագրութեան պէսպէս գրեանց և զանազան թուղթ մա-տենից, 'ի տպարանի Մարդասիրական Ճեմարանի ։ որ է զուտ ծախք տպագրութեան, թողեալ գին քաղաթի և վարձ կազմելոյ ։

## Ֆուլսկէպ թուղթ քառածալ ։

| Հատոր կամ օրինակ , | 100 երես | | 200 երես | | 300 երես | | 400 երես | | 500 երես | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ռուփի | անայ | ռուփի | անայ | ռուփի | անայ | ռուփի | անայ | ռուփի | անայ |
| 100· Հատորի տպագրութեան ծախսն լինի ֆիհատորն | 2 | 0 | 4 | 0 | 5 | 12 | 7 | 4 | 10 | 0 |
| 200· Եւս ··· Եւս ··· Եւս ··· ··· | 1 | 6 | 2 | 6 | 3 | 4 | 4 | 0 | 4 | 14 |
| 300· Եւս ··· Եւս ··· Եւս ··· ··· | 1 | 2 | 1 | 14 | 2 | 6 | 3 | 0 | 3 | 10 |
| 400· Եւս ··· Եւս ··· Եւս ··· ··· | | 12 | 1 | 4 | 1 | 8 | 2 | 0 | 2 | 8 |
| 500· Եւս ··· Եւս ··· Եւս ··· ··· | | 10 | 1 | 0 | 1 | 2 | 1 | 8 | 1 | 12 |
| 600· Եւս ··· Եւս ··· Եւս ··· ··· | | 8 | | 12 | 1 | 4 | 1 | 0 | 1 | 6 |

## Ֆուլսկէպ թուղթ ութածալ ։

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 100· Հատորի տպագրութեան ծախսն լինի ֆիհատորն | 1 | 0 | 2 | 0 | 3 | 4 | 4 | 0 | 4 | 14 |
| 200· Եւս ··· Եւս ··· Եւս ··· ··· | | 10 | 1 | 2 | 1 | 10 | 2 | 2 | 2 | 8 |
| 300· Եւս ··· Եւս ··· Եւս ··· ··· | | 8 | | 14 | 1 | 6 | 1 | 10 | 1 | 12 |
| 400· Եւս ··· Եւս ··· Եւս ··· ··· | | 6 | | 10 | 1 | 0 | 1 | 2 | 1 | 6 |
| 500· Եւս ··· Եւս ··· Եւս ··· ··· | | 5 | | 8 | | 13 | | 14 | 1 | 1 |
| 600· Եւս ··· Եւս ··· Եւս ··· ··· | | 4 | | 6 | | 10 | | 12 | | 14 |

'Ի Մարդասիրական Ճեմարանի , Գ· Որդանան

'Ի Կալկաթա, 'ի Մարտ 1, 1829 ։ Գոր· Հոգ· Մ· Ճեմարանին ։

# ԺՈՂՈՎ

## 'Ի ՏԱՆ ՊԱՐՈՆ ՊՕՂՈՍԻ ՈՐԴԱՆԱՆԵԱՆ.

Ըստ շրջաբերական թղթոյ Պարոն Պօղոսի Որդանանեան՝ ժողով մի հասարակութեան մերազնէից գումարեցաւ 'ի բնակութեան նորին յեօթներորդում փետրվարի այսր ամի յերեկոյեան 7 ժամուն. առ 'ի ընթեռնուլ զընդհանրական նամակ սրբազան Տեառն Ներսիսի եպիսկոպոսի և առաջնորդի Հայոց բնակելոց 'ի Վիրս՝ գրեալ առ Հայկազունս բնակեալս 'ի Կալկաթա, և խորհրդակցիլ զպատշաճաւոր եղանակէ յղելոյ զպատասխանի վերոյասացեալ նամակին:

Յառաջ քան զեօթներորդ ժամն հրաւիրեալքն սկսան հետզհետէ գալ ժամանել յընդարձակ սրահն պատկերազարդ. յորոյ միջի եդեալ կայր սեղան մի երկայնաձիգ և պատուական՝ զորով դասակարգեալ զետեղեալ էին շուրջ աթոռոյ, զորոյ փայլիւնն առաւելուլին բազմութի̄ աշտանակաց նստուցելոյ ը̄ որմն և լուսափայլ ջրագարանք եդեալք 'ի վերոյ սեղանոյն:

'Ի գումարիլ արգոյ Հայկազանց 'ի լուր մեծի աւետեաց ազգային ազատութե̄՝ տանուտէրն Պարոն Պօղոսն Որդանանեան յայտնեաց զառարկայ ժողովոյն հետագայ համառօտ և պատշաճաւոր ճառիւ:

Ազգասէր Պարոնայք՝ նախ քան զյայտնել զառարկայն՝ որ է ինձ զառիթ համարձակելոյ յայտնել յառաջադրութեան, խնդրեմ ստանալ զբազում շնորհակալութիւն իմ անկեղծ. քանզի հաստատեմ զի առաւել հայրենասիրութի̄ ձեր յորդորեաց զձեզ ժողովիլ 'ի նուաստ բնակութիւն իմ, քան թէ արժանաւորութի̄ և խոնարհ հրաւիրական թուղթն իմ: Եւ արդ՝ քաղցր է ինձ այսօր շնորհաւորել ձեզ համազգիք իմ՝ զյանկալի ազատութիւնն Արարատեան աշխարհին 'ի գերութե̄ բռնաւորաց, զոր Սրբազան Ներսէս Եպիս-

կոչման այսու աւետարանական և հայրենասիրական թղթով աւետարանէ հասարակութեան տեղւոյս․ և չունիմ երկբայութիւն զի ո՛չ գոյ աստ 'ի խմբի մերում Հայկազն ոք՝ որ ո՛չ պատրաստեսցէ 'ի յանձնութենէ սրտին ընդ երկնային երանութիւնն՝ զոր ազգն մեր ակնունի վայելել յետ իբրև հինգհարիւրամեայ թշուառութեան ի սահմանս գերութեան ։

Որովհետև սովորութիւն է, յայսպիսի ժողովս զաթոռակալ մի ընտրել ի գումարելոյն յառաւել բարեկարգ գործառնութի ժողովոյն՝ յայն սակս խնդրեմ միակամ հաւանութեամբ նախ կոչել զոք 'ի բազմականաց աստի 'ի պատիւ աթոռակալութեան ։

Յաւարտել Պարոն Պօղոսին զբանս իւր՝ Պարոն Դաւիթ Բարսեղեան խնդիր 'ի մէջ էարկ ժողովելոյն հրաւիրել զՊարոն Աւետն Աղաբէգեան ի պատիւ աթոռակալութեան յայսմ ժողովի․ 'ի կարծիս Պարոն Դաւթին համաձայն եղև և Պարոն Յովհաննէս Ավդալեանց, որում և հետևեցան Պարոնայք Մելքում Գասպարեան և Փիլիպպոս Ա․ Գէորգեան․ և այսպէս յընդունելութենէ հասարակաց Պարոն Աւետն յանձն էառ սիրով զպաշտօն աթոռակալութե․

Աթոռակալն զկնի ընտրութե իւրոյ հրաւիրեաց զժողովեալսն լսել զբանս նամակի * Արքայազն Ներսիսի առաջնորդին․ և հասարակութիւն հաճեցաւ ընդ այս՝ Պարոն Յովհաննէս Ավդալեանց սկսաւ ընթեռնուլ զնամակն զայն աւետաւոր․ է որ ընծայեցաւ ուրախայեան ժողովեալքն բերկրապատար խնդութեամբ ։ Զկնի ընթերցման վերոյասացել թղթոյն Տիրայր Մեսրովբ Դաւթեան Թաղիադեանց ասաց զճառ մի գեղեցիկ 'ի վերայ ազատութեան Հայոց աշխարհին ըստ հետագայ օրինակի ։

Ո՛րք եղբարք՝ որդիք Աքանազեան սերնդոյ՝ զի՞ է, զի տեսանեմ զձեզ այսօր գումարեալս աստանօր 'ի մի շունչ և 'ի մի հոգի ։ Զի՞ է, զի տեսանեմ այսօր զդէմս ձեր իբրև զդարաստանս մշտադալարս, որ զերծեալ 'ի կապա-

* Օրինակ սորա գաղափրեալ է 'ի 42 երեսի այսր Օրագրոյս ․

նայ խոստութեան սառնամանեայն ձմերայնոյ վտարանդէին Թա՛փառանայ՝ բուսուցանէին յինքեանց ծաղկունս բազմաբուրեանս ուրախութեան և զուարթարարս զօրութեան աշայ Հայեցկայ. Կամ, զի՛ է, զի տեսանեմ զխրոխ ձեր բղխել այսօր 'ի խորին շտեմարանաց անտի խուրեանց նշոյլս յարազուարճ բերկրութեանց, զոր ընդ այսքան հեռաւոր դարս ժամանակաց Ճամբէր, սքօղէր, և 'նսեմացուցանէր մառախուղ դառն գերութեանց: Ո՞ր վերին իմն զօրութիւն Ազգ ազնիւ, ո՞ր անծանօթ սքանչելիք. կամ ո՞ր ներքին մղումն երանութեան շարժեաց զձեզ առ հասարակ 'ի հանդէս հասարակաց խնդութեանս, բայց եթէ՝ անակնկալ Աւետիք ազատութեան և փրկութեան Արարատեան աշխարհի՝ բնիկ հայրենեաց ձերոյ զոր աւետաբանեաց հեռաւորաց և մերձաւորաց Աւետարանիչն խաղաղութեան, Ծնապսակ և Կայսերանշան Արհին Հայոց Պրաստանեայց՝ ՏԷՐ ՆԵՐՍԷՍ:

Եւ զի՞նչ: Ո՞վ մեծի բարերարութեանս, բա՜րբէ անբաւ երախտեաց խնամողին տիեզերաց Այ. այնմ որ երբեմն ցրուեաց զմեզ 'ի հեթանոսս վասն բազում մեղաց մերոց. և այսօր՝ գթացեալ վերստին 'ի թշուառութիւնս մեր, հաՃեցաւ հաւաքել զմեզ 'ի ծագաց երկրի: Այնմ՝ որ մատնեաց զմեզ երբեմն 'ի ձեռս տերանց խստասրտաց՝ արար զերկիր բնակութեան մերոյ մեզ 'ի տեղի տրտմութեանց. վայր թշուառութեանց, բանտ արգելանաց, հանապազորդեան ընպանդարան մարտիրոսաց. և միանգամայն ասել, դժոխք իսկ արժանի մեղաց մերոց: Եւ այս ընդ է՞ր արդեօք ծնունդք Թորգոմայ. մի՞ թէ Հայք միայն ամբարշտագոյն գտան առաջի անաչառ դատաստանին Այ քան զՀագարացիս, զՊարս և զայլ խժդժիկ ազգս հեռաւոր և մօտաւոր աշխարհաց: Այնք՝ որ 'ի տէր պարծէին միշտ և 'ի տաՃարն կենդանի. այնք՝ որ աւետարանին էին ժառանգորդք. և անձադրօշմ տառիցն մարգարէականաց ընթերցողք. այնք՝ որ զՔս աստուած դաւանէին, և 'ի հաւատն սրբուն արիաբար մրցէին: Եւ ընդ է՞ր արդեօք Այ արդարութիւնն զսոսա յաւէտ՝ քան զնոսա կացոյց պատիժ պատուհասի արժանի: — Մի՞ թէ անիրաւեաց մեզ տէր. կամ ոխ քինու պահէր ընդ Հայս Հայըն

գթութեանց ։ ո՛չ ։ Այլ զի բարձաւ սէր և արդարութիւն յամմարդոյ ։ Այլ զի՛ ստութեամբ և ո՛չ ստուգութեամբ կարծեցուցանէին զանձինս սիրունս և պատուիրանապահս ։ Այլ զի իշխանք մեր ա̃ծապաշտք թափուր ՚ի գործոց հաւատոյ, փո՛յթք եղեն ՚ի պատերազմ, և յամրունք ՚ի խաղաղութիւն ։ Ընդ փարագուրա բարեպաշտութեան համարձակ ամբարշտէին, ըստ պոռնկելոյն իլի պարծելով ՚ի սաճարն նիւթեղէն, յարտաքին ցուցանան ասեմ երևութական կրօնից ։ Այս ախտ փոխադրական ժանտախտից յաւագաց հաւեալ և յանաւագս պսակեալ ապականեաց գլխովին զընդհանուր երջանկութիւն Ծի և Ազգիս մերոյ ։ Արք կնամարդիկ, աղաղունք, տիրատեացք ․ տիրադրուժք, մոլեալք փառաց, և կենդանիք անարգութեանց, ժողովեցան ի միասին վասն Տեառն և վասն Օծելոյ նորա ․ այսի՛մ որ թագաւորեցուցանէր զայր կեղծաւոր վասն խստութեան ժողովրդեանն ։ Ոչ պատկառեցին ՚ի պատուական երեսաց թագաւորին, ըստ համարեցան զՊարսիկ կռապաշտ քան զՀայկազն Ա̃ծապաշտ ․ կամ ըստ ա̃յն Սահակայ պարթևական տեսանողին՝ "զոչխար ախտացեալ է առողջ գազանին փոխանակեցին" ։ Վ̃նկ և ա̃ծ իրաւամբք մատնեաց զնոսա ՚ի ժանիս այլազգի գայլոց, որք կերին զժողովուրդ տեառն որպէս կերակուր հացի, և առ ա̃ծ ո՛չ կարդացին ։ Այս է, ո՛չ ծանեան, և ո՛չ ՚ի միտ առին, թէ տէր էր՝ որ մատնեաց զմեզ ՚ի ձեռս իւրեանց իբրև զՅոբ՝ ՚ի ձեռս Սատանայի, տանջել, այլ ո՛չ սպառել ․ սաստել, այլ ո՛չ բառնալ յերկրէ միանգամայն զյիշատակս մեր ։ Խորհեցան թէ սուր իւրեանց միայն գերի վարեաց զդերիշաշխարհի, զքաջազուն որդիս ասեմ քաջին ՀԱՅԿԱՅ Դիւցազանց, և անցուցին ընդ մեզ չարիս առաւել քան զոր ներէր նոցա ամենողորմ գթութի̃ն ։ Բայց տակաւին թոյլ ետ այսմ տէր ․ նախ՝ զի ծառայն, որ գիտաց զկամս տեառն իւրոյ, և ո՛չ պատրաստեաց ըստ կամաց նորա՝ արժանի էր բազմագոյն գանից՝ և բաժակի բարկութե̃ նորա ։ Եւ երկրորդ՝ զի Ա̃զգ մեր ՚ի փորձոյ չարաչար տառապանաց ուսցին կշռել զյարգ ազատութեան, և գիտասցեն սիրել զիւրեանց թագաւորս, մի՛ զոք դատելով, զի դատաստան տեառն է ․ այլ յաւէտ հնա-

զանդելով, զի թէ բարի և թէ ոչ՝ ած ժողովրդեան է.
կամ լաւ ևս ասել, երկրորդ ած՝ յետ ամենամեծին Այն այ,
և Տեառն տէրանց:

Այլ զի՞նչ, մի՞ թէ յաւիտեան մոռացայ՝ մեզ տր-
կամ, մինչ 'ի սոյսս բորբոքեալ զբարկութիւն իւր. ոչ: Վասն
զի իբրև սկսան Հայք մերկանալ յինքեանց զքէն չարակամ-
ձան նախանձու, խլել 'ի միջոյ զկնձիռն անիրաւութեան,
'ի բաց հանել յանձանց զերկոսին իշխանսն դիւաց "զիմն և
քոյն". և ամենայն հաստատութեամբ և անկեղծութեամբ
պաշտել զտէր և զօծեալ նորա՝ զմեծ Կայսերն Ռուսաց,
գթացաւ 'ի նոսա, ջնջեաց զդատակնիք մեղանացն. վառեցաւ
'ի պատերազմ տէր պատերազմաց. եւ հզօրն 'ի զօրութի-
շարժեաց իբրև զսահան ջրոյ զփոր Օծելոյն իւրոյ Օգոս-
տափառի՝ աշխարհակալի՝ հզօր Կայսերն ամենայն Ռու-
սաց Տեառն ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՊԱՒԼՈՎՁԻ. առ զնա 'ի
ձեռս իբրև զսուսեր. ապա կնա իբրև զգրաւ: Աջ տեառն
արար զօրութիւն. աջ տեառն մեծ վայելչութիւն: Եւ նմա
զամենաբաւական բազուկ յաղթութեան իւրոյ. և կ'ցոյց ըզ-
նա առաջնորդ գերեդարձն լինելոյ մեզ. ոչ միայն ի բաբե-
լոնէն խառնակութեան ըստ հնոյն իսրայէլի 'ի խաղաղութեն
երուսաղէմ. այլ 'ի դառն տառապանաց 'ի մշտերանն ազա-
տութիւն. 'ի հանրասփիւռ գերանաց 'ի փրկեալն Հայաս-
տան: Եւ այս՝ ոչ միայն 'ի կանգնումն օրինակի Սողոմոնեան
տաճարին՝ յոյր ընդ դնել հիման ծերք արտասուէին և պա-
տանիք կայտռէին. մին՝ զմեծ վայելչութիւն առաջնոյն յի-
շելով, և 'ի նուաստափառութիւն վերջնոյն մղձկելով. և
միւսն զուրախ անպատուղս բաբելոնեան գերանացն 'ի մտս բե-
րելով, և անդէն 'ի բուն իւրեանց Հայրենիս զտաճար այ
կառուցեալ տեսանելով: Այլ 'ի նորոգումն և 'ի բարձր
'ի գլուխ պարծանս քրիստոնէական հաւատոյ, 'ի վերականգ-
նումն հինգերորդ և անմահ Թագաւորութեան Հայաս-
տանի. 'ի յարագուարճ երջանկութիւն, յառ. յդ. Ձախուն,
և 'ի հաստատուն բարեկարգութիւն աշխարհի. զոր և
երանագոյնն 'ի դարուց անտի ընկեց Թագաւորացն մերոց չկա-
րաց՝ կամ տեսանել, կամ վայելել: Ընդ այս ապաքէն մե-

ծածկեն հրաշս՝ ծերք ՚ի ծերութենէ պատմութեանց ազգիս չքնաղեալ զնմանիս՝ ծափս հարկանեն · և մանկունք յարկութենէ զերծեալք՝ և փոխանակ անարգանացն կթոց ընդդըկեալ՝ խնդան, ցնծան, և փառս տան ա̃յ ։ Ընդ այս երիտասարդք մեր ՚ի սուսեր խաղախուսին, և կուսանք յիմաստս գիտութեանց կրթին ։ Ընդ այս հեռաւորք և մերձաւորք առհասարակ խնդութե̃ ամբառնան զհիացական զայն բան մարգարէին, և ասեն ․" Մեծ արար տէր զառնել ընդ մեզ, մեծ արար ա̃ծ զառնել իւր ը̃ մեզ, և մեք եղաք բերկրեալ ։

Ընծայիւն է այսելութիւնս եղբարք, եթէ իրաւամբ կըշռեսցուք զմեծութիւն նիւթոյն ՚ի մեծութենէ անտի հեռաւորեալ հանդամանայն ։ Զի որպէս նախ զմեզ կոչեցոյց եկորոյս արդարութիւնն երկնային, այսօր՝ ըստ նմին օրինակի և զպարգևս յառաջեցուցեալ մայր աչացն տեսութի՝ հորդան եւ նոյս ՚ի կորուստն անկանգնելի ։ Զի իբրև փայր հատանէր աւետաւոր ժամանակ փրկութեան Հայոց աշխարհին, Արքան՝ ժառանգ արքայութեանն և խաղաղութեանն պարգևս ՚ի մէջ խաղաղութեան զբոյ խռովութեան արձարձէր, հատանէր մանրէր և խզանէր զսրբազան զայն հանգոյց ուխտին հաշտութեան, որով աղխախեալ յօդէին ընդ միմեանս հաւատք արքային, հանդիսաւք աշխարհաց · և անդորրութիւնք երկրի ։ Հարցանէին առնէր, հմայս հրամայէր · դիւթս առձակէր · որպէս երբեմն Կրիսոս ՚ի պիւթեան պատգամախօսէն ։ Դիմէր բռնութե̃ յաշխարհն խաղաղական · և յանակնկալ հրոսակեալ ապականէր քանդէր եղծանէր զքաղաքս ՚ի քաղաքայն Հայաստանի · և իւրով անօրէն խարդաւանութեամբ դանօրէնութի զինեին իւրոյ հրոսակեալ ժողովէր օրէն ընդ հանուր ա̃մ ազգաց երկրի ։ ՚Ի մտի եդեալ՝ թէ որքան շատ հեղուցու զարիւն անպարտ · այնքան և բազում գտանիցէ գերկանս առաւելեալ յաւերժահարսանց դրախտին ՚ի զոհիցումն բոցոյ չարաշար աղանդաւոթեան իւրոյ ։ Քակէր կամէր զօտարին՝ բայց քակեայ զիւրն թագաւորութիւն ։ զաշխարհ զայլոց տիրել կամէր, այլ նա և յիւրոյն զրկեցաւ ։ Վասն զի՝ այն ինչ փայլատակեցան ՚ի նմ Հայկական զօրութիւնք անխռովարհելի տէրութեան կայսեր ·

գոգցես եթէ շանթս հրաբորբոք կայծականց Ճայթուցեալ յամպոց Թանձրութեան, գրեցին գնդեցին եղծին ապականեցին զհամայն սեւագունդ կաճառս զՊարսից գնտին : Եւ այնքան խուռն տեղացին ՚ի նոսա հրացայտ ումբունս թնդանօթաց, մինչ ոչ միայն անարին Աբբաս, զոր ջս մկանց ՚ի գնոյ որոնէր ինքեան տեղի Թաքստեան ՚ի Թագաւորեալ քաղաքի անդ իւր, այլ և առասպելեալն նոյա Հերքուլէս քաջարանցն Ռուստամ, զահի հարեալ յերկիւղէ Մոսկովացի զօրականին, և դուզնաքեայ նովին վարկուցեալ զանշիջանելի տոչորմունս գեհենին յորում էին, աղերսէր փախուցիլ ՚ի խորագոյն ծործորսն Սանդարամետից, թերեւս անդանօր ազատ զինքն կացուսցէ յահեղ ահեղ շանթարձակութեց քաջազօր գնտին : Տես ինձ. թէ զի՞նչ ՚ի միում անմիաբանութիւն, և զի՞նչ ՚ի միւսումն միաբանութիւն հրաշալուցին աշխարհի զհամբերկաքանչելին ասեմ զիւրեանց ներգործութիւնս : Ո՞վ զարմանալեաց, Ազգ՝ որ երբեմն անմիաբանութեամբ իւրով հինն ՚ի վեր տապալեալ զիւր իսկ թագաւորութիւնն, այսօր միաբան հաւատարմութեամբ իւրով նեցուկ ամրութեան լինի և գէն զինուորութեան մեծազօր կայսերութեանն Ռուսաց: Նու-այս՝ այնքան ա՛մբ եղբարք, մինչ առ ինքն բռնաբարել և ընկայսերականն երախտագիտութիւն, զմեծն ասեմ ՚ի պարծանս Հայաստանի, և զանքուն խնամս Նորա զերջանկարարն Տանս Թորգոմայ :

Իբրայն զի՞ պա՛րտ է Արարատայ անդրանկին տիեզերաց՝ զփրկութիւն զգենուլ ՚ի ձեռն անդրանիկ Թագաւորի տիեզերաց Օգոստափառն ասեմ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ կայսեր Ռուսաց: Պարտ էր արդարեւ աշխարհամօրն գաւառաց մերկանալ զքօղ բազմաժամանակեան այրութե իւրոյ, և հարսնանալ վերստին ընդ իւրում փեսայի Արշակունեան Թագաւորութե, ՚ի ձեռն աշխարհակալին մեծի և բարեպաշտ Կայսեր Ռուսաց : Պա՛րտ էր այսպիսի մեծ Թագաւորութեան յայնմ մեծէ Թագաւորէ ընդունել զդրան Ոսկի, զոր ետես մարգարէն Հայաստանեաց Ս. Սահակ Պարթեւ մեծ Հայրապետ, և ամենեցուն յայտնութեամբ գուշակեաց զանկումն, և զանդրէն կանգնումն նորա : Զոր առեալ գրչաց մերոց եր-

թեմն 'ի Բագրատունեաց և երբեմն 'ի Ռուբինեանցն պատ-
ուաստեցին թագաւորութիւն բանի մեկնութեամբ։ Այլ ինձ
գիտ՞ըդ հաւատալի այս. որ վասն Արշակունեացն էր, և ո՛չ
վասն այլոց տեսիլն՝ և մեկնութիւն նորա միանգամայն։ "Ծա-
նի՛ր" ասէ Հրեշտակն յաւագերաժառանգ մարգարէն Հայ-
աստանեայց, "զի մերձ երևումն պղծոյն յանապատի. դար-
ձեալ յառնէ թագաւոր յազգէդ Արշակունեաց։ "Որպէս
ահա՛ 'ի մեզ լցեալ կատարի. վասն զի յոյս իմ լի է ան-
մահութեամբ. զի ընդ յառնել միագլխի Արշակունեան Ար-
ծրունոյն զօգչիք, որպէս փիւնիկն եգիպտոսի 'ի մոխրոյ ան-
տի բազմաժամանակեայն մեռելութեանց իւրոց, և 'ի հովա-
նաւորիլ նորա Է համասփիւռ թևօք հզօր երկգլխեան Ար-
ծուոյն Մոսկովացին կայսերութե՛, համասեռ առ իւրն գր-
թալով համասեռ. տածեսցէ, սնուսցէ, և բարձրացուսցէ
զնա 'ի ժամանակի այցելութեան իւրում։ Վասն զի սէր՝ ա-
սէ իմաստասէր, 'ի նմանեաց ծնանի։ Ո՞վ երանի ժամուն
յորում այս անձնայն լինիցի։

Նա՝ Ածային է այցելութիւնս. զի Որ միանգամ և եթ
խօսեցաւ որդւովն 'ի վախճան ժամանակացն 'ի փրկութիւն
մեզ, այլ ո՛չ եւս երբեք խօսիլ առաւելեօք քան զհրեշտակս։
Իսկ արդ՝ զմատակարարութիւն մեծի և հասարակաց խնդու-
թեանս, և զ 'ի վաղուց հետէ ակնկալեալ աւետիս ազատու-
թեան Հայրենեաց մերոց. աւետարանէ ձեզ 'ի ձեռն Օծե-
լոյ իւրում տեառն Ներսիսի Կայսերապսակ Արքեպիսկոպո-
սին մերոյ. որ այնքան մեծ է քան զհրեշտակս. որքան և մե-
ծի մատակարարութեց է քան զնոցայն կատարիչ, լաւ որում
նա դաստիարակ և այցելու եկեղեցւոյ և եկեղեցւոյ դաստի-
արակ հրեշտակաց 'ի խորհուրդ մարմնաւոր տնօրէնութեանց
բանին Այ։ Ինձ չեն կամք երկարել աստանօր 'ի գով Տօնել-
ւոյն այնմիկ, որոյն գործք առաւելուն քան զբանսն։ Բայց մի-
այն զայս թէ՝ 'ի ծագմանէ անտի լուսոյ աւետարանին Քնի
յազգս մեր, կարի և կարի սակաւք 'ի Հայրապետաց գտան
ազգասիրագոյն քան զնա։ —— Օրէն էր սորուեր Քահա-
նայութեան Մովսիսաւանդն օրինաց, կրել 'ի վակաս լան-
ջացն զերկոտասան ակունս 'ի Թիւ երկոտասան որդւոցն Իս-

րայէլի, և մատչիլ ՚ի դաշինս քաղաքութեան։ Այլ մեր այս Քահանայապետ, ո՛չ միայն զյայտնութիւն և զճշմարտութիւն Քրիստոսական հաւատոյս արկեալ զկուրեալ մատչի հանապազ միջնորդել ընդ Ած իւր և ընդ ազգ, այլ և զխական Կայսերական ընչան գերազանց Ասպետութեան, յորում մարգարտաշար փայլէլ չահիւս յեռեալ և ընդելուզեալ կան Ազգիս Հայոց անկեղծ հաւատարմութի և անուն բարի, զանգիտին ՚ի գնոց սպրդուն երակաց երկրի՝ կամ ականց պատուականաց, հանդերձի մատչիլ այսօր յաթոռ շնորհաց Օգոստափառ և ինքնակալ Կայսերն Մոսկովատանեայց, և աղերսել զանձանման գթութիւն նորա ՚ի շինութիւն աշխարհի և ազգիս մերոյ։ Վ՜սկ երանի է մեզ խորայէլ նոր· զի հաճոյս Ած և կայսեր, ծանօթ մե՛ր է, Հայր մեր է, և տէր իսկ մեր է։

Հապա՛յ, առ ձեզ են աւետիքս այս մեծ հեռաւորքդ, առ ձեզ, և առ որդիս ձեր։ Խորհեցարո՛ւք այսուհետև այր զընկերի իւրում զապաստան Հայրենեաց ձերոց ազատել զսիրտս ձեր ի կեաց ներհակաց։ Վառեցարո՛ւք ազգասիրութ և հայրենասիրութ քաջ նահատակս Հայոց Տ՛ին, որ գանձեցին ձեզ ՚ի ջանս իւրեանց զմեծ զայս պարծանս։ Նոքա վաստակեցին նեղեալք, եկա՛յք և մեք ՚ի վաստակս նց հաւատոյ փայլեցո՛ւք։ Մի՛ ևս քաղցրասցեն ՚ի քիմս մեր աղաչեմ սոխ և խստորք Եգիպտոսի, որպէս երբեմն պորտապարար Ազգին Հրէից։ Մի՛ ևս խաբեսցեն զմեզ անպտուղ ուռիքն բաբելոնին անուանք յղփութիւնք ընչից։ Մի՛ ևս առասպելեալ ոսկեծաւք դժոխասար երկրիս Հնդկաց· որոյն ապականարար տապ տօթափին խորշակաց՝ զոսկրս իւր և զստացիչս նոյա գրեթէ ՚ի մի քրայս հալոցաց համանգամայն խարշատէ։ Վասն զի՝ Ած բերանով մարգարէին առ ձեզ կարդայ հրաւէրս· '' Ելէ՛ք ա՛պրեալք յերկրէդ· յիշեցէ՛ք զտէր հեռաւորքդ, և երուսաղէմ խաղաղութենն Հայաստան անկցի ՚ի սիրտս ձեր։ '' Եթէ ծանրասցի մեզ մարմինն ծանրատաղտուկ, եկայք տակաւին սգէ վերկեալ· ելո՛ւք ՚ի Հայաստան հոգւով, մտօք, և կամօք· թողլով օտարութս միայն զառեցեալս ՚ի սմանէ զմարմինս։ Եկա՛յք ժողովուրդք

սեպհական, եկեալք ՚ի Հայաստան ՚ի Հայկականն ասեմ և ՚ի Հռչակաւորն . յամենայն և յամենաբոյսն , յերկիր՝ որ բղխէ զկաթն և զմեղր ։ Եկա՛յք եկեալք ՚ի Հայաստան , ա՛րք եղբարք , ուրանօր պատճառս պատրաստեաց ձեզ նախախնամ տեսչութիւնն , ազնուացուցանել զանձինս . առատացուցանել զզաւակունս , և պայծառացեալ տեսանել զերբեմն կորուսեալ՝ և զայժմ գտեալ զազգ և զընտանիս ձեր ։ Եկա՛յք եկեալք ՚ի Հայաստան . համբուրեսցո՛ւք զաւարճախառն արտասուօք զմերկեալ հող հայրենեաց մերոց ։ Երկրպագեսցուք Տաճարին Դրօշակին Արշակունեաց՝ որ նշչեալն և յարեալ , և այլ ևս ո՛չ մեռանի ։ Պանծս հիւսեսցուք ՚ի մշտադալարթ դափնեաց անդուլ աղօթից , և ՚ի ձիթենայլ բրաբիոնաց անկեղծ հաւատարմութեան . պսակեսցո՛ւք նորօք զքաջզինուորն Հայոց աշխարհին , զերեքհարիւրն ասեմ . որ թէպէտ և թուով սակաւաւորք , այլ արութեամբ բիւրաւորք , սասանիչ եղեն որպէս երբեմն Գեդէոնեանն աշխարհակուլ բանակին Մադիանացւոյն Պարսից , և կարապետք Արքայութեան Արարատայ ։ Նա դարձուցեալ զաղերս մշտանուէր մաղթանաց առ Ած , ըստ փրկելոյն Իսրայէլի .

Երգեսցո՛ւք և ասասցո՛ւք ։

Գոհանամք զքէն բոլորով սրտիւ Ամենակա՛լ Տէր . որ ըստ առատ գթութեան քում անհուն արարեր զմերս հարցն մերոց . և ո՛չ յիշեցեր զանօրէնութիւնս որդւոյս մեղուցելոյ առաջի քո ։ Այլ ՚ի բառնիլ մարդկային հայթայթանաց զամենահնարդ հրաշագործեցեր զքո զօրութիւն . և մեծութեամբ փառաց քոց յայց ելեր քակեալ և կործանեալ տանս Թորգոմայ ։ Լո՛ւր աղաչանաց մերոց մա՛րդասէր . և հայեա՛ց ՚ի բարձրութենէ Աթոռոյ փառաց սրբութեան քոյ ՚ի միահեծան տէր մեր և յօգնատակառ կայսր Ռուսաց ՆԻԿՈՂԱՅՈՍ ՊԱՒԼՈՎԻՉ . պսակեա՛ զնա ամ̅ երկնային և երկրաւոր բարութ̅ . Տո՛ւր նմա և ամենայն քաջ զօրաց և զօրավարաց նորա զյաղթութիւն ՚ի վերայ ամենայն թշնամեաց նորա . Շարժեա՛ տէր զգութ բարերար խնամոց նորա ՚ի վերայ ազգիս մերոյ և Տի

գիրս և փրկեցեր ամենայն զօրութեամբ քով ։ Պարգևեա՛ և մեզ զհոգի ա̃ծային շնորհաց քոց · սիրել զքեզ 'ի վեր քան զամենայն , և զ ի քէն կարգեալ մեզ Թագաւորս՝ առաւել քան զանձինս մեր ։ Տո՛ւր ազգիս Հայոց զշինութիւն և զբարեկարգութիւն յայսմ հետէ մինչև յաւիտեան ։ Մի՛ ևս լինիցի մեզ տէր առելութեամբն առ Թագաւորս մեր՝ ոտնհար լինել ամենիմաստ նախախնամութե̃ ա̃ծեղէն քո մեծութեանդ , և շարժել զբարերարութիւն քո 'ի պատիժ ամբարհաւաճ ձեռնիրկուէնց մերոց որպէս արարաք և կորեաք ։ Առաւտայր ազգիս մերում · մանաւանդ և առաջիկայ ժողովրդեանս զմիաբանութիւն , զարգաւորութիւն , և զհայրենասիրութիւն , և քեզ փառք Որդւոյդ միածնի · և Հոգւոյդ սբյ · յաւիտեանս՝ ամէն ։

Յաւարտել Տիրայու Մեսրոպեին զբանս իւր՝ յարգոյ աթոռակալն առաջարկեաց ժողովոյն յղել զարժանավայել պատասխանս աւետաւոր նամակին շարադրեալ յառաջագոյն 'ի Պարոն Յովհաննիսէ Ալդալեանց , որ և 'ի խնդրոյ ժողովելոյն սկսաւ ընթեռնուլ զայն 'ի լուր հասարակութեան ։ Զկնի ընթեռնլոյ զպատասխանին առաջարկեալ՝ ժողովն միաձայն հաւանութեամբ հաճեցան ընդ այն · և առաջադրեցին զի գաղափարեալ զայն յերիս օրինակս՝ և ձեռնագրեալ 'ի հասարակութենէ մերազնէից տեղւոյս՝ յղեսցեն առ սրբազան Ներսէս առաջնորդն 'ի Տփխիս ։ Իսկ օրինակ վերոյասացեալ պատասխանւոյն է հետագայդ ։

Արհիապատիւ և գերերջանիկ Տն̃ Սրբազան Ներսէսի արք եպիսկոպոսի և հայրախնամ Առաջնորդի ամենայն Հայոց բնակելոց 'ի սահմանս վրաց՝ Աջոյն օծելոյ համբոյր սիրոյ և խոնարհութեան մեծաւ պատկառանօք մատուցի ։

Գերապայծառ Տէր ,

Ո՛չ 'ի մեծանուն իմաստասիրաց ծաղկելոյ 'ի վերջին դարս քրիստոնէութե̃ քաջ 'ի մտի կշռեալ ճշմարիտ պար-

տակմանութիւն մարդոյ՝ հաստատեայ զայս ունել չէին կամին պահելն յամենայն լուսաւոր ազգաց . Մ՝որդո [illegible] : Բա՛ն արդարև լի իմաստութեամբ՝ յորում ամփոփեալ կայ համառօտիւ սկզբունք բնական, ազգային և աստուածային օրինաց . բա՛ն արդարև լի մեծամեծ պտղովք կենցաղօգուտ շահեկանութեան, որով մարդիկ տարբերք 'ի գործս և 'ի բնաւորութիւնս՝ շաղկապեալ կային ընդ միմեանս հանգոյցիւք սիրոյ բնութեան և ազգի . և բաժանորդութեամբ օգտից հասարակաց՝ լինէին գերդաստան մի բազմաթիւ և բարձրելոյն հաճելի, հանապազ հոգւով չափ ճգնեալ յօգուտ հայրենեաց և յանշամ զուարճացեալ ընդ յաջողուածս ազգային բարեկարգութեան և երջանկութեան :

Այլ արդ՝ քա՛ջ իմացո՛ք զստուգութիւն վերոյին գեղեցիկ առածի, յորժամ հասեալ առ մեզ աւետաւորս և երկարաբան նամակ սրբազնութե՛ ձերոյ տուեալ ի 28 Ապրիլի անցելոյ՝ պատմեաց 'ի լսելիս մեր զ'յանկալի լուր խաղաղաւէտ հաշտութեանն եղելոյ 'ի մէջ Պարսից և Ռուսաց, և զբերկրալի վերադարձ ազատութեան յ՛ն մեր Արարատեան . Ո՛վ անճառելի շնորհաց ողորմութեանն Ա՛յ, որ յետ բազմամեայ ամպոյ և մառախղոյ քաղաքական խռովութեց և բռնակալութեանց՝ հաճեաց ծագել 'ի հայրենիս մեր զկենսատու ճառագայթ երկնային խաղաղութե՛ . ո՛վ անսահման գթածութեան Փրկչին մերոյ, որոյ արդարութիւնն յաղթեալ յողորմութե՛ անյուշ արարեալ եթող զմեղս մեր . և փրկեաց զմեզ 'ի նեղութեանց պանդխտութեան և բռնաւորութեան՝ որոց մատնեալ էին զմեզ մեղայն մեր յորդութիւնք . ո՛վ երջանիկ բարեբաստութեան Հայկազեանս ազգի՝ առ որ գարնանաբեր թեւովք թռուցեալ ժամանեաց ազատութին երկնածին յետ երկարժամանակեայ ձմեռնախառն սառնամանեաց գերութեան : Ջի՛նարդ ուրեմն ո՛չ բաւական սիրտք մեր զաղբիւրս անհուն գոհունակութեան առ ամենազօր Պարգեւիչն բարեաց, առ 'ի օրհնել միաբերան և 'ի բոլոր սրտէ զանուն նորա մեծութեան վասն իւրոյ յատկական շնորհաց՝ ո-

ըոլէք զանկեալ ազգ մեր մխիթարելով սփոփեաց • զի՞արդ հեռաւորութիւն տեղւոյ խափան լինի մեզ խոստովանիլ զերախտագիտութիւն մեր առ երկնակառոյց հզօր տէրութիւն Մոսկովայ՝ որք ի սիրոյ բնութեան և քրիստոնէական կարեկցութե շարժեալ յառաջ մատեան առ անկեալս յիւրեանց նախնական չքեղութեանց, և ձեռն տուեալ նոցա հանին զնոսա `ի խաւարչտին գբոյ անյոյս գերութեան `ի լուսանորոգ վայելչական ազատութեան · զի՞արդ պանդխտութիւն մեր յօտար երկրին Հնդկաց արգել լինի մեզ ուրախակից լինել ընդ համազգիս մեր փրկեալս և վերադարձեալս յառաջին տունս իւրեանց սեպհական վասն մեծամեծ շնորհացն զոր Տէր եհեղ `ի մեզ յանսահման ծովէ իւրոյ երկնաբուղխ առատութե • Ո՞հ, թուի մեզ լսել բերկրանօք `ի հեռուստ զլիաբերան ձայնս խնդութեան համազգեաց մերոց, զորոց զարձագանգս կրկնեալ դարձուցանեն նոյն իսկ լերինքն Արարատայ • և `ի միաբարբառ աղաղակէ նոցա քաղցրաձայն լսելի լինի օրհնութիւն Երկնաւորին, երախտագիտութիւն առ տէրութիւն Կայսերն Նիկողայոսին և հասարակաց երջանկութիւն տարածեալ ընդ ազգն գլխովին ։

Այսպէս՝ եթէ սակաւիկ մի դարձուսցուք զմիտս մեր յերջանիկ ժամանակս ազգային պատմութեան մերոյ, և բաղդատեսցուք զառաջին վիճակ ազգին մերոյ՝ որք ընդ տէրութե Արշակունեաց, ընդ արդի վիճակ նոցա ընդ հովանաւոր պաշտպանութեամբ Մոսկովայ, արդարև գտցուք զոսա առաւել բարեբաղդս քան զնախորդսն իւրեանց ի մասին քաղաքական արտօնութեանց և ազգային բարօրութեան • քանզի թէպէտ և առաջինքն չէին անկեալ ընդ գերութեամբ այլազգի բռնաւորաց, բայց և չէին `ի կատարեալ ազատութեան՝ գոլով հանապազ նեղեալ `ի քաղաքական բռնութեանց և յառանձին խռովութեանց • իսկ այժմ ոչ միայն Հայք թափեալ են `ի ձեռաց օտարին գերողաց և բնակին յանդորրու `ի հայրենիս իւրեանց սեպհական • այլ և ընդ խաղաղաւէտ դրօշակաւ Ռուսաց վայելեն զկատարեալ ազատութիւն հանդերձ երևելի քաղաքական պատուասիրութեամբք • յայնժամ կամքն և սուրն բազում անգամ ունէին զտեղի օրինաց, իսկ

այժմ բանն և խրատանքն միայն են առաջնորդ յիրողութիւն հասարակաց. յայնժամ բազմութիւնն ՚ի հարկէ բերեալք իբրև օրինաց հպատակութիւն ընծայէին թագաւորին, իսկ այժմ նոյն իսկ թագաւորն հպատակ է օրինաց երկրին. և զի՞ է մեզ աւելի ընդ երկար բանս դեգերիլ. ո՞չ ապաքէն ծնութիւն օրինաց իշխէր զազգ մեր ՚ի յետին վիճակ թշուառութեան. և մի թէ ո՞չ է ողբալեալ քերթողահայրն մեր յաւուրս իւր զաւաղելի բարձումն ազատութեան. բայց ո՞վ զարմանալի փոփոխութեւս. տեղի ետուն աւուրք դառնութե՛ ՚ի մէնջ, և վերադարձաւ առ մեզ կրկնաւորդ ժամանակ քաղցրութեան։ Զարթի՛ր, զարթի՛ր Խորենացիդ մեր հայր պատմական. զարթի՛ր և տես զերկնահրաշ փոփոխութիւն վիճակի քոյոյ աշխարհին։ Որ յառաջ սուգ առեալ ողբայիր զբարձումն ազատութե՛ և խաղաղութեան, այժմ զուարճացեալ բերկրեա՛ց ընդ նորոյն վերադարձ բարերջանիկ. քանզի ահա՛ օծեալն և ընտրեալն Ա.Տ՛ բարեպաշտ Նիկողայոս Կայսրն Ռուսաց գթացեալ սիրով ՚ի վերայ ազգային աղիտից մերոց՝ թափեաց զմեզ ՚ի ձեռաց բռնաւորացն Ազայէլի և ժողովեաց զմեզ ՚ի տուն մեր սեպհական. ունելով ՚ի ձեռին ըզդաստառակ կարեկցութե՛ սրբէ յաչաց այրեացն զարտասուս տրտմութե՛. ուսուցանէ չրթանց որբոցն ծիծաղիլ զորս Ազայէլ դատապարտեալ էր հեծեծել հանապազ. լուծանէ քաղցրութեամբ զշղթայս ՚ի ձեռաց կապելոց որք յամս յամայրս կային ընդ դրօշակաւ բռնութեան. տայ քաջալերս արիութեան զօրականաց՝ որք յաշխարհ օտարաց ունակայեալ էին միայն ՚ի բարս կնատութե՛. շնորհէ ազատաց զախտողուս ազնուութեան՝ զոր ՚ի հարկէ պարտաւորեալ էին փոխանակել ընդ անուան ստրկութեան. զհուսկն աստայուք, յապահովս կացուցանէ զերջանկութիւն հասարակաց և խնամ տանի հայրաբար վերանորոգ անդորրութե՛ և բարգաւաճութեան Հայաստանեայց Ծին ընդհանրապէս։

Նա աւանիկ՝ ՚ի մասին ազատականն ուսման և մշակութե՛ Հայկական դպրագիտութեան այս դար մեր եղև եւս առնէ զառաջին ժամանակօք՝ յորս բարեյիշատակ նախահարք մեր ծախէին զկեանս իւրեանց ՚ի խոյզս հոգեշահ գիտութեանց.

՛քանզի՝ Թէպէտ և վայելէին նոքա զներքին խաղաղութ՛ մնայ՝ որ ծնունդ է միայն ճշմարիտ ազատութեան, և առաքինացեալ մարտիրոսական կենցաղոյն 'ի խստակրօն վարս պարկեշտութեան և ճգնութ՛, սակայն նեղեալ 'ի յարածուփ ընտանի խռովութեանց և ահաբեկեալ 'ի յաճախական վրտանգաբեր յարձակմանց Թշնամեաց՝ զենիկ տունս իւրեանց ը՛ բաւիղս լերանց փոխանակէին. ո՛վ դառնութեան ժամանակայն առաջնոյ, յորժամ իմաստութիւնն և գիտութիւնն ո՛չ գտեալ զհանդարտ ոտնկայ 'ի քաղաքս՝ 'ի քարանձաւս ըստրէին տեղի ապաւինի. որպէս և յաւերժայիշատակ իշխանն տաղաչափից մերոց տեսեալ հոգւոյ տրտմութեամբ զաւերումն դպրոցաց ազգայնոց յերեսաց պատերազմաց և զքարձումն Հայկական դպրութեան՝ յաւելով ասէր. Որք մեր վարժարանք 'ի Եղծանարացն պատրաստեալ հրամանաց, և հաւ յոյժ փառաց և պարգևաց յառաջադիմելոյն յենմանց. որ մանաւանդ մանկաբարձութեան են ապաշնորհաւոր պատճառ փառաց հրեշտակաց: Բայց ո՛վ բարեյաջող փոփոխութեանց վիճակի ազգին Հայոց՝ ընդ որ ժամանակն ինքնին մի 'ի բերան եղեալ զարմանոյ, զի զմեծամեծս տեսանէ առ իւրև սքանչելիս 'ի վերուստ հրաշագործեալ: Զարթիր, զարթիր Շնորհալիդ մեր անմահացեալ. զարթիր և տես հրճուանօք Թէ զի՛արդ յաւուրս մեր անարգամեծային ԱԾ մեծարեալ սիրով զազգ մեր ուսումնական քաջալերութեամբք. հաճեցաւ Արարչապետն տիեզերաց 'ի վերայ աներանձոյ գրագիտութ՛ մերոյ կառուցանել նորոգ զմեծապարծ շինուածս Ճեմարանաց. յորոյս 'ի միջի մեր զարս հայրենասէրս առ 'ի գոյից իւրեանց հիմնել զվարժատունս գիտութեանց. զօրավիգն եղև հաստարիմ ծառայի իւրոյ Տեառն Ներսիսի քոյդ անուանակցի առ 'ի ազատաքայլ ճեմացուցանել զհայեցի մանկտին 'ի հոյակապ վարժարանս հաստարակաց. անհնարին փայլի 'ի վերուստ իբրև ծիածան յոյս լուսաւորութ՛ Հայազգի սերնդոյն զկնեայ ողջամիտ և ա՛ծահաճոյ գիտութ՛ք. անհնարին հարազատ լեզուագիտութ՛ն Հայաստանեայց իբրև զառասպելեան փիւնիկ ունի վերստին 'ի մոխրոյ բորբոքեալ մեռելութ՛ կենդանածնիլ վերանորոգ գեղեցկութ՛.

կամ լաւ ևս ասել, արեգակն իմաստութեան ծագեալ է 'ի հորիզոն Արարատեան աշխարհին, և հանդերձեալ է կենսատու զօրութեամբ իւրով իմաստնացուցանել զորդիս Հայկայ 'ի զարմացումն ընդհանուր աշխարհի ։

Արդարև՝ զկնի ամենակալին Այ պարտական է ազգ մեր մարդասէր ազգին Մոսկովայ վասն ամենայն ակնկալեալ բարեմանութեանցն՝ զոր յուսալի է համազգեայ մերոյ վայելել ընդ նորին ամենաքաղցր և ազատ պաշտպանութեամբ ։ Յայժմ վայրի յանդիման լինի մտաց մերոյ այլ ինչ հրաշք արժանի յիշատակի ․ քանզի յաւուրց անտի լուսաւորութեան Հայաստանեայց աշխարհին աւետարանական քարոզութեամբ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչի, յորժմէ քրիստոնէայ տէրութենէ ետես ազգ մեր այսքան խնամս մարդասիրութեան և քրիստոնէավայել պաշտպանութեն, բայց միայն 'ի գերահռչակ ժառանգակալութենէն մեծին Պետրոսի ․ և կարի քաջ յիրաւի ․ քանզի որ ինչ միանգամ հարկաւոր է կեալ զթագաւորն ընդ Այ և զժողովուրդն ընդ Թագաւորին՝ զբարեմասնութիւնս ամէն հոգեկանս, բարոյականս և իմացականս, զայն ամենայն ժառանգեալ սեպհականէ Ցարն Ռուսաց յիւրոց տանելի նախորդաց ։ Եթէ սուղ ինչ զմտաածիցեմք զսկզբնական պատճառս գերբնական մեծութեն Մոսկովայ, ոչ կարի յոյժ զարմասցուք ընդ փառաւոր պայծառութիւն սորա՝ որք յետին գոլով կարգաւ յանուանս քաղաքականութեան, առաջինն եղեն 'ի քաջարութիւնս զօրուն ։ Դարձուցեալ զմիտս մեր 'ի սկիզբն ութնեւտասներորդ դարուն՝ քաջ նկատեսցուք զազգաօգուտ գործս մեծին Պետրոսի ․ որ վառեալ սիրով Այ և մարդկան՝ ուշ 'ի կուրծս եդ ծաղկեցուցանել զիւրն նորատունկ տէրութիւն ․ այսպիսին նախանձախնդիր հոգւով ուղևորեալ ընդ ամենայն լուսաւոր աշխարհս Եւրոպիոյ՝ եբեր 'ի հայրենիս իւր 'ի դարձի զարուեստս և զգիտութիւնս ընթերականս ազգաց արևմտեայց ․ եմոյծ յիւրայինսն զհոգի քաղաքականութեան ․ վառեաց 'ի սիրտս հպատակաց իւրոց զսէր հայրենեաց և ազգի մարդկան ․ միշակեաց զմիտս համազգեաց իւրոց ողջամիտ ուսմամբք ․ հոգացաւ հայրօրէն զերջանկութիւն առանձնաւորաց և զբարին

հասարակաց․ և այսքանեօք հայրենասիրական մեծագործութեք ազգին իւրոյ բարերարեալ՝ ի ձայնէ հասարակաց ընծայագնախանձելի պատուանուն ՄԵԾ յամենեցունց Հայր հայրենեաց վերաձայնեալ։ Արդ ընդ թևատարած հոգւով անձնուիրութեն Պետրոսի Մեծի անտուն անտերունչ Հայքս գտաք զխաղաղաւէտ պաշտպանութիւն․ և սէր ազգի մարդկան՝ որ զթագաւորս և զիշխանս բարձրացուցանէ յիմաստութի Երկնաւորին՝ բարձրացոյց զազգ մեր ՚ի քաղցր յորդեգրութիւն կայսերն Ինքնակալին։ Այսպիսի մեծամեծ բարերարութեք և մեր շնորհապարտեալ՝ արժան է մեզ ցուցանել նմա զաւհատաչեաց հնազանդութեան մերոյ և սիրոյ՝ լինելով միշտ հաւատարիմ ՚ի տէրունի գործս յանձնեալս մերոյ ազգին։ Եթէ ումեմն Շվէտի կալանաւորելոյ ՚ի յաղթական զօրաց Մեծին Պետրոսի քաղցր երևեցաւ գերութիւնն ընդ ձեռամբ Ռուսաց, ապա ո՞րքան առաւել քաղցրագոյն և անկշիռ է ազատութիւնն՝ զոր ազգ մեր այժմ վայելէ ընդ հովանաւոր դրօշակաւ նոցա։ Եւ զի՞նչ այլ տրիտուր շնորհակալութեն ունիմք Ամենապանծ պաշտպանին մերոյ նուիրել, եթէ ոչ ըստ մարդաթուութ անհատից ազգին զկենդանի արձանս երախտագիտութե՝ նորին վեհափառ Մեծի կայսերուն վերընծայել։

Դարձեալ՝ յետ խնամածու տէրութեն Ռուսաց պարտական եմք Հայքս և ձերդ գերամեծար սրբազնութե վասն անհամեմատ երանութեն՝ զոր պարգևեաց մեզ Ած ՚ի ձեռն ընտրեալ օծելոյ իւրոյ և սիրելւոյ․ քանզի բերեալ յանձին զնմանութիւն Ճշմարիտ հովուի՝ արթուն մտօք և Ածահաճոյ երկիւղածութեամբ ազնուացար և նկրտիս ՚ի վայրի գալարուոջ զբանաւոր հօտ քոյ սնուցանել և ՚ի ջուրս հանգստեան տածել և ՚ի փարախս անդորրաւէտ կենցաղավարութ հաւաքել․ և ոչ այսչափ միայն՝ այլ և գոյն ՚ի գործ եդեալ աշխատիս շնորհել մեզ ընդ մարմնոյ դիւրութեան և զհոգւոյ Ածատիպ պայծառութիւն՝ հիմնարկութեամբ ազգաօգուտ վարժարանաց՝ յորս ի սերմանց ողջամիտ գիտութեց ընձիւղեալ բարգաւաճեալ զօրանան մարդատունկք հաճոյականք յիմանալի նուէրս սեղանոյ Ածութեան։ Վկա՛յ են երկինք ամենայն հայրենասիրական գործոյդ՝ որով դարձուցա-

Նել ջանաս զազգ մեր յիւրեանց նախնական շքեղութիւն. վկայ են արդեանց կենդանօգուտ վաստակոցդ և օգոստափառ դուռն և աւագորեարն Ռուսաց, յորոց ընկալար զկայսերական նշանս մեծագործի և ունողի հոգւոյ ազնուականի. վկայ են ա̄ծահաճոյ բարերարութեանց քոյ և ազատեալքն ՚ի ձեռաց Ազայէլին, որք այսուհետև անվրդով բերկրութ̃բ կենդաղալարեալ յիւրեանց բնիկ աշխարհի՝ ՚ի քեզ ծանիցեն երախտագիտութեամբ իւրեանց հայր, հովիւ և խնամոտ հոգաբարձու: Եւ մի թէ արժան իցէ մեզ պանդխտացելոցս յայս հեռաւոր աշխարհ Հնդկաց անմասն գտանիլ ՚ի գոհութենէ ազգին՝ որում հասարակաց ձայնն զսրբազնութիւնդ կացոյց արժանի. խոստովանիմք և մեք առ հայրենասիրութիւնդ զմեր երախտագիտական շնորհակալութի՝ որ գրով և բանիւ ոչ չափի, այլ մտօք և եթ իմացեալ լինի. գովեմք մեք ՚ի սրտէ զհոգի ազգասիրութեանդ. յորդորեմք զձեր սրբազնութիւնն յևս մեծամեծ իրողութիս ազգաօգուտս և արժանավայելս տոհմին Հայկայ. և ակնկալոյց եղեալ սպասեմք ընթեռնուլ ՚ի յարգութենէդ զայլ աւետաւոր լուրս՝ զոր քաղցր իցէ ականջաց լսել և մտաց իմանալ: Աստանօր խիթալի երևի մեզ նամակի մեր երկարաբանութ̃ի, որ առ բազում համարի պատերազմ լսելեաց. բայց աւետաւոր բանք թղթոյ սրբազնութեանդ այնպէս փառեալ են ՚ի հոգիս մեր զաշխոյժս սիրոյ հայրենեաց մերոյ, մինչ փափագելի երևիլ մեզ զարուեստագործ թևս առեալ դիմել ՚ի թռիչս հողմոյ ՚ի հայրենիս մեր ցանկալի, եթէ անհնարութիւն իրայն ոչ ՚ի դերև հանէր զառասպելեալ Ճարտարութիւն թևակազմութ̃ն Դեդաղոսի: Արդ՝ թէպէտ ժամանակն ոչ ներէ մեզ փութանակի ելանել յերկրէ պանդխտութեան մերոյ, սակայն ջերմագին եռանդեամբ յուսամք ՚ի խնամս բարձրելոյն և ՚ի քաջալերս որդիասէր հայրութեան ձերոյ, զի յընթացս միոյ կամ երկուց ամաց յաջողեսցի ՚ի վերուստ եթէ ոչ ամենեցուն՝ գէթ բազմաց՝ ՚ի Հայազգի բնակչացն Հնդկաստանի գալ առ բնածին երկիրն մեր և վայելել անդ ՚ի միասին ընդ համարիւն մերազնէիցն զայն ազգային պարծանս՝ զոր տարադրութեամբ կորուսաք, զայն

քաղաքական ազատութիւն՝ զորոյ զոգին գրեթէ մեռուցեալ է ընդերկար գերութիւն, և զայն հասարակաց երջանկութի՛ յորոյ կարօտութենէ բիւրաւոր Հայազգիք յոգւոյ հանելով վճարեցան յաստեացս ։

Իրաւի բերկրին նոյնգունակ սիրտք մեր 'ի խորհիլ զի անդորրութիւն սրբոյ աթոռոյ Էջմիածնին իբրև մասն բոլորին՝ հետևորդ է խաղաղութեան Արարատեան աշխարհին. քանզի ըստ աւետաւոր բանից սրբազնութեան ձերոյ ծնընդեր եռամեծ քահանայապետն մեր ԵՓՐԵՄ վերադարձեալ պատուով 'ի տեղի իւրոյ հոգևոր գահերեցութե՛ իբրև Ճշմարիտ փոխանորդ երկնաւոր փեսային յառագաստ օրհնեալ հարսնարանին՝ ունի զօրութե՛ն սուգ մօրն մերոյ սրբոյ Էջմիածնի փոխել յուրախութիւն վերնային. ոչ ևս այսուհետև ողբերգութիւնն Երեմիայի ի ձայն համարեսցի նմին, քանզի այրին լցեալ յառաջ տրտմութեամբ 'ի մէջ այլակրօնից՝ վերստին ժողովեսցէ 'ի գիրկս իւր զհարազատ որդիս իւր ըստ հոգւոյ ծնեալս 'ի մկրտութեան սրբոյ աւազանին. որք հանդարտեալք ընդ թևատարած գթովք մայրութե՛ նորա՛ կազմեսցեն զիմանալի սեղան երկնային օրհնաբանութե՛ ապահովեալք յանձուստ յերեսաց բռնութե՛ տարերաց և մարդկան ։

Թէրևս ցանկալի էր լսելեաց ձերոյ իմանալ և զորպիսութիւն մերազնէից յայս կողմանս բնակելոց 'ի մասին կենցաղօգուտ ուսմանց և լեզուագիտութեան. և առ 'ի լնուլ զփափագ սրբազնութեանդ, կամ է մեզ համառօտիւ ծանօթութիւն տալ զսմանէ ։ Քա՛ղցր է մեզ ծանուցանել զի Հայք բնակեալք յաշխարհ Հնդկաց յաւուրս մեր գրագիտական բարեմասնութեամբք վիճակեցան մեծագոյն ևս քաջադիպութեանց քան զորս յառաջնումն նախորդք իւրեանց վայելէին ։ 'Ի Մարդասիրական Ճեմարանէ մերոյ հաստատելոյ իբրև ութն ամօք յառաջ մինչ ցարդ արտաքս ելին բազում Հայեցի մանկտի քա՛ջ հրահանգեալք 'ի հարազատ լեզուագիտութեան հայրենեաց և Անգղիացւոց և 'ի պիտանի ուսմունս արևմտեայց ։ Այժմ ևս կան 'ի դպրատան անդ եօթանասուն համբակք պարապեալք 'ի տքնութիւնս ողջամիտ ուսման, որ 'ի լուսաւորել զմիտս հաւասարէ և զբարուս

մարդկային բնութեան։ Ճեմարանն ունի յինքեան հաստատեալ զգործատուն մի տպագրութեան՝ յորմէ ի լոյս ընծայեցան քանի մի ընտիր և ազգաշահ մատեանք, և զգրատուն մի փոքրիկ՝ Արարատեան Գրադարան յորջորջեալ։ Այսպէս բարեյաջող է այժմ վիճակ մեր ազգային. և ակնունիմք զի շնորհօք Տեառն և աղօթիւք սրբազնութեան ձերոյ համազգիք մեր այսուհետև ևս քան զևս պայծառասցին գիտութեք և քաղաքական բարեմասնութեամբք.

Ցանկալով բարօրութեան և երկարութեն կենաց սրբազնութեանդ՝ կալով մնամք

Յարգութեան ձերում ամենախոնարհ ծառայք՝

՚Ի Կալկաթա, ՚ի 7
Փետրուարի, 1829։

Սուրբ Ամենափրկչի յետին ծառայ Գրիգոր Աբեղայ՝ իբր
Հնդկայ Նուիրակ Նոր Ջուղայեցի.

Տէր Յովսէփ Ստեփաննոսեան։
Տէր Անդոն Աւագեան։
Տէր Աբրահամ Տէր Կարապետ Տէր Մարգարեան։
Աւետ Աղաբէգեան։
Սարգիս Յովհանեան։
Յարութիւն Աբգարեանց։
Ղազար Աղաբէգեանց։
Գրիգոր Աբգարեանց։
Ջնթլում Աւետեանց։
Ս. Յ. Սարգսեանց։
Աւետ. Ջ. Աւետեանց։
Փիլիպպոս Ծատուր Գէորգեանց։
Յ. Գալուստեան։
Էմին Յովսէփ Էմինեան։
Մկրտիչ Սարգիս Յովհանեան։
Ղազար Սէթեան։
Յարութիւն Աբրահամեան։
Ածատուր Պետրոսեանց։

Գրիգոր Ա՟ծատուրեանց ։
Գրիգոր Ա՟ծատուր Մուրադխանեան ։
Ստեփաննոս Զ. Աւետեանց ։
Ղազարոս Յարութիւն Աւետիքեանց ։
Կարապետ Յարութիւն Աւետիքեանց ։
Գրիգոր Յարութիւն Աւետիքեանց ։
Խաչատուր Յովհաննեանց ։
Գէորգ Գրիգորեանց ։
Վարդան Գասպարեանց ։
Գասպար Վարդան Գասպարեանց ։
Մարտիրոս Միքայէլեանց ։
Ռաֆայէլ Մարտիրոս Միքայէլեանց ։
Վարդանէս Յարութիւն Վարդանէսեանց ։
Խաչիկ Ա՟ծատուր Գէորգեանց ։
Յարութիւն Մանուկ Դալթեանց ։
Գէորգ Աւետեանց ։
Յովհաննէս Աւդալեանց ։
Ծատուր Վարդանէս Տէր Ստեփաննոսեանց ։
Մանուկ Մելքում Մանուկեանց ։
Յորդանան Բարսեղեանց ։
Կարապետ Յարութիւն Վարդանէսեանց ։
Կարապետ Յակոբեանց ։
Յօվհան Յակոբեանց ։
Կարապետ Յովհաննէս Պետրոսեանց ։
Եսայի Թումիկեանց ։
Նիկողայոս Յարութիւնեանց ։
Ռաֆայէլ Զաքարայ Շիրխօնեանց ։
Պետրոս Յակոբ Պօղոսեանց ։
Ա՟ծատուր Գասպարեանց ։
Յովհան Մովսէսեանց ։
Քաթօլայ Հաննայ Ասլար ։
Մնացական Տէր Բաղդասարեանց ։
Ստեփաննոս Յակոբ Յովսէփեանց ։
Ա՟ծատուր Պողոս Ա՟ծատուր ։
Մարգար Զօրէրեանց ։

Գալուստ Յովհաննէսեանց ։
Յովհաննէս Ջնթլում Աւետեանց ։
Մալխաս Սահակ Մալխասեանց ։
Յովհանջան Եղիազեան ։
Պօղոս Մինասեան ։
Մելքում Գասպարեան ։
Մանուկ Նիկողայոսեանց ։
Դաւիթ Յովհաննէսեանց ։
Խաչիկ Յովհաննէս Սարգսեանց ։
Ստեփաննոս Միքայէլեան Կարապետեանց ։
Եղիազ Աւգալեան ։
Ասլան Հազարապետեանց ։
Գէորգ Փանոս Բաղրամեանց ։
Գրիգոր Թորոսեանց ։
Յովհաննէս Մարտիրոսեանց ։
Մկրտիչ Մարտիրոսեանց ։
Աւետիկ Նազարեանց ։
Մկրտիչ Յ․ Մուրադխանեանց ։
Գաբրիէլ Եղիազ Գրիգորեանց ։
Նիկողայոս Սահակ Մալխասեանց ։
Սիմէոն Տէր Գրիգորեանց ։
Դաւիթ Բարսեղեանց ։
Գէորգ Միքայէլեանց ։
Մկրտում Կարապետեանց ։
Գասպար Վարդանէսեանց ։
Մարտիրոս Դաւթեանց ։
Աղէքսանդր Փանոսեանց ։
Կարապետ Տէր Յարութիւն ։
Մեսրոպ Դաւթեան Թաղիադեանց ։
Ղեւոնդ Յ․ Ալաքեանց ։
Նիկողայոս Աւետիկեանց ։
Մովսէս Յարութիւն Թիֆլիզեցի ։
Պետրոս Յովհաննէս Սարգսեանց ։
Ստեփաննոս Վարդան Գասպարեանց ։
Գէորգ Մանուկ Շիրխոսեանց ։

Կարապետ Գրիգոր Մովսէսեանց ։
Աղէքսանդր Ստեփաննոս Պետրոսեանց ։
Եփրեմ Սիմէօնեանց ։
Ղազար Սիմէօնեանց ։
Մարտիրոս Թադէոս Աբգարեանց ։
Գէորգ Յովսէփեանց ։
Գրիգոր Դաւթեանց ։
Մարտիրոս Սարգիս Յովհանեանց ։
Ծատուր Գրիգորեանց ։
Աւետ Յովսէփ Յովհաննէսեանց ։
Յովսէփ Աւետ Աղաբէգեանց ։
Մկրտիչ Յովսէփ Յովհաննէսեանց ։
Մարտիրոս Յարութիւն Վարդանէսեանց ։
Խաչիկ Տէր Ածատուրեանց ։
Պօղոս Որդանանեանց ։ *

Զինչ ընթեռնլոյ զպատասխանն առաջարկեալ՝ առաջադրեցին տպագրել զայն միանգամայն և զա̃մ անյս ժողովոյն, և ՚ի տպագրելոյ անտի գրքանի մի օրինակս յղել սրբազան Ներսէս առաջնորդին ։

Ապա Պ̃ն Խաչիկ Ա. Գէորգեանն առաջադրեաց հետագայ բանիւք մատուցանել զշնորհակալութի̃ս Պ̃ն Պօղոսի Որդանանեան սակս իւրոյ ազգասիրական վաստակոյն ։

Յայս ժողովել զուարճալի ամենայն հայրենասէր Հայկազնոյ՝ թերի լինէր պարտականութ̃ն ժողովելոյն, եթէ ոչ մատուցանէին զորիտուր փոխարինի ազգասիրութեան յարգոյ տանուտէր Պարոն Պօղոսին՝ որոյ տունն եղև մեզ այսօր լսարան ազգային աւետեաց. և ժողովարան համարին Հայկազանց վառելոյ ՚ի սէր հայրենեաց ։ Յայսպիսի խորհրդածութեանց ստիպեալ՝ համարձակիմ առաջադրել զի ժողովս այս մատուսցէ զիւր անկեղծ և բազում շնորհակալութ̃ն յարգոյ Պարոն Պօղոսի Որդանանեան սակս իւրոյ ազգասիրական աշխատանացն ։

* Ձեռնագիրք ամենայն են թուով 104 ։

Հուսկ ամենայնի՝ Պարոն Յարութիւն Գալֆայեան առաջարկեաց ժողովոյն դարձուցանել զգոհունակութիւն իւրեանց Պարոն Աւետին Աղաբեգեան սակս բարեկարգ եղանակաւ վարելոյ զպաշտօն աթոռակալութեանն յայսմիկ հայրենասիրական ժողովի։

(Ձեռնագրեալ) ԱՒԵՏ ԱՂԱԲԷԳԵԱՆ։

Ատենապետ։

Եւ այս բանանայն նմանականայն ՚ի նոյն գիրս գլուխ 29 · համար 10 ։

Բազումք անիրաւութեան աղագաւ ոչ փոխատրեցին ։

Ընթեռնուլ 1342 անգամ ։

---

ն ի ց ե ր տ ա խ ո փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ ո խ ա տ ր ե ց ի ն
ի ց ե ր տ ա խ ո փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ ո խ ա տ ր ե ց ի
ց ե ր տ ա խ ո փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ե ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ ո խ ա տ ր ե ց
ե ր տ ա խ ո փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ե ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ ո խ ա տ ր ե
ր տ ա խ ո փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ւ թ ե ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ ո խ ա տ ր
տ ա խ ո փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ ո խ ա տ
ա խ ո փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ ո խ ա
խ ո փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ ո խ
ո փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ ո
փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ի ր ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ
չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ի ն ի ր ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ ա ւ ո չ
ո ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ի ն ա ն ի ր ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ ա ւ ո
ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ի ն ա ք ա ն ի ր ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ ա ւ
ա գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ի ն ա ք մ ք ա ն ի ր ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ ա
գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ի ն ա ք մ ւ մ ք ա ն ի ր ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ
ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ի ն ա ք մ ւ ո ւ մ ք ա ն ի ր ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա
ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ի ն ա ք մ ւ ո զ ո ւ մ ք ա ն ի ր ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ
ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ի ն ա ք մ ւ ո զ ա զ ո ւ մ ք ա ն ի ր ա ւ ո ւ թ ե ա ն ա
ն ա ե թ ւ ո ւ ա ր ի ն ա ք մ ւ ո զ ա Բ ա զ ո ւ մ ք ա ն ի ր ա ւ ո ւ թ ե ա ն
ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ի ն ա ք մ ւ ո զ ա զ ո ւ մ ք ա ն ի ր ա ւ ո ւ թ ե ա ն ա
ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ի ն ա ք մ ւ ո զ ո ւ մ ք ա ն ի ր ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ
ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ի ն ա ք մ ւ ո ւ մ ք ա ն ի ր ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա
գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ի ն ա ք մ ւ մ ք ա ն ի ր ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ
ա գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ի ն ա ք մ ք ա ն ի ր ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ ա
ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ի ն ա ք ա ն ի ր ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ ա ւ
ո ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ի ն ա ն ի ր ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ ա ւ ո
չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ի ն ի ր ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ ա ւ ո չ
փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ի ր ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ
ո փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ր ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ ո
խ ո փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ա ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ ո խ
ա խ ո փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ ո խ ա
տ ա խ ո փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ւ ո ւ թ ե ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ ո խ ա տ
ր տ ա խ ո փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ւ թ ե ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ ո խ ա տ ր
ե ր տ ա խ ո փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ե թ ե ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ ո խ ա տ ր ե
ց ե ր տ ա խ ո փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ե ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ ո խ ա տ ր ե ց
ի ց ե ր տ ա խ ո փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ ո խ ա տ ր ե ց ի
ն ի ց ե ր տ ա խ ո փ չ ո ւ ա գ ա ղ ա ն ա ղ ա գ ա ւ ո չ փ ո խ ա տ ր ե ց ի ն

---

Որով երանելեաց բազում կամ անձնայն բան հնար է դասակարգել , ընծայեալ ՚ի գրասենեակ պատանեկաց ազգիս ։

՚Ի ՊՈՂՈՍ ՈՐԴԱՆԱՆՑ ։

՚Ի Մադրաս, փետրուարի 25, 1814 ։

# ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊ։

Կերպ բառախաղութեան Տառից Բանի էջը որով ընթեռնանի այն Բազում անգամ ուղիղ ` ի գլխագրոյ երե-
ւոյ ` ի ներքոյն։ Զարմանալի բառախաղութիւնս այս Սողոմոնի յեղանակաւորեալն գլուխ 30, համար 3։

Որ ուսուցանէ զորդի՝ նախանձաբեկ առնէ զթշնամիս իւր։

Ընթեռնանի ` ի ներքոյ բառախաղութեան առաւել 1628 անգամ ուղիղ ` ի ներքոյն գլխագրոյ Ո ` ի։

---

ր ւ ի ս ի մ ա ն շ թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ թ շ ն ա մ ի ս ի ւ ր
ւ ի ս ի մ ա ն շ թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ թ շ ն ա մ ի ս ի ւ
ի ս ի մ ա ն շ թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ թ շ ն ա մ ի ս ի
ս ի մ ա ն շ թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ թ շ ն ա մ ի ս
ի մ ա ն շ թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե ա կ ռ ն է զ թ շ ն ա մ ի
մ ա ն շ թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ թ շ ն ա մ
ա ն շ թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ թ շ ն ա
ն շ թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ թ շ ն
շ թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ թ շ
թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է ն է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ թ
զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է ն ա ն է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ
է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է ն ա ց ա ն է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է
ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է ն ա ց ւ ց ա ն է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն
ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է ն ա ց ւ ո ւ ց ա ն է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ
ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է ն ա ց ւ ո ս ո ւ ց ա ն է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա
կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է ն ա ց ւ ո ս ւ ս ո ւ ց ա ն է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ
ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է ն ա ց ւ ո ս ւ ո ւ ս ո ւ ց ա ն է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե
բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է ն ա ց ւ ո ս ւ ո ր ո ւ ս ո ւ ց ա ն է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ
ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է ն ա ց ւ ո ս ւ ո ր Ո ր ո ւ ս ո ւ ց ա ն է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա
բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է ն ա ց ւ ո ս ւ ո ր ո ւ ս ո ւ ց ա ն է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ
ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է ն ա ց ւ ո ս ւ ո ւ ս ո ւ ց ա ն է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե
կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է ն ա ց ւ ո ս ւ ս ո ւ ց ա ն է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ
ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է ն ա ց ւ ո ս ո ւ ց ա ն է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա
ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է ն ա ց ւ ո ւ ց ա ն է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ
ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է ն ա ց ւ ց ա ն է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն
է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է ն ա ց ա ն է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է
զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է ն ա ն է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ
թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է ն է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ թ
շ թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ է զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ թ շ
ն շ թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո զ ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ թ շ ն
ա ն շ թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր ո ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ թ շ ն ա
մ ա ն շ թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ր դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ թ շ ն ա մ
ի մ ա ն շ թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի դ ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ թ շ ն ա մ ի
ս ի մ ա ն շ թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ի ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ թ շ ն ա մ ի ս
ի ս ի մ ա ն շ թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ թ շ ն ա մ ի ս ի
ւ ի ս ի մ ա ն շ թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ թ շ ն ա մ ի ս ի ւ
ր ւ ի ս ի մ ա ն շ թ զ է ն ռ ա կ ե բ ա ձ ն ա խ ա ն ձ ա բ ե կ ա ռ ն է զ թ շ ն ա մ ի ս ի ւ ր

# ՑՈՒՑԱԿ·

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ·

Տարեկան Բանակէտ վասն ամի անցելոյն 1829 ... ... 2
Աղիւսակ Ծննդեան և լրման Լուսնի յամի Տն 1829 ... 3
Խաւարմունք արեգական և լուսնի ... ... ... ... 4
Տօնացոյց Վասն ամի 1829 ... ... ... ... ... 17
Յայտնութիւնք հանդիսից աւուրց անշարժականաց · և ցուցակ
տօնից Նոր տարւոյս շարժականաց ... ... ... 31
Անուանք Եկեղեցականաց · վարժարանաց և Դպրոց Եկեղեցւոյ և
Զինուորաց ուրէ Եկեղեցեաց հայոց ... ... ... 32

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ·

Թուականն Նիկողայոսի կայսեր ... ... ... ... 34
Յայտարարութիւն ... ... ... ... ... ... 35
Կառավարութիւն Սրբոյ Էջմիածնի ... ... ... 37
Հրաման յաղագս զօրաց կովկասեան գնդին · ... ... 40
Թուղթ առ Պարոն Պ · Որդանեան ... ... ... 52
Թարգմանութիւն 'ի Պարոն Պօղոսէ Մելիքասեան՝ որ 'ի
Սենեկաւոր ... ... ... ... ... ... ... 54
Օրինակ Թղթոյ գրեցելոյ 'ի հասարակութենէն Հայոց Մար-
դասա առ Սրբազան Ներսէս առաջնորդն Հայոց Եկեղեցեաց
'ի Վիրս ։ ... ... ... ... ... ... ... 58
Տալ 'ի վերայ ընծայելոյ և Օգոստափառ կայսեր հաճոյքն
Ռուսաց Նիկողայոսի Պաւլովչէ՝ յօրհնեալ Սրբազան Տն
Յովհաննու Մանուկեան Աստուածայնոյ Առաք Քահա-
նայի ։ ... ... ... ... ... ... ... 64

Մարդասիրական Ճեմարան հաստատեալ ՚ի հասարակութենէ հայոց ի 2 Ապրիլի 1821. --- --- --- --- 66
Յամի Տեառն 1828 Ջանէր 1 էն մինչ Դեկտեմբեր 31 Մարդասիրական Ճեմարանի Ել և Մուտից համառօտ Ծանօթութիւն --- --- --- --- --- --- --- 69
Յառաջարկութիւն վասն հաստատելոյ դպրատան մի հնչեցեալ՝ Արարատեան Դպրատան --- --- --- --- --- 71
Պարփակութիւն Արարատեան Դպրատանին --- --- 72
Տպարան հաստատեալ ՚ի Մարդասիրական Ճեմարանի ՚ի 1 Յունվարի, 1823: --- --- --- --- ---
Ցուցակ գործոց մինչ ցարդ ՚ի լոյս ընծայելոց բառ հարկի տպարանին --- --- --- --- --- --- 73
Ժողով ՚ի տան Պարոն Պօղոսի Որդւանեան: --- --- 75

[illegible] իմ՝ չսառն՝ այս [illegible] վերջացաւ,
[illegible]այց տակաւին սրտիւ [illegible] անվերջ կաւ.
Թէպէտ միտք քոյ՝ այսպէս փորձովք քաջացաւ,
[illegible] կեանք [illegible] անցեալ՝ ի մեզ՝ կարծեցաւ։
Որպէս ծաղկին՝ [illegible] սիրուն՝ մանկութեան
՚Ի գ[illegible] [illegible] և յիմաստից [illegible].
Այսպէս մարդս՝ ՚ի գաւառի՝ գօգ[illegible] մի,
Պարտի հարկաւ՝ զանձն [illegible] զոր ունի։

Ո՜հ, փոյթ [illegible] [illegible]րկածս կենաց՝ խոր ծովուն,
Երբ [illegible] ընդդեմ ալեաց՝ չէր [illegible].
[illegible] էր միտք քոյ՝ գիտեալ զտան՝ [illegible]կրութիւն,
[illegible] կրել զկոհակաց՝ [illegible]։
Դիպան յաղթող՝ քեզ Ակ[illegible] [illegible].
Բայց աջ Նորին զքեզ փրկեաց [illegible].
Յոյս հրաւիրեաց՝ քեզ զհանգիստ յա[illegible],
[illegible] եւ [illegible] զուա[illegible] Պանդուխտ [illegible]։

Կամիս հաշտել՝ զփոխ[illegible] [illegible],
Հաշտեան աւրեմն՝ զանձն [illegible] ծովէ,
Եւ էր հեծեալ՝ վաճ պատիր եր[illegible],
Օհ [illegible] երկր՝ են [illegible] [illegible]։
[illegible] [illegible] [illegible]։
՚Ի Նիւ[illegible] ‡ քեզ [illegible] [illegible].
Բայց լրջացար՝ յօշա[illegible] [illegible],
Զոր [illegible] [illegible].

[illegible] ՚ի չ[illegible] [illegible],
[illegible] զանցեալ [illegible] քոյ [illegible].
՚Ի [illegible] քոյ [illegible] [illegible]
[illegible] անյաւշութեան [illegible]։
Յեղ[illegible] թեքեան [illegible] [illegible],
՚Ի կենաց[illegible] ալեաց [illegible] քեզ [illegible].
Մի սիրեր զ՚կեանս՝ և մի [illegible] [illegible],
[illegible] թող ՚ի կամս՝ Տ[illegible] քոյ՝ զամենայն։

---

‡ [illegible] է [illegible] [illegible]։